ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

СОЦИОЛОГИЯ, ЭКОНОМИКА

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

SOCIOLOGY, ECONOMICS

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 1 (19)

ԵՐԵՎԱՆ - 2016

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ. СОЦИОЛОГИЯ, ЭКОНОМИКА»
«BANBER YEREVANI HAMALSARANI. SOCIOLOGY, ECONOMICS»

Գլխավոր խմբագիր՝ **Միրզոյան Հ. Ղ.**
Խմբագրական խորհուրդ.
Աթանեսյան Ա. Վ., Առաքելյան Ա. Հ., Ասիկյան Ս. Ն., Ավետիսյան Լ. Վ. *(գլխ. խմբագրի տեղակալ),* **Գալստյան Գ. Ս., Գոնչար Ն. Ա.** *(գլխ. խմբագրի տեղակալ),* **Թիլման Ա.** (Գերմանիա), **Խաչատրյան Ա. Կ.** *(պատասխ. խմբագիր),* **Հովակիմյան Ա. Է.** *(պատասխ. քարտուղար),* **Ղանթարջյան Ս. Լ., Մանասյան Հ. Գ., Մկրտիչյան Ա. Ե., Չորբաջյան Լ.** *(ԱՄՆ),* **Սահակյան Ա. Կ., Սիմոնյան Ա. Հ.**

Главный редактор: **Мирзоян Г. К.**
Редакционная коллегия:
Аветисян Л. В. *(зам. главного редактора),* **Аракелян А. Г., Асикян С. Н., Атанесян А. В., Галстян Г. С., Гончар Н. А.** *(зам. главного редактора),* **Кантарджян С. Л., Манасян Э. Г., Мкртичян А. Е., Овакимян А. Э**. *(ответ. секретарь),* **Саакян А. К., Симонян А. Г., Тилман А.** *(Германия),* **Хачатрян А. К.** *(ответ. редактор),* **Чорбаджян Л.** *(США)*

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**
Editorial Board:
Arakelyan A. H., Asikyan S. N., Atanesyan A. V., Avetisyan L. V. *(Deputy editor-in-chief)***, Chorbajyan L.** (USA), **Galstyan G. S., Khantarjyan S. L., Gonchar N. A.** *(Deputy editor-in-chief),* **Hovakimyan A. E.** *(Executive Secretary),* **Khachatryan A. K.** *(Managing Editor),* **Manasyan H. G., Mkrtichyan A. E., Sahakyan A. K., Simonyan A. H., Tilman A.** *(Germany)*

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԱՐԻՆԵ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ

Մասնագիտական գրականության մեջ «սոցիալական պաշտպանվածություն» եզրույթը տարբեր կերպ է մեկնաբանվում: Օրինակ՝ ըստ Վ. Լեբեդևի՝ սոցիալական պաշտպանվածությունը «…բարդ երևույթ է, այն յուրաքանչյուր զարգացած պետության գործառման անհրաժեշտ տարր է, հասարակության կայունությունը ապահովող միջոց, անընդհատ վերարտադրվող հասարակական ենթահամակարգ»[1]: Հարկ է նշել, որ սոցիալական պաշտպանության հիմնախնդրի ուսումնասիրությամբ զբաղվող որոշ հետազոտողներ չեն անդրադառնում սոցիալական պաշտպանվածությանը, իսկ նրանք, ովքեր կարևորում են դա, տարբեր կերպ են մեկնաբանում վերջինիս բովանդակությունը: Մի շարք դեպքերում «սոցիալական պաշտպանություն» և «սոցիալական պաշտպանվածություն» եզրույթները նույնանում են բովանդակային տեսանկյունից:

Այսպիսով, գիտական գրականության մեջ հանդիպող այս եզրույթի տարբեր սահմանումները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի. մի դեպքում սոցիալական պաշտպանվածությունը մեկնաբանվում է որպես օրենսդրորեն ամրագրված իրավունքների, ազատությունների, երաշխիքների ամբողջություն, որն ուղղված է հասարակության յուրաքանչյուր անդամի համար որոշակի կենսամակարդակի ապահովմանը: Երկրորդ մոտեցման դեպքում սոցիալական պաշտպանվածությունը մեկնաբանվում է որպես անձի որոշակի վիճակ, վերջինիս պահանջմունքների բավարարման, նորմալ գործառման համար անհրաժեշտ պայմանների առկայություն: Գիտական գրականության մեջ կարելի է հանդիպել այնպիսի տեսակետի, համաձայն որի՝ սոցիալական պաշտպանվածությունը սոցիալական պաշտպանության համակարգի գործառման արդյունավետությունը որոշող կարևոր ցուցիչ է: Դժվար է չհամաձայնվել այս կարծիքին, քանի որ իրականում «…որքան բարձր է բնակչության սոցիալական պաշտպան-

[1] **Лебедев В. А.** Феномен социальной защиты человека: философский анализ. М., 2000, с. 18.

վածության մակարդակը, այնքան ավելի արդյունավետ է իրականացվող սոցիալական պաշտպանությունը»[2]:

Սոցիալական պաշտպանվածությունը մեկնաբանող վերոհիշյալ մոտեցումները չեն հակասում միմյանց, այլ շեշտադրում են սոցիալական պաշտպանվածության այս կամ այն կողմը: Մեր կարծիքով, սոցիալական պաշտպանվածության բովանդակությունը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել վերջինիս տարբեր դրսևորումները: Եթե սոցիալական պաշտպանվածությունը մեկնաբանում ենք որպես որոշակի միջոցառումների ամբողջություն, որն ուղղված է հասարակության բոլոր անդամներին որոշակի անհրաժեշտ (պարտադիր) սոցիալական բարիքներով և ծառայություններով ապահովելուն, ապա սոցիալական պաշտպանվածության ներքո նկատի ունենք քաղաքացիների՝ օրենսդրորեն երաշխավորված սոցիալական որոշակի նվազագույն բարիքներից օգտվելու հավասար հասանելիության աստիճանը:

«Սոցիալական պաշտպանվածությունը» բազմակողմ եզրույթ է: Իրավագիտական գրականության մեջ անձի սոցիալական պաշտպանվածության ներքո ենթադրվում է մարդու իրավունքների պաշտպանությանը ուղղված իրավական, քաղաքական, տնտեսական, կազմակերպական բնույթի միջոցառումների ամբողջություն: Տնտեսագիտական աշխատություններում այս եզրույթի բովանդակությունը սահմանելիս կարևորվում է վերջինիս փոխկապվածությունը սոցիալական պաշտպանությանը[3]: Սոցիոլոգիական հետազոտություններում կարևորվում է սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների համատեղ կիրառումը: Եթե օբյեկտիվ ցուցանիշները ենթադրում են կենսական կարևոր պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ իրական պայմանների առկայություն, ապա սուբյեկտիվ ցուցանիշների ներքո նկատի ունեն այն, թե ինչպես են ընկալվում և գնահատվում այդ իրական պայմանները անձի կողմից: Բնականաբար, օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշները հաճախ չեն համընկնում. երբեմն կարող են համընկնել, իսկ երբեմն էլ կարող են հակասական բովանդակություն ունենալ: Այդուհանդերձ սուբյեկտիվ գնահատականները ունեն որոշակի սոցիալ-հոգեբանական հիմնավորում:

Սուբյեկտիվ գնահատականը հիմնվում է այն մոտեցման վրա, որ մարդկանց կարծիքը իրենց սոցիալ-տնտեսական վիճակի մասին պետք է դիտվի որպես որոշիչ հանգամանք, քանի որ մարդը իր սոցիալական միջավայրի փորձագետն է[4]: Սուբյեկտիվ գնահատականը անձի ինքնագիտակցության բաղադրիչն է, որը կապված է անձի ապրումնե-

---

[2] **Шеденков С. А**. Социальная защита и условия местного самоуправления. Белгород, 1995, с. 28.

[3] Տե՛ս **Азрилиян А., Калашникова Е., Азрилиян О.** Экономический словарь. М., 2013:

[4] Տե՛ս «Социальная работа: теория и практика». Под ред. Л. А. Арутюнян. Ер., 1995, էջ 67:

րի, վերջինիս կողմից սեփական ֆիզիկական ուժի, մտավոր ունակությունների, վարքի դրդապատճառների ու նպատակների, շրջապատող մարդկանց նկատմամբ վերաբերմունքի գնահատականի հետ:

Սակայն որքան էլ սուբյեկտիվ գնահատականները կարևորվեն բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը որոշելիս, այնուամենայնիվ դրանց կիրառումը անխուսափելիորեն պայմանավորված է մի շարք դժվարություններով: Ի՞նչ նկատի ունեն հարցվողները իրենց սոցիալական պաշտպանվածությունը գնահատելիս, ի՞նչ գործոնների հիման վրա են նրանք իրենց նույնականացնում այս կամ այն սոցիալական խմբին: Պարզ է, որ յուրաքանչյուր սոցիալական խումբ սոցիալական պաշտպանվածության մասին ունի իր ուրույն պատկերացումները[5]:

Բնակչության սոցիալական պաշտպանվածության ուսումնասիրմանն են նվիրված հետխորհրդային շրջանի ռուս մի շարք գիտնականների աշխատանքները: Այսպես, անձի հոգեբանական պաշտպանվածության գործոնները, հոգեբանական անվտանգության հիմնահարցերը քննարկվում են Ա. Վ. Կոտենևայի[6], Գ. Վ. Գրաչևի[7] աշխատանքներում: Ե. Ն. Ռուսկինան առանձնացնում է անձի հոգեկան առողջությանը զգալիորեն վնասող հոգեբանական վտանգների աղբյուրները[8]: Լ. Ս. Գուտկինը բնակչության սոցիալական պաշպանվածության մակարդակը գնահատելիս հիմնվում է ամսական միջին եկամուտներին, կենսաթոշակների չափերին, գործազրկության մակարդակին վերաբերող վիճակագրական տվյալների վրա[9]: Օ. Ա. Պոլյուշկևիչը առանձնացնում է բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշներ: Որպես օբյեկտիվ ցուցանիշներ վերջինս նշում է պաշտպանվածությունը հանցագործություններից, տնտեսական կայունությունը, կյանքի որակը, սոցիալական երաշխիքները, իսկ որպես սուբյեկտիվ ցուցանիշներ՝ որքանով է անձն իրեն անվտանգ զգում տանը, քաղաքում, երկրում, ինչպես նաև ընտանիքի անդամների, հարևանների, ղեկավարության, քաղաքական գործիչների նկատմամբ վստահության մակարդակը[10]: Ն. Ի. Լապինի և Լ. Ա. Բել-

---

[5] Տե՛ս **Градосельская Г.** Субъективные и объективные оценки благосостояния // "Социологический журнал", 2003, № 3:

[6] Տե՛ս **Котенева А. В.** Духовные ценности как фактор психологической защищенности личности // "Вестник КГУ им. Н.А. Некрасова", 2008, № 4, էջ 38–44:

[7] Տե՛ս **Грачев Г. В.** Информационно-психологическая безопасность личности: состояние и возможности психологической защиты. М., 2008:

[8] Տե՛ս **Руськина Е. Н**. Психологическая безопасность личности: теория и технология формирования // "Российский научный журнал", 2011, № 23, էջ 230–235:

[9] Տե՛ս **Гуткин Л. С.** Человечество на рубеже веков: показатели социально-экономического развития стран мира. М., 2003:

[10] Տե՛ս **Полюшкевич О. А.** Представление о социальной защищенности жителей России и Португалии // "Социс", 2012, № 12, էջ 66–71:

յանայի կողմից մշակվել է բնակչության սոցիալական ինքնազգացողության գնահատման ինդեքս, որը սոցիալական պաշտպանվածության, կյանքից բավարարվածության, սոցիալական լավատեսության ինդեքսների թվաբանական միջինն է[11]:

1990-ականներից սկսած՝ աշխարհի տարբեր երկրների բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը գնահատելիս կիրառվում է ՄԱԿ-ի մշակած «Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսը, որը, ըստ էության, օբյեկտիվ ցուցանիշ է:

Հաշվի առնելով բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակչության սոցիալական պաշտպանվածության ուսումնասիրման ոչ բավարար մակարդակը՝ նպատակահարմար է վերլուծել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ ցուցանիշները՝ Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի առավել ամբողջական պատկերը ստանալու համար:

Հայաստանի «Մարդկային զարգացման ներուժի» ինդեքսների 1995-2013 թթ. դինամիկայի վերլուծությունը վկայում է այն մասին, որ նշված ժամանակահատվածում Հայաստանը դասվել է զարգացման «բարձր մակարդակ» ունեցող երկրների թվին՝ զբաղեցնելով 87-ից մինչև 83-րդ տեղերը[12]: Հայաստանի «Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսի հիմքում ընկած ցուցանիշների դինամիկան ցույց է տալիս, որ 1995-2011 թթ. այս ինդեքսը աճել է 20,3 %-ով կամ յուրաքանչյուր տարի միջին հաշվով 2,3 %-ով՝ 0,595-ից հասնելով 0,716-ի, ընդ որում՝ կյանքի միջին տևողությունը ավելացել է շուրջ 5,4 տարով, ուսման միջին տարիներն ու սպասվող տարիներն ավելացել են համապատասխանաբար՝ 0,4 և 2,1 տարիներով, իսկ մեկ շնչի հաշվով եկամուտը՝ 207 %-ով:

«Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսի վերլուծությունը, սակայն, հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի մասին: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է վերլուծել այլ օբյեկտիվ ցուցանիշներ ևս: Օրինակ՝ *աշխատավարձը, մասնավորապես նվազագույն և միջին աշխատավարձերը:*

---

[11] Տե՛ս **Лапин Н. И., Беляева Л. А.** Программа и типовой инструментарий «Социокультурный портрет региона России» (Модификация – 2010). М., 2010, էջ 111:

[12] Տե՛ս «Human Development Report 2014», http://hdr.undp.org/sites/default/files/hdr14-report-en-1.pdf, 07.10.2015թ., ժամը՝ 12:28:

Աղյուսակ 1

Նվազագույն և միջին աշխատավարձերի աճի տեմպերը 2001-2015 թթ.[13]

Տարի	Նվազագույն աշխատավարձ	Նվազագույն աշխատավարձի աճի տեմպը	Միջին աշխատավարձ	Միջին աշխատավարձի աճի տեմպը
2001	5000	-	24.483	
2002	5000	-	27.324	11,6%
2003	5000	-	29.089	6,5%
2004	13000	160%	43.445	49,4%
2005	15000	0%	52.060	19,8%
2006	15000	15,3%	62.293	19,6%
2007	20000	33,3%	75.132	20,6%
2008	25000	25%	91.539	40,5%
2009	30000	20%	101.895	11,3%
2010	30000	0%	108.852	6,8%
2011	32500	7,7%	115.265	5,9%
2012	32500	0%	121374	5,3%
2013	35000 հունվարի 1-ից	7,7%		
2013	45000 հուլիսի 1-ից	28,6%	158.239	30,4%
2014	50000 հուլիսի 1-ից	11,1%	159.417 (մինչև հուլիսի 1-ը)	0,7%
2015	550000 հուլիսի 1-ից	10%	182.080 (մինչև հունիսի 1-ը)	

Աղյուսակ 1-ից պարզ երևում է, որ ՀՀ-ում 1999 թվականին սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը[14] չի փոփոխվել մինչև 2003 թվականը ներառյալ՝ կազմելով ընդամենը 5000 ՀՀ դրամ: Այնուհետև 2004 թվականին այն կտրուկ աճել է 160 %-ով: 2004-2015 թթ. արձանագրվել են նվազագույն աշխատավարձի ինչպես աճի, այնպես էլ նվազման միտումներ:

Բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը բնութագրող մեկ այլ օբյեկտիվ ցուցանիշ է կենսաթոշակի միջին ամսական չափը: Աղյուսակներ 2-ում և 3-ում ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ ընդհանուր առմամբ նշված ժամանակահատվածում կենսաթոշակները ևս աճել են:

Աղյուսակ 2

Միջին ամսական կենսաթոշակի աճի տեմպերը 1991-2000 թթ.[15]

Ցուցանիշ	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000
Միջին ամսական կենսաթոշակը (ռուբլի/դրամ)	167	1497	9024	1509	2584	3114	3673	3793	4921	4481

[13] Տե՛ս «Աշխատավարձի ոլորտի վիճակագրություն», http://www.mlsa.am/home/ index.php?menu_id=110&child_id=131&code_id=212,07.10.2015թ., ժամը՝ 14:30:

[14] 1999-2000 թթ. նվազագույն ամսական աշխատավարձը կազմել է 5000 ՀՀ դրամ:

[15] Տե՛ս «Հայաստան, ՄԱԿ-ի Մարդկային զարգացման զեկույց», Եր., 2001, էջ 93:

Աղյուսակ 3

Միջին ամսական կենսաթոշակի աճի տեմպերը 2001-2010 թթ.[16]

Ցուցանիշ	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Միջին ամսական կենսաթոշակը (դրամ)	4473	5748	7452	8842	9805	10912	12746	21370	24520	27107

Բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող կարևոր օբյեկտիվ ցուցանիշ է նաև նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը: Այսպես, 2005 թ.-ին վերջինս կազմել է ***16280,8 դրամ***[17], իսկ 2014 թ. երկրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ ***59127,7 դրամ***[18]**:** Փաստորեն, այն աճել է: Այստեղ կարևոր է նշել, որ նվազագույն ամսական աշխատավարձի հաշվարկի հիմքում անպայման պետք է դրվի նվազագույն սպառողական զամբյուղը, որպեսզի նվազագույն աշխատավարձով աշխատողները կարողանան հոգալ իրենց առաջնային կարիքները: Վիճակագրական տվյալները փաստում են, որ ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի հաշվարկման հիմքում դրված չէ նվազագույն սպառողական զամբյուղը, ինչը հակասում է «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետին[19]:

Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող սուբյեկտիվ ցուցանիշներին: Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ-ում իրականացվել են մի շարք հետազոտություններ, որոնց շրջանակներում ուսումնասիրվել են նաև ՀՀ բնակչության բարեկեցության, սոցիալական պաշտպանվածության սուբյեկտիվ ընկալումները:

2006 թ. «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը» Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում իրականացրել է տնային տնտեսությունների համեմատական հետազոտություն, որի շրջանակներում ուսումնասիրվել է սուբյեկտիվ բարեկեցությունը, ասել է թե՝ սեփական բարեկեցության վերաբերյալ մարդկանց ընկալումները: Հայաստանից 2065, իսկ Ադրբեջանից և Վրաստանից՝ 2400 հարցվող է

[16] Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005», էջ 84: «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2007», էջ 82: «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008», էջ 83: «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009», էջ 83: «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014», էջ 95:

[17] Տե՛ս http://armenpress.am/arm/news/420559/2005t-i-chorrord-eramsyakum-sparoxakan-zambyuxi-amsakan.html, 14.10,2015թ., ժամը՝ 11:13:

[18] Տե՛ս http://armstat.am/file/article/sv_06_14a_6200.pdf, 14.10.2014թ., ժամը՝ 12:43:

[19] Տե՛ս «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը, հոդված 7, կետ 1:

մասնակցել[20]: Հարցվողների մեծ մասը (մոտավորապես 48 %-ը) իր բարեկեցության աստիճանը գնահատել է միջին: Դրա հետ մեկտեղ՝ հարցվողների մի մեծ խումբ էլ (մոտավորապես 32 %-ը) իրեն համարել է աղքատ, իսկ մոտավորապես 15 %-ը՝ շատ աղքատ: Ի հակադրություն սրան՝ հարցվողների շատ փոքր խումբ (4 %-ը) սեփական բարեկեցությունը գնահատել է լավ, իսկ 1 %-ից ցածրը՝ շատ լավ[21]:

Նշված հետազոտության շրջանակներում Հայաստանին վերաբերող տվյալները[22] բաշխվել են հետևյալ կերպ՝ հարցվողների 53.03 %-ը սեփական բարեկեցության աստիճանը գնահատել է միջին, 6,54 %-ը՝ լավ, 1,02 %-ը՝ շատ լավ: Հարցվողների 25,81 %-ը իրեն համարել է աղքատ, իսկ 13,61 %-ը՝ շատ աղքատ:

2011 թվականին Երևանում իրականացվել է բնակչության սոցիալական բարեկեցության մակարդակի չափման սոցիոլոգիական հետազոտություն, որի շրջանակներում կիրառվել է սուբյեկտիվ գնահատման հնգաստիճան սանդղակ[23]: Ըստ այդ հետազոտության արդյունքների՝ հարցվածների 62,9 %-ը իրեն համարում է միջին խավի ներկայացուցիչ, միջին խավից բարձր, բայց ոչ հարուստ՝ 4,5 %-ը, միջին խավից ցածր, բայց ոչ աղքատ՝ 15,3 %-ը, հարուստ՝ 1,1 %-ը, աղքատ՝ 15,8 %-ը[24]:

2012 թվականի դեկտեմբերի 12-27-ը «IPSC» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտը իրականացրել է «Կյանքի որակի ինդեքսը 2012 թ.-ին» սոցիոլոգիական հետազոտություն, որի ընտրանքի ծավալը կազմել է 1997 մարդ: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են նաև ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանվածության ընկալումները, մասնավորապես՝ ուսումնասիրվել են սոցիալական վտանգները/ռիսկերը ինչպես Հայաստանի ամբողջ բնակչության, այնպես էլ առանձին սոցիալ-ժողովրդագրական խմբերում:

Նշված հետազոտությունում վերլուծվել են 13 սոցիալական վտանգների գործոններ, և պարզվել է, որ Հայաստանի բնակչության հասարակական գիտակցությունում առկա են սոցիալական վտանգների ընկալման երեք կոգնիտիվ համալիրներ[25]:

✓ Սոցիալական բռնությունների գործոն, որի բաղադրիչներն են հետևյալ դիրքորոշումները՝

---

[20] Տե՛ս **Habibov N., Afandi E.,** Analysis of subjective wellbeing in low-income transitional countries: evidence from comparative national surveys in Armenia, Azerbaijan and Georgia, «Journal of Copmarative Social Welfare», Vol. 25, № 3, October 2009, էջ 207:

[21] Տե՛ս նույն տեղը, էջ 207-208:

[22] Տե՛ս նույն տեղը, էջ 207:

[23] Տե՛ս **Յու. Մելքումյան,** Բնակչության բարեկեցության մակարդակի սուբյեկտիվ գնահատականների կառուցման մեխանիզմները // «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2011, հ. 1-2 (630), էջ 200:

[24] Տե՛ս նույն տեղը, էջ 200-201:

[25] Տե՛ս https://newipsc.files.wordpress.com/2015/01/5-quality-of-life-index-december-2012-2013.pdf, 14.10.2015թ., ժամը՝ 14:38:

○ *անձը դատարանում կարող է հանդիպել անարդար վերաբերմունքի (39,3 %),*

○ *ոստիկանության անարդարացի ճնշումների (40,3 %),*

○ *պետությունը կարող է խլել կամ զավթել անձի սեփականությունը (32,2 %),*

○ *որևէ հզոր անձ կարող է խլել կամ զավթել անձի սեփականությունը (25,5 %),*

○ *կաշառք կպահանջեն անձից իրավունքի պաշտպանության դիմաց (41,7 %),*

○ *կարող են լինել հասարակական անկարգություններ և բռնություններ (53.7 %):*

✓ Կենցաղային բռնությունների գործոն, որի բաղադրիչներն են ներքոնշյալ դիրքորոշումները՝

○ *անձը ցերեկը փողոցում կարող է ենթարկվել բռնության կամ հանդիպել այլ տհաճ միջադեպի (38,1 %),*

○ *անձը գիշերը փողոցում կարող է ենթարկվել բռնության կամ հանդիպել այլ տհաճ միջադեպի (29,9 %),*

○ *կարող են անձից ինչ-որ բան գողանալ (45,5 %):*

✓ Սոցիալական անապահովության գործոն, որի բաղադրիչներն են հետևյալ դիրքորոշումները՝

○ *հիվանդանալու դեպքում անձը չի կարողանա ստանալ անհրաժեշտ բուժում (61.2 %),*

○ *անձը կարող է մնալ առանց ապրուստի միջոցների՝ աշխատավարձի, թոշակի, դրամական խնայողությունների (46,2 %):*

Հատկանշական է այն հանգամանքը, որ սույն հետազոտության արդյունքների համաձայն՝ սոցիալական բռնությունների և սոցիալական անարդարությունների հանդիպելու հավանականությունը համեմատաբար առավել բարձր են գնահատել ցածր բարեկեցությամբ մարդիկ, մինչդեռ կենցաղային բռնությունների հանդիպելու հավանականությունը ավելի բարձր են գնահատել բարեկեցության բարձր մակարդակ ունեցողները[26]: Միևնույն ժամանակ, ֆիզիկական պաշտպանվածության հետ կոռելյացիան դրական է, թեև մարդիկ աղքատությունը համարում են հիմնական ռիսկ, բայց բավարարված են երկրում առկա ֆիզիկական անվտանգության մակարդակով:

Ամփոփելով հետազոտությունների արդյունքների, ինչպես նաև վիճակագրական տվյալների վերլուծությունը, կարող ենք հանգել հետևյալ եզրակացությանը. սոցիալական անպաշտպանվածության հիմնախնդիրը ամբողջությամբ հաղթահարված չէ ՀՀ-ում, թեպետ իրականացվում են որոշակի միջոցառումներ (սոցիալ-տնտեսական, ի-

[26] Տե՛ս https://newipsc.files.wordpress.com/2015/01/5-quality-of-life-index-december-2012-2013.pdf, 14.10.2015 թ., ժամը՝ 15:52:

բավական, քաղաքական), որոնք որոշակիորեն նպաստում են հասարակությունում սոցիալական լարվածության թուլացմանը:

Հայաստանում սոցիալական անպաշտպանվածության հիմնախնդրի հաղթահարման տեսանկյունից կարևոր է բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծումը, սոցիալական պաշտպանության համակարգի գործառման արդյունավետության բարձրացումը, կոռուպցիայի և հանցագործության դեմ արդյունավետ պայքարը, սոցիալ-տնտեսական կայունության ապահովումը:

Բանալի բառեր – *սոցիալական պաշտպանություն, սոցիալական պաշտպանվածության օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշներ, սուբյեկտիվ բարեկեցություն*

МАРИНЕ ЯРМАЛОЯН – *Социальная защищённость населения постсоветской Армении.* – В силу динамичности социально-экономического развития, преобразований и вызовов модернизации нельзя окончательно решить проблему социальной незащищённости. Вместе с тем статистические данные и социологические исследования показывают, что позитивные тенденции реальны, а эффективные меры социальной защиты (экономические, правовые, политические) способны ослабить в обществе социальную напряжённость. Социальная защищённость граждан заключается не только в обеспечении их политических и социально-экономических прав, но и в психологии. Необходимо нейтрализовать факторы, снижающие уровень и качество жизни, создавать достойно оплачиваемые рабочие места, улучшать социальную помощь, эффективно бороться с коррупцией и преступностью, укреплять экономическую стабильность.

Ключевые слова: *социальная защита, объективные и субъективные показатели социальной защищённости, субъективное благополучие*

MARINE YARMALOYAN – *Social Protection of the Population of Post-Soviet Armenia.* – Due to the dynamism of social and economic development, occurring changes and challenges of modernization it is impossible to definitively solve the problem of social insecurity. However, the statistical data and the results of sociological studies show that positive trends are achievable and effective measures of social protection (social, economic, legal, and political) promote to reduce social tension in society. The essence of social protection is not only to ensure the political, social and economic rights of citizens but also in the psychological component of personality. It is necessary to neutralize the sources of insecurity, which have a downward effect on the level and quality of life, namely to create high-paying jobs; improve the social security and social assistance, to effectively fight against corruption and crime, to improve social and economic stability.

Key words: *social protection, objective and subjective indicators of social protection, subjective wellbeing*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սոցիալական աշխատանքը որպես մասնագիտություն հայաստանյան իրականություն մուտք գործեց 20-րդ դարի վերջին[1]: Այն ոչ միայն համալրեց հասարակության պրոֆեսիոնալ կառուցվածքը, այլև արմատական փոփոխություններ կատարեց սոցիալական հարաբերություններում՝ դրանց հաղորդելով նոր բովանդակություն ու որակ:

Սոցիալական աշխատանքը որպես մասնագիտություն ձևավորվել է արևմտյան մշակութային միջավայրում՝ ի պատասխան շուկայական հարաբերությունների ծնած սոցիալական մարտահրավերների: Շուկայական տնտեսությունն աղքատացնում է սոցիալական հարաբերությունների բովանդակությունը, դրանք դարձնում անդեմ: Աստիճանաբար խարխլվում են ավանդական այնպիսի սոցիալական ինստիտուտներ, ինչպիսիք են ընտանիքը և կրոնը, դրանց կողքին ձևավորվում ու զարգանում են ձևական (ֆորմալ) բազմաթիվ ինստիտուտներ, կազմակերպություններ ու ընկերություններ: Գերմանացի սոցիոլոգ Ֆ. Թյոնիսի բնորոշմամբ՝ այդ հասարակություններն իրենց համայնքային տիպից անցում են կատարում դեպի նորը[2]: Կապիտալիզմը սրում է մրցակցությունն ապրանքների ու ծառայությունների համար, որի հետևանքով բնակչության նվազ մրցունակ խմբերի կենսական պահանջմունքների բավարարումը դառնում է ռիսկային:

Սոցիալական աշխատանքի ինստիտուտը կոչված է որոշ չափով չեզոքացնելու սոցիալական հարաբերությունների ռացիոնալացման այդ անցանկալի հետևանքները, մարդկանց պաշտպանելու կյանքի դժվարին իրավիճակներում, կանխելու սոցիալական ռիսկերը: Այն սոցիալական ծառայության մատուցումը դարձնում է մասնագիտական գործունեություն: Դրա շնորհիվ զգալիորեն բարելավվում է բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի գործառումը, այն սկսում է ավելի յուրահատուկ սոցիալական ծառայություններ մատուցել բնակչությանը: Երբ սոցիալական աշխատանքի ինստիտուտը սկսեց ներ-

---

[1] Տե՛ս **Ա. Խաչատրյան**, Սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացումը Հայաստանում, «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2012, 132.5, էջ 3:

[2] Տե՛ս **Громов И., Мацкевич А., Семенов В.** Западная социология. СПб., 1997, էջ 82 - 83:

դրվել հետխորհրդային Հայաստանում, սոցիալական հիմնախնդիրների ներկապնակը լիովին համապատասխանում էր նրա գործառութային դաշտին, բայց մշակութային համատեքստը՝ ոչ: Բանն այն էր, որ սոցիալական աշխատանքը՝ որպես մասնագիտություն, պահանջում էր համապատասխան մշակութային միջավայր, որը հնարավոր կդարձներ սոցիալական աշխատողների արդյունավետ միջամտությունը: «Միջամտություն» հասկացությունը այս մասնագիտության տեսական հիմքը ներկայացնող առանցքային եզրույթներից է: Այն հուշում է, որ սոցիալական աշխատողներին վերապահված է շատ կարևոր դեր՝ միջամտել մարդկանց կյանքին, երբ նրանք սոցիալական դժվարությունների են հանդիպում: Այդ միջամտողական առանձնահատկությունը դրսևորվում է հատկապես երեխաների դեպքերում. սոցիալական աշխատողները միջամտելու համար չեն սպասում հատուկ հրավերի կամ թույլտվության, այլ ուղղակի ներխուժում են, երբ երեխայի կյանքը վտանգված է:

Տարիներ առաջ, երբ սոցիալական աշխատանքն իր առաջին քայլերն էր անում Հայաստանում, ոմանք, նկատի ունենալով հայ ընտանիքի առանձնահատկությունները, կասկածում էին հաջողությանը[3]: Անհավանական էր թվում, որ այդ ընտանիքը և ընդհանրապես սոցիալական բոլոր ինստիտուտները կհանդուրժեն սոցիալական աշխատողի միջամտությունը: Սոցիալական աշխատանքը վաղուց ներդրած հասարակությունների համեմատ այն ժամանակվա հայաստանյան հասարակությունը կարելի է բնութագրել որպես պահպանողական, քանի որ այստեղ դեռևս բավականին մեծ էր ավանդական ինստիտուտների դերը, մարդիկ հիմնականում շարունակում էին հավատարիմ մնալ հին հասարակության նորմերին ու արժեքներին: Դա փոխակերպվող հասարակություն էր, որը դեռ բավականին երկար գտնվելու էր անցման փուլում: Ու հենց այդ շրջանում ներմուծվեց սոցիալական աշխատանքը, որն իր նորմերով ու արժեքներով գալու էր հեղաշրջում կատարելու Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգում: Նրա միջոցով արևմտյան մշակութային արժեքները հայկական մշակութային միջավայր տեղափոխվելու հնարավորություն էին ստանում: Որպեսզի մշակութային կոնֆլիկտն այդ ընթացքում ինչ-որ չափով կանխվեր, ոմանք առաջարկում էին Հայաստանում զարգացնել սոցիալական աշխատանքի յուրահատուկ մոդել, որը կհամապատասխաներ տեղական առանձնահատկություններին[4]: Արևմտյան մշակույթում ձևավորված սոցիալական այդ տեխնոլոգիան հայաստանյան մշակութային միջավայրում հիմնավորապես ներդնելու համար, հարկավոր էր

[3] Տե՛ս **Ա. Խաչատրյան**, Սոցիալական աշխատանքը և ընտանիքի ինստիտուտը Հայաստանում, «Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2014, № 3, էջ 6:

[4] Տե՛ս **M. Antonyan**, Science and Art in Social Work: an old question in the modern Armenian context, «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2015, № 1, էջ 69:

ստեղծել համապատասխան մշակութային հենք: Դրա համար անհրաժեշտ էր, որ հասարակությունն ամբողջությամբ և նրա սոցիալական ինստիտուտներն առանձին-առանձին դառնային բաց, պատրաստ ընդունելու միջամտությունները: Բայց հայ հասարակությունը ոչ միայն պատրաստ չէր դրան, այլև իր մշակույթում ձևավորված որոշ տարրեր ընդհանրապես հակադիր էին սոցիալական աշխատանքի նորմերին ու արժեքներին, օրինակ՝ վերաբերմունքը հաշմանդամների և իրավախախտների, աղանդավորների և ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցողների նկատմամբ: Այս տիպի մարդկանց հանդեպ վերաբերմունքը հիմնականում պիտակավորող էր, մերժող ու մեկուսացնող: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության նորմը միայն դեկլարատիվ էր: Իրականում կանանց նկատմամբ վերաբերմունքը խտրական էր, իսկ ընտանեկան բռնությունները՝ շատ սովորական: Երեխաների խնամքի ու դաստիարակության հարցերում նույնպես հայ հասարակությունը շատ պահպանողական էր, իսկ ընտանեկան բռնության երևույթներն այնքան տարածված էին, որ բոլորը դրանք համարում էին նորմալ երևույթ:

«Սոցիալական աշխատանք» մասնագիտության ներդրման հետագա ընթացքը ցույց տվեց, որ նշված և այլ մշակութային առանձնահատկությունները լուրջ խոչընդոտներ են ստեղծում դրա կայացման ճանապարհին: Մասնագիտությունն իր ինստիտուտավորման ուղղությամբ առաջին քայլերն անելուն զուգահեռ՝ ստիպված էր նաև համապատասխան սոցիալական մշակույթ ստեղծել: Հասարակության մեջ այդ պահին նկատվում էր մշակութային ուշացման երևույթը[5], երբ սոցիալական աշխատանքը՝ որպես սոցիալական տեխնոլոգիա, մուտք էր գործել հասարակություն, իսկ վերջինս պատրաստ չէր այն կիրառելու. բացակայում էր համապատասխան սոցիալական մշակույթը: Օրինակ՝ սոցիալական աշխատողների փորձերը՝ պաշտպանել երեխաների իրավունքները, հաճախ դատապարտվում էին անհաջողության համապատասխան սոցիալական նորմերի և օրենքների բացակայության, տարբեր պաշտոնյաների կողմից երեխայի լավագույն շահը ոչ ճիշտ մեկնաբանելու, պաշտպանության անհրաժեշտ ընթացակարգեր չլինելով պատճառով: «Սոցիալական մշակույթ» եզրույթը տարաբնույթ մեկնաբանությունների է ենթարկվում մասնագիտական գրականության մեջ: Երբեմն այն առանձնացվում է որպես հակադրություն նյութականին, երբեմն՝ նույնացվում մշակույթի հետ, ոմանք էլ այդ հասկացությամբ նկատի են ունենում «սոցիալական նորմերի, սոցիալական արժեքների և սոցիալական ինստիտուտների ամբողջությունը»[6]: «Սոցիալական մշակույթ» ասելով մենք հիմնականում նկատի ունենք սոցիա-

[5] Տե՛ս **Н. Смелзер**, Социология. М., 1994, էջ 59:
[6] www.intuit.ru/studies/courses/2296/596/lecture/211186

լական նորմերի ու արժեքների ամբողջությունը, որոնք սոցիալական հարաբերությունների կառուցման հիմք են: Օրինակ՝ սոցիալական մշակույթի դրսևորումներ են ընտանեկան և միջսերնդային փոխհարաբերությունների ոճերը, սեռերի միջև փոխհարաբերությունների մոդելները, ավանդույթները, սովորույթները և այլն: Որևէ խմբի նկատմամբ խտրական վերաբերմունքը, ընտանեկան բռնությունները, բնակչության սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների նկատմամբ վերաբերմունքը սոցիալական մշակույթի նմուշներ են: Բնակչության սոցիալական պաշտպանության միջոցներն ու տեխնոլոգիաները նույնպես սոցիալական մշակույթի տարրեր են: Որպեսզի Հայաստանի հասարակության սոցիալական մշակույթը բարենպաստ դառնար սոցիալական աշխատանքի համար, այդ հասարակությունը պետք է որդեգրեր հանդուրժողականությունը որպես գործելաոճ: Հայ հասարակության նախորդ սոցիալական մշակույթն աչքի էր ընկնում տարբերությունների նկատմամբ իր անհանդուրժողականությամբ: Խորհրդային կառավարման յոթ տասնամյակի ընթացքում, երբ ամեն որոշում կայացվում էր «դեմոկրատական ցենտրալիզմի» սկզբունքով, երբ այլախոհությունն ու այլակարծությունը քարկոծվում էին ու պատժվում, ձևավորվել էին բռնապետական ավանդույթներ սոցիալական բոլոր ինստիտուտներում՝ ընտանիքում, դպրոցում, ԶԼՄ-ներում, կրոնում և այլն: Իսկ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը կառուցված էր հայրիշխանական ոգով. պետությունը բնակչության սոցիալապես խոցելի խմբերի համար սահմանել էր տարորոշված կայուն ծառայություններ: Պետությունը սոցիալական ծառայությունների անհատականացման և դրանք ավելի հասցեական դարձնելու ուղղությամբ ոչինչ չէր անում, որովհետև դրա անհրաժեշտությունը նույնիսկ չէր գիտակցված և կարևորված, իսկ սոցիալական ծառայողներն էլ շարունակում էին կարծրատիպային մոտեցում ցուցաբերել իրենց շահառուներին սպասարկելիս, քանի որ չունեին սոցիալական աշխատանքի գիտելիքներ և հմտություններ: Սոցիալական աշխատանքը սոցիալական ծառայության մատուցումը դարձնում է մասնագիտական գործունեություն: Հասարակության զարգացման ժամանակակից միտումները՝ «ատոմիզացիան» և «մարգինալացումը», «ծնում են ավելի հստակ պահանջմունք զանազան սոցիալական խնդիրների լուծման գծով մասնագիտացված գործունեության նկատմամբ»[7]: Այս առումով հայաստանյան հասարակության սոցիալական մշակույթը նույնպես պետք է փոփոխվի: Հասարակական գիտակցությունը պետք է յուրացնի այն տեսակետը, որ սոցիալական աշխատանքը պարզապես աշխատանք չէ, այլ մասնագիտություն, որը նոր տիպի սոցիալական ծառա-

[7] **Шанин Т.** Социальная работа как культурный феномен современности // "Русский журнал", 26.09.1997.

յություններ է մատուցում: Սոցիալական աշխատանքը քարոզում է հանդուրժողականություն, որն իրական իրավահավասարության հաստատման նախապայման է: Նախորդ հասարակությունը թեև հռչակել էր իրավահավասարություն, բայց ֆիզիկական և հոգեկան տարբեր խնդիրներ ունեցող երեխաներն ուղարկվում էին իրենց համար նախատեսված գիշերօթիկներ ու մանկատներ, ու հետո նրանց կյանքն ընթանում էր շատերի աչքից հեռու՝ «այն պատերի» ետևում: Հանցագործներն ուղարկվում էին բանտ, որտեղից դուրս եկողներից շատերը շուտով նորից վերադառնում էին, հոգեկան խնդիրներ ունեցողներին խցկում էին հոգեբուժական դիսպանսերներ, որպեսզի նրանք ուրիշներին չանհանգստացնեն. ալկոհոլային և թմրանյութերից կախվածություն ունեցողները վերցվում էին հաշվառման և ենթարկվում հարկադրական բուժման, որն այնքան էլ արդյունավետ չէր: Նշված խնդիրների ինստիտուցիոնալ և վարչահրամայական լուծումը տասնամյակներ շարունակ համարվում էր ամենաընդունելին: Հավանաբար պետության համար այդպես ավելի հեշտ էր ու էժան, քանզի միանգամից ազատվում էր ավելորդ բարդություններից, թեև մարդկանց ճակատագրերի մասին էր, և բացի այդ, ինչպես պարզվեց հետագայում, այլընտրանքների կիրառման դեպքում պետության ֆինանսական բեռը բոլորովին էլ չէր ավելանալու: Ուղղակի ձևավորվել էր խնդիրների լուծման այդպիսի մշակույթ, որն անընդհատ վերարտադրվում էր: Սոցիալական աշխատանքն առաջադրում է սոցիալական խնդիրների լուծման նոր մոտեցում: Այն միանշանակ դեմ է մարդկանց ինստիտուտավորմանը՝ նախապատվությունը տալով խնամքի, ուղղման, բուժման ու վերականգնման այնպիսի այլընտրանքների, որոնք մարդուն ոչ միայն չեն կտրում իր բնական միջավայրից, այլև թույլ են տալիս արդյունավետորեն օգտվել այդ միջավայրի ընձեռած հնարավորություններից: Սոցիալական աշխատանքը ո՛չ է ասում գիշերօթիկներում և մանկատներում երեխաների խնամքի կազմակերպմանը, որը նրանց ոչ միայն առանձնացնում է իրենց հասակակիցներից, այլև վերջին հաշվով մեկուսացնում է մեծ հասարակությունից՝ համարյա անհնարին դարձնելով հետագա վերադարձը: Սոցիալական աշխատանքը ողջունում է խնամատար ընտանիքի ծրագիրը, որը վերջին տարիներին ներդրվեց Հայաստանում, և որով փորձ է արվում առանց ընտանեկան խնամքի մնացած երեխաների համար ստեղծել նոր ընտանիք: Սոցիալական աշխատանքն ամեն կերպ պաշտպանում է ներառական կրթության ծրագիրը, որը հայ հասարակության առաջին քայլն է սահմանափակ կարողություններով երեխաներին կյանքի մեծ ճանապարհ հանելու ուղղությամբ: Հասարակությունն ամբողջությամբ պետք է վերանայի իր վերաբերմունքը հաշմանդամության երևույթի և հաշմանդամների նկատմամբ: Դպրոցական ներառմանը պետք է հաջորդի մուտքը մասնագիտական կրթական համակարգ, իսկ հետո՝ աշխատաշուկա և այսպես շարունակ: Սա

դժվար ու երկարատև գործընթաց է, որում միջավայրի ֆիզիկական հարմարեցումը թերևս ամենաառաջին ու ամենադյուրին քայլն է: Ամենադժվարը մարդկանց արժեհամակարգի փոփոխությունն է, որն իր հերթին կբերի երևույթի նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն:

Սոցիալական աշխատանքի նորմերն ու արժեքները դեմ են նաև ցանկացած խտրականության և մեկուսացման: Դրանք պահանջում են մարդկանց ընդունել այնպիսին, ինչպիսին նրանք կան՝ որպես եզակի և անկրկնելի անհատականություններ, որպես արդյունք իրենց միջավայրի և հարաբերությունների: Այդ նորմերն ու արժեքները մասնագետներից պահանջում են նաև մատուցել անհրաժեշտ ծառայությունները՝ անկախ մարդկանց մաշկի գույնից, տարիքից, սեռային, ազգային և կրոնական պատկանելությունից և այլն: Սոցիալական աշխատանքը պայքարում է կարծրատիպային մտածողության և գործելակերպի դեմ: Նման մշակույթը նախկինում շատ տարածված էր քրեական արդարադատության համակարգում: Քրեական իրավախախտումների դեպքում դատարանների ամենատարածված արձագանքը որպես խափանման միջոց կալանքի ընտրությունն էր, իսկ երբ մարդու մեղքն ապացուցվում էր, ապա ամենահաճախ սահմանվող պատիժը ազատազրկումն էր: Դրանից հետո արդեն կարելի էր համարել, որ հասարակությունն անդառնալիորեն կորցնում էր մարդուն փրկելու հնարավորությունը, որովհետև բանտում ոչինչ չէր արվում նրան օգնելու համար, ընդհակառակը՝ միայնակ թողնելով նրան բանտային մշակույթի ճահճում, անընդհատ նվաստացնելով ու ստորացնելով՝ հասարակությունը բումերանգի էֆեկտով հետ էր ստանում անուղղելի հանցագործի, որի համար ազատությունը լոկ կարճատև դադար էր պարբերական ազատազրկումների շղթայում:

Հայաստանի Հանրապետությունում, որքան էլ զարմանալի է, սոցիալական աշխատանքն առաջինը պաշտոնապես մուտք գործեց քրեակատարողական համակարգ՝ դրանով իսկ հնարավորություն ստանալով փոխելու սոցիալական մշակույթն այդ համակարգում: Եվրոպական կառույցների ճնշման տակ Հայաստանի կառավարությունը քրեական պատիժների իրականացման համակարգում ստեղծեց վերականգնողական ծառայություններ, որոնց կազմում ենթադրվում էր նաև սոցիալական աշխատողների մասնակցությունը: Համակարգում պատժիչ գործառույթից շեշտը տեղափոխվեց ուղղիչ գործառույթի վրա, սակայն համակարգի փակ լինելը, կարծրացած ավանդույթները և կաղապարային մտածողությունը խանգարեցին, որ նախորդ սոցիալական մշակույթը փոխարինվի նորով: Բարեփոխումները խիստ ձևական բնույթ են կրում այդ համակարգում: Այսօր էլ քրեական արդարադատության համակարգ ներմուծվում է պրոբացիոն ծառայությունը, որի ճակատագիրը, չնայած բազմաթիվ խոստումներին, բավականին մշուշոտ է: Դրա հիմնական պատճառներից մեկը դարձյալ կարծրատիպային վերաբերմունքն է դատապարտյալների նկատմամբ, որը հատուկ է պատժի իրա-

կանացումը կազմակերպող անձնակազմի անդամներին: Սոցիալական աշխատողները կարող են արմատապես բարելավել դատապարտյալների ուղղման և վերականգնման, նրանց իրավունքների պաշտպանության գործընթացների բովանդակությունը, սակայն առ այսօր հիմնավոր կրթությամբ որևէ սոցիալական աշխատող չի ներառված համակարգում: Նրանց գործառույթները հանձնված են նախկին համակարգից ժառանգություն մնացած կադրերին, որոնք իներցիայով շարունակում են աշխատել հին ձևով: Խորհրդային շրջանի համեմատ՝ կարևոր փոփոխություններ են կատարվել ՀՀ քրեական արդարադատության համակարգում. զգալիորեն բարելավվել են քրեակատարողական օրենսդրությունը և պատժիչ հաստատությունների պայմանները, ավելացել են դատապարտյալների իրավունքները: Սակայն դեռ անհրաժեշտ է ապահովել հմուտ սոցիալական աշխատողների մասնակցությունը քրեական դատավարության գործընթացներին, զարգացնել այլընտրանքային պատիժների համակարգը և այլն: Սոցիալական աշխատողների դերակատարումն այդ համակարգում չի կարող արդյունավետ լինել, եթե չփոխվի հասարակության վերաբերմունքն իրավախախտների նկատմամբ: Համակարգը պետք է սովորի ի դեմս հանցագործի առաջին հերթին տեսնել մարդուն, ում պետք է օգնել ճիշտ ուղի վերադառնալու, այլ ոչ թե մեկին, ում պետք է պատժել ու զրկանքներ պատճառել: Այն պետք է վերանայի իր վերաբերմունքը բոլոր նրանց նկատմամբ, ովքեր հայտնվում են մեղադրյալի աթոռին: Համակարգը նաև պետք է ապահովվի անհրաժեշտ ներուժով, որպեսզի հնարավոր լինի իրական աշխատանք տանել իրավախախտների ուղղման ու սոցիալական վերականգնման ուղղությամբ: Դրանք կրթության, մասնագիտացման, աշխատանքային և սոցիալական այլ հմտությունների ուսուցման, հանգստի և ժամանցի կազմակերպման, անցանկալի կախվածության հաղթահարման հնարավորություններն են, որոնք այսօր համակարգում բացակայում են:

Սոցիալական աշխատողը դառնում է ներառական կրթական ծրագրերը սպասարկող առանցքային մասնագետներից մեկը: Վերջինս հասարակությանը ստիպում է բոլորովին նոր հայացքով նայել հաշմանդամության երևույթին. փակել շուրջօրյա խնամքի հաստատությունները՝ մարդկանց տեղափոխելով ընտանիքներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրանց համապատասխան աջակցություն ցուցաբերել ցերեկային խնամքի կենտրոններում, հոգ տանել միջավայրի հարմարեցման մասին: Սոցիալական աշխատանքի ազդեցությամբ Հայաստանի հասարակությունը հաշմանդամության նկատմամբ բժշկական մոտեցումը փոխարինում է սոցիալականով, ինչը կարող է ցանկալի արդյունքներ տալ, եթե համապատասխան փոփոխություններ կատարվեն սոցիալական մշակույթում: Մարդիկ պետք է ընդունեն, որ հաշմանդամները և զանազան պատճառներով կյանքի մայթեզրին հայտնվածները բոլորի նման մասնակցության իրավունք ունեն, և հ-

նարավոր ամեն ինչ պետք է արվի նրանց այդ իրավունքը պաշտպանված դարձնելու համար՝ նրանց նկատմամբ համապատասխան վերաբերմունք ձևավորելուց սկսած մինչև միջավայրերի հարմարեցումը:

Սոցիալական աշխատանքը արմատապես փոխում է նաև բնակչության սոցիալական պաշտպանության մշակույթը: Բարիքների և ծառայությունների ուղղակի բաշխումից անցում է կատարվում վարման ու կառավարման գործընթացներին, երբ մանրակրկիտ ուսումնասիրվում և բացահայտվում են յուրաքանչյուր շահառուի խնդիրները, որից հետո հենց վերջինիս ակտիվ մասնակցությամբ փորձում են լուծել դրանք: Մարդկանց օգնելու իր յուրահատուկ մոտեցմամբ սոցիալական աշխատանքը նպաստում է նրանց ուժեղացմանը, ինչը թույլ է տալիս հուսալ, որ հետագայում նման իրավիճակներում հայտնվելիս նրանք կարող են կիրառել նախորդ օգնության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները: Օգնել մարդուն որպեսզի ինքն իրեն օգնի՝ ահա սոցիալական աշխատանքի մոտեցման ընդհանրացված ձևակերպումը: Այսպիսի մոտեցումը կանխում է մասնագետից շահառուի կախվածության խորացումը, նրան հնարավորինս անկախ է դարձնում շրջապատից: Այն նաև նպաստում է անհատների, խմբերի և համայնքների ուժեղացմանը և ակտիվացմանը: Ընդհանուր առմամբ՝ սոցիալական աշխատանքը նպաստում է քաղաքացիական հասարակության կառուցմանը:

Սոցիալական աշխատանքը, հավատարիմ մնալով իր որդեգրած բարոյական նորմերի պահանջներին, դաստիարակում է նաև հարգանք անհատի անձնական կյանքի նկատմամբ: Շահառուների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիության պահպանման պահանջը որոշակի երաշխիքներ է ստեղծում, որ նրանք չտուժեն ավելորդ հետաքրքրասիրությամբ տառապող և անազնիվ մարդկանց տեսադաշտում հայտնվելիս: Դա նրանց պաշտպանում է նաև այն դեպքերում, երբ պետական մեքենան փորձում է սոցիալական աշխատող - ծառայողներից տեղեկություն կորզել մարդկանց վարքի անցանկալի և հակաօրինական դրսևորումների մասին: Երբեմն նույնիսկ մասնագետները հայտնվում են բարոյական երկընտրանքի առջև՝ դժվարությամբ կատարելով անհրաժեշտ ընտրությունը: Մասնագիտությունն իր ներկայացուցիչներից պահանջում է հարգանք շահառուի ինքնորոշման նկատմամբ նաև այնպիսի դեպքերում, երբ շահառուն ակնհայտորեն սխալվում է, բայց որպեսզի մասնագետը նրան չվանի իրենից, պահպանի նրա հետ հաստատված կապը, նրան փոխելու համար գոնե արտաքնապես ցույց է տալիս, որ հարգում է նրա դիրքորոշումը:

Սոցիալական աշխատանքը հեղափոխություն է կատարում մարդկանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Ընդհանրապես, մասնագիտության սահմանումներից մեկն այն նույնացնում է իրավապաշտպան գործունեության հետ: Խոսքը սոցիալական իրավունքների պաշտպանության մասին է, որոնք կարող են խախտվել բյուրոկրատա-

կան մեքենայի անկատարության, մասնագետների և ծառայողների անբավարար արհեստավարժության, շահերի բախման հետևանքով: Այս ուղղությամբ սոցիալական աշխատանքը Հայաստանում ամենամեծ նվաճումներն արձանագրել է երեխաների պաշտպանության ոլորտում: Հայ հասարակությունը երեխա սիրող է համարում իրեն: Սակայն իրականում հաճախ չի էլ պատկերացնում, թե ով է երեխան, ինչպիսի կարիքներ ունի, ինչպես է հարկավոր խնամել նրան: Խորհրդային կառավարման տարիներին հասարակական գիտակցության մակարդակում երեխան ընդհանուր առմամբ ընկալվում էր որպես ծնողների սեփականությունը, ովքեր էլ նրա փոխարեն կայացնում էին բոլոր որոշումները՝ անվան ընտրությունից սկսած մինչև մասնագիտության ընտրությունը և նույնիսկ ավելի ուշ արվող ընտրությունները: Երեխան, չնայած իր ֆիզիկական հասունացմանը, ծնողների կենդանության ողջ ընթացքում կարող էր այդպես էլ չանկախանալ նրանցից և մնալ նրանց գերխնամքի օբյեկտը և զոհը: «Շարունակվող երեխայություն». ահա ինչպես էին անվանում սոցիոլոգները հայ մշակույթում առկա այդ երևույթը: 1996 թվականին «Երեխաների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո մասնագետներն ավելի մեծ հնարավորություններ ստացան երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ, սակայն դրանք իրականություն դարձնելու համար պետք էր համապատասխան մշակութային հենք ստեղծել: Այսօր բազմաթիվ ընտանիքներում երեխաների իրավունքները ոտնահարվում են՝ նրանք ենթարկվում են աշխատանքային շահագործման ու բռնությունների, շատերը չեն ստանում անհրաժեշտ խնամք ու կրթություն, աղքատության պատճառով բազմաթիվ ծառայություններ դարձել են դժվարամատչելի: Սակայն ամենախնդրահարույցն այն է, որ սոցիալական աշխատանքի տեսանկյունից երեխաների բռնություն, շահագործում, անտեսում, չարաշահում որակվող շատ երևույթներ հասարակությունը չի բնորոշում որպես այդպիսին: Հետևաբար, որպեսզի սոցիալական աշխատողներն արդյունավետ պաշտպանեն երեխաների իրավունքները, ստիպված են պայքարել որոշ ավանդույթների, սովորույթների, կարծրատիպերի դեմ: Մինչև այժմ չկա ընտանեկան բռնությունների մասին օրենք, որը սոցիալական աշխատողներին թույլ կտար ավելի արդյունավետ միջամտություններ կատարել: Հասարակությունը պետք է վերանայի իր վերաբերմունքը ընտանիքում երեխաների հետ տեղի ունեցող երևույթների և գործընթացների նկատմամբ՝ խնամք, սոցիալականացում, դաստիարակություն, կրթություն, առողջապահություն, հանգիստ և այլն: Սոցիալական աշխատանքը մարդկանց ուղղակի պարտադրում է այնպիսի սոցիալական հարաբերություններ, որոնք հարիր են իր արժեքա - նորմատիվային համակարգին: Սովորական քաղաքացիներին երբեմն նույնիսկ տարօրինակ ու զարմանալի են թվում սոցիալական աշխատողների

մոտեցումները երեխաների սոցիալական պաշտպանության հարցերին, հատկապես երբ խոսքը վերաբերում է ծնողների իրավունքների սահմանափակմանը: Վիճելի իրավիճակներում, երբ կշեռքի նժարներին դրված են լինում ծնողների և երեխաների շահերը, սոցիալական աշխատողներն առաջնորդվում են երեխայի լավագույն շահով, ինչը նրանց երբեմն ստիպում է բաժանել երեխաներին ծնողներից, երբ վերջիններիս մոտ գտնվելը գնահատվում է վտանգավոր: Նման հնարավորությունը սոցիալական աշխատողներին օժտում է իշխանությամբ անբարեխիղճ և բռնացող ծնողների նկատմամբ: Եթե եվրոպական շատ հասարակություններում մասնագետները հաճախ են օգտագործում իրենց այդ իրավունքը, ապա հետխորհրդային տարածքի հասարակությունները դեռ շատ փոփոխություններ պետք է անեն, որպեսզի սոցիալական աշխատողները նման իրական հնարավորություն ունենան: Ռուսական լրատվամիջոցների կողմից սոցիալական թեմաներով կազմակերպվող քննարկումների ժամանակ մարդիկ հաճախ են մտավախություն հայտնում այն մասին, որ սոցիալական աշխատողներին տրվում է մեծ իշխանություն՝ միջամտելու ընտանիքների կյանքին և պատժելու ծնողներին, երբ երեխաների նկատմամբ նրանց վերաբերմունքը չի համապատասխանում սոցիալական աշխատանքի սպասումներին: Օրինակ՝ ծնողների համար նման ռիսկ առաջանում է, երբ նրանց մոտ կախվածություն է նկատվում տարբեր նյութերից կամ մանկահասակ երեխաներին մենակ են թողնում տանը կամ, ասենք, խնամատարության վերցրած երեխաներին կերակրում են ոչ թարմ սննդամթերքով: Վերջերս նշված լրատվամիջոցները մի քանի սկանդալային դեպքեր ներկայացրեցին այն մասին, թե ինչպես նորվեգական, ֆիննական, գերմանական սոցիալական ծառայությունները ներգաղթյալ ռուս ընտանիքներից երեխաներին իբր խլել են ու հանձնել խնամատար ընտանիքներ՝ կենսաբանական ծնողների ոչ հարիր պահվածքի պատճառով: Իհարկե, այսօր մեծ տարբերություն կա ռուսական և եվրոպական նշված երկրների սոցիալական մշակույթների միջև, մանավանդ երեխաների իրավունքների պաշտպանության տեսանկյունից, և հասկանալի է ռուսների զարմանքը, օրինակ՝ սկանդինավցի սոցիալական աշխատողների որոշումներից: Եթե հասարակության սոցիալական մշակույթը չի համապատասխանում սոցիալական աշխատանքի նորմերին ու արժեքներին, միշտ էլ այդպիսի տարակարծություններ կլինեն, և սոցիալական աշխատողների համար դժվար, երբեմն նույնիսկ անհնար կլինի իրականացնել իրենց մասնագիտական գործառույթները: Եթե Հայաստանում այսօր որոշեին պաշտպանել երեխաների իրավունքները՝ խստորեն առաջնորդվելով սոցիալական աշխատանքում ընդունված նորմերով ու արժեքներով, ապա բազմաթիվ խախտումներ կհայտնաբերվեին ընտանիքներում, դպրոցներում, բժշկական հաստատություններում, ոստիկանության բաժիններում,

քրեակատարողական հիմնարկներում և այլն: Սոցիալական աշխատողները չեն կարող միանգամից հակադրվել այդ ամենին և իրականացնել իրենց մասնագիտական դերը: Հասարակությանը սոցիալական մշակույթին հարմարեցման տևական և երկարատև գործընթաց է սպասվում: Սոցիալական աշխատանքը հենց այն մեխանիզմն է, որի միջոցով այդ փոփոխությունը կարող է կատարվել: Հասարակությունը պետք է դառնա ժողովրդավարական ու թափանցիկ, իսկ մարդկանց իրավունքները՝ ճանաչված ու պաշտպանված: Սոցիալական աշխատողը հենց այն մասնագետն է, ով կարող է պաշտպանել սոցիալապես խոցելի մարդկանց շահերը՝ կանխելով սոցիալական ռիսկերի առաջացումը, իսկ եթե նրանք հայտնվեն կյանքի դժվարին իրավիճակներում, մասնագիտական միջամտությունները թույլ կտան արդյունավետ լուծումներ գտնել: Սոցիալական աշխատողները կկարողանան բնակչության սոցիալական պաշտպանության իրենց պարտականություններն արդյունավետ իրականացնել Հայաստանում, եթե հասարակության սոցիալական մշակույթը հնարավորինս հարմարեցվի սոցիալական որդեգրված նորմերին ու արժեքներին:

Բանալի բառեր – *սոցիալական աշխատանք, սոցիալական մշակույթ, հանդուրժողականություն, մարդու իրավունքներ, կարծրատիպ, խտրականություն*

АРТАК ХАЧАТРЯН – ***Социальная работа и социальная культура армянского общества.*** – В статье анализируются изменения в социальной культуре армянского общества под влиянием профессионально проводимой социальной работы. Аргументированно утверждается, что социальная работа возникла на Западе и при внедрении в традиционное армянское общество в корне меняет его социальную культуру. Социальная работа – это новая технология защиты людей от негативных последствий рыночных отношений. Чтобы профессия социального работника полноценно прижилась в постсоветской Армении, придётся адаптировать социальную культуру общества к её нормам и ценностям.

Ключевые слова: *социальная работа, социальная культура, толерантность, права человека, стереотип, дискриминация*

ARTAK KHACHATRYAN – ***Social Work and Social Culture of Armenian Society.*** – The article analyzes the process of changing the social culture of the Armenian society under the influence of the "social work" profession.The author argues that social work has been the achievement of Western cultures, and the implementation of it into traditional Armenian society, radically changes its social culture. Social work is a new technology of protection of people from negative social effects of market relations. For successful implementation of it into post-Soviet Armenian Society, we have to adapt social culture to the requirements of its norms and values.

Key words: *social work, social culture, tolerance, human rights, stereotype, discrimination*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԱՐՄԵՆԱԿ ԴԱՐԲԻՆՅԱՆ, ԴԱՎԻԹ ԲՈՒԴԱՂՅԱՆ

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ) վերջին երեք տասնամյակում գտնվում է ընկերությունների ուշադրության կենտրոնում: ԿՍՊ-ն՝ որպես ընկերությունների ռազմավարական զարգացման կարևոր տարրերից մեկը, հնարավորություն է տալիս ավելացնելու նրանց շահույթը և ընձեռում է լրացուցիչ մրցակցային առավելություններ՝ միևնույն ժամանակ լուծելով բազմաթիվ սոցիալական և բնապահպանական խնդիրներ: Կազմակերպության ԿՍՊ-ի արդյունավետության գնահատումը, ինչպես նաև գնահատման մոդելի ստեղծումը բավական բարդ խնդիրներ են, ինչը պայմանավորված է ԿՍՊ-ի բազմաչափությամբ և ոչ միանշանակ բնույթով: Այդ իսկ պատճառով նրա արդյունավետության գնահատումը լուրջ տարակարծությունների տեղիք է տալիս: Սույն աշխատանքում քննարկվում են ինչպես ԿՍՊ-ի տեսական հիմքերը, այնպես էլ առաջարկվում է դրա գնահատման մի մոդել, որը հիմնված է VIKOR բազմագործոն որոշումներ կայացնելու մեթոդի[1] վրա:

Ըստ Ֆրիդմանի՝ միակ սոցիալական պատասխանատվությունը, որով պետք է առաջնորդվի ընկերությունը, տվյալ ընկերության բաժնետերերի շահույթի մեծացումն է իրավական և բարոյական գործող նորմերի շրջանակներում[2]: Բաժնետերերի մասին Ֆրիդմանի տեսության քննադատության հիմքում Ֆրիմանի՝ շահառուներին վերաբերող տեսությունն է[3]: Ի տարբերություն Ֆրիդմանի տեսության՝ շահառուների մասին տեսությունը դիտարկում է բոլոր այն կողմերին, որոնք կրում են ընկերության գործունեության ազդեցությունը: Համաձայն այս տեսության հիմնադիր Ֆրիմանի՝ շահառուներ են այն խմբերը և անհատները, որոնք կազմակերպության արտաքին միջավայրի առանցքային բաղադրիչներն են և կարող են դրական կամ բացասական ազդեցութ-

[1] Տե՛ս **S. Opricovic** and **G. Hshiung-Tzeng**, Compromise solution by MCDM methods: A comparative analysis of VIKOR and TOPSIS, «European Journal of Operational Research», 2002, № 156, էջ 445-455:

[2] Տե՛ս **M. Friedman**, The Social Responsibility of Business is to Increase its Profits, «The New York Times Magazine», September 1970, էջ 17, 13:

[3] Տե՛ս **E. Freeman**, Strategic management: a stakeholder approach, Boston: Pitman, 1984:

յուն ունենալ վերջինիս վրա կամ հակառակը: Այս տեսությունը ընկերության և նրա շահառուների միջև ԿՍՊ օգուտների փոխանակության գործընթացում կարող է դիտարկվել որպես կարևոր հարացույց: Փոխանակության ընթացքում կազմակերպությունն իր տրամադրած արժեքների դիմաց ստանում է առանցքային անհատների կամ սոցիալ-քաղաքական խմբերի հավանությունը: Բաժնետերերի մասին տեսության քննադատության հիմքում «ԿՍՊ բուրգի» տեսությունն է[4]:

Պատկեր 1

ԿՍՊ բուրգի մոդելը



Ըստ Քերոլի առաջարկած այս տեսության՝ ընկերության ստանձնած պարտավորությունները չորսն են՝ տնտեսական, իրավական, բարոյական և հայեցողական: Թեև պարտավորությունների այս տեսակները մշտապես առկա են, այնուամենայնիվ բիզնես փորձը ցույց է տալիս, որ առաջնային շեշտը դրվում է տնտեսական բաղադրիչի վրա, այնուհետև՝ իրավական, ապա՝ բարոյական և հայեցողական: Տնտեսական պարտավորությունները համարվում են առաջնային, քանի որ որպես տնտեսական միավոր կազմակերպությունը պարտավոր է արտադրել ապրանքներ և մատուցել ծառայություններ ու դրանք վաճառել շահույթ ստանալու նպատակով: Բիզնեսի բոլոր մյուս գործառույթները հիմնված են այս սկզբունքի վրա: Իրավական պարտավորությունները բովանդակում են այն պահանջները, որոնցով կազմակերպությունը պետք է առաջնորդվի: Բարոյական և հայեցողական պարտավորություններն ավելի դժվար է սահմանել, քանի որ դրանք սուբյեկտիվ բնույթի են:

ԿՍՊ գործոնների բազմազանությունը բարդացնում է դրանց՝ էմպիրիկ եղանակով գնահատումը: Հարկ է նշել նաև, որ այս բնագավառում իրականացվող հետազոտությունների գերակշիռ մասում կիրառ-

[4] Տե՛ս **A. Krisnawati, G. Yudoko** and **Y. R. Bangun**, Development Path of Corporate Social Responsibility Theories, «World Applied Sciences Journal», 2014, № 4, էջ 110-120:

վում են էկոնոմետրիկ մեթոդներ[5]: Սակայն սահմանափակ քանակությամբ տվյալների դեպքում նմանատիպ մեթոդների կիրառությունը նպատակահարմար չէ: Միևնույն ժամանակ, ներկայումս ավելանում է այն ընկերությունների թիվը, որոնք, իրենց բիզնես շահերից ելնելով, որդեգրում են սոցիալապես պատասխանատու քաղաքականություն: Այս ընկերությունների կարևորագույն մարտահրավերներից է ԿՍՊ-ի վրա կատարված ծախսերի և ներդրված այլ ռեսուրսների օպտիմալ ծավալի որոշումը: Հիմնվելով վերոնշյալի վրա՝ ոչ համասեռ մեծաքանակ գործոնների միաժամանակյա գնահատման համար առաջարկվում է ԿՍՊ-ի վարկանիշայի գնահատման VIKOR բազմագործոն որոշումների կայացման մեթոդը[6]: Գնահատումն իրականացնելիս պետք է հաշվի առնել նաև, թե հասարակությունն ինչպես է ընկալում ընկերության ԿՍՊ քաղաքականությունը, քանի որ ԿՍՊ-ն, ըստ որոշ սահմանումների, ներառում է նաև հասարակության պահանջները կատարելու ընկերության պատրաստակամությունը[7]:

ԿՍՊ գնահատման վերաբերյալ առկա հարուստ գրականության վերլուծության հիման վրա հեղինակներն առաջարկում են այնպիսի մոտեցում, որը հնարավորություն է տալիս համեմատական կարգով գնահատելու ընկերությունների սոցիալական պատասխանատվության ունակությունը: Այս մոտեցման դեպքում կիրառվում են տեղեկութային էնթրոպիայի[8] և VIKOR[9] բազմագործոն որոշումներ կայացնելու մեթոդները: Այստեղ ընկերության ԿՍՊ արդյունավետությունը գնահատվում է ըստ ԿՍՊ բուրգի մոդելի[10]: Փորձագիտական հարցումներից ստացված տվյալների հիման վրա դուրս են բերվում ընկերության սոցիալական պատասխանատվությունը բնութագրող վերոնշյալ չորս բաղադրիչները: Տեղեկութային էնթրոպիայի և VIKOR մեթոդների կիրառման շնորհիվ հնարավորություն է ստեղծվում ստանալու ընկերությունների սոցիալական պատասխանատվության վարկանիշները:

Գնահատման առաջարկվող մեթոդը բաղկացած է 3 հիմնական փուլից: Առաջին փուլում հավաքվում են փորձագիտական հարցման ընթացքում ընկերություններին տրված գնահատականները: Երկրորդ փուլում տեղեկութային էնթրոպիայի միջոցով որոշվում է վերոնշյալ

---

[5] Տե՛ս **W. K. Wang, W. M. Lu, Q. L. Kweh** and **H. W. Lai**, Does CSR Influence the CP of the US Telecommunication Industry, Elsevier, 2014:

[6] Տե՛ս **S. Opricovic** and **G.-H. Tzeng**, Extended VIKOR Method in Comparison with Outranking Methods, «European Journal of Operational Research», 2007, էջ 514-529:

[7] Տե՛ս **A. B. Carroll**, The Pyramid of Corporate Social Responsibility: Toward the Moral Management of Organizational Stakeholders, «Business Horizons», July-August 1991:

[8] Տե՛ս **C. Shannon**, A Mathematical Theory of Communication, «The Bell System Technical Journal», 1948, № 5, էջ 45-56:

[9] Տե՛ս **S.Opricovic** and **G.-H. Tzeng**, նշվ. աշխ., էջ 445-502:

[10] Տե՛ս **A. B. Carroll**, Corporate Social Responsibility Evolution of a Definitional Construct, «Business & Society», 1999, Vol. 8, № 3, էջ 268-295:

չորս բաղադրիչներից յուրաքանչյուրի կշիռը: Երրորդ փուլում ստացված կշիռներով վերահաշվարկված գնահատականները ներմուծվում են VIKOR մոդել: Ստացված արդյունքները հնարավորություն են ընձեռում ըստ ԿՍՊ մակարդակի դասակարգելու ընկերությունները:

ԿՍՊ չորս բաղադրիչներից յուրաքանչյուրի գնահատման համար համապատասխանաբար կիրառվում են հետևյալ մոտեցումները.

- տնտեսական պատասխանատվության գնահատման համար հարցման մասնակիցները հիմք են ընդունում ընկերության տարեկան հաշվետվությունների արդյունքները,
- իրավական պատասխանատվության գնահատման համար՝ ընկերությանը վերաբերող դատական գործերը և տուգանքները,
- բարոյական պատասխանատվության գնահատականը ստացվում է սպառողների շրջանում իրականացված հարցումների հիման վրա,
- հայեցողական պատասխանատվությունը գնահատվում է բարեգործության վրա ընկերության կատարած ծախսերով:

Ըստ այդմ՝ յուրաքանչյուր i -րդ ընկերության j-րդ բաղադրիչի համար ստանում ենք x_{ij} գնահատական:

Տվյալների հավաքագրմամբ ստանում ենք $n\ x\ m$ չափայնության գնահատականների մատրիցա, որտեղ n-ը ընկերությունների քանակն է, իսկ m-ը՝ բաղադրիչների քանակը: Գնահատականները միօրինակացնելու նպատակով ստացված մատրիցի ցանկացած x_{ij} տարրի հետ կատարում ենք հետևյալ գործողությունը՝

$$X_{ij} = \frac{x_{ij}}{\sum_{i=1}^{n} x_{ij}}: \quad (1)$$

Այնուհետև j -րդ գործոնի էնթրոպիան հաշվում ենք հետևյալ բանաձևով՝

$$E_j = -\frac{1}{\ln n} \times \sum_{i=1}^{n} X_{ij} \times \ln X_{ij}\ , (2)$$

որտեղ E_j-ի արժեքն ընկած է $[0;\ 1]$ միջակայքում և ցույց է տալիս տվյալ ցուցանիշի անորոշության չափը: j-րդ բաղադրիչի տրամադրած տեղեկատվության նշանակալիությունը ցույց տալու համար վերջինիս շեղման աստիճանը պետք է հաշվել հետևյալ բանաձևով՝

$$Շեղ_j = 1 - E_j^{11} : (3)$$

Գործոնի վերջնական կշիռը ստանալու համար կատարում ենք հետևյալ գործողությունը՝

$$ԿՇ_j = \frac{Շեղ_j}{\sum_{j=1}^{m} Շեղ_j} : (4)$$

VIKOR բազմագործոն որոշումների կայացման մեթոդը ստեղծվել

[11] Տե՛ս **E. Ebrahimi, S. Zohrei** and **M. Emadi**, Assessing the Corporate Social Responsibility Using Shannon's Entropy and VIKOR Methods, «Business & Society», 2014, Vol. 1, № 1, էջ 54-61:

է հակադրվող, բազմաչափ գործոններով պայմանավորված օպտիմալացման խնդիրներ լուծելու համար: Այստեղ այլընտրանքները գնահատվում են՝ հաշվի առնելով բոլոր հակասական գործոնները, իսկ դասակարգվում են փոխզիջումային լուծում գտնելով[12]:

Դիցուք, ունենք n այլընտրանք և m գործոն: i -րդ այլընտրանքի j-րդ գործոնի գնահատականը նշանակենք α_{ij}: Գնահատականները միօրինակացնելու համար հարկավոր է կատարել հետևյալ գործողությունը՝

$$f_{ij} = \frac{\alpha_{ij}}{\sqrt{\sum_{j=1}^{n} \alpha_{ij}^2}} : (5)$$

Յուրաքանչյուր j-րդ գործոնի լավագույն արժեք է f_j^{max}-ը, իսկ վատագույն արժեքը f_j^{min}-ն է: Իդեալական լուծում ստանալու համար անհրաժեշտ է համատեղել f_j^{max}-ը բոլոր գործոնների համար: Սակայն քանի որ լուծում կարող է համարվել այլընտրանքներից միայն մեկի գործոնների համադրությունը, ուստի հարկավոր է հաշվել տրված այլընտրանքներից յուրաքանչյուրի հեռավորությունը իդեալական լուծումից: Դրա համար անհրաժեշտ է համադրել յուրաքանչյուր գործոնի կշռային արժեքը (որը ստացվել է տեղեկութային էնթրոպիայի հաշվարկման մեթոդով) և յուրաքանչյուր այլընտրանքի բոլոր գործոնների գնահատականները:

Հաջորդ քայլով հաշվարկվում է յուրաքանչյուր այլընտրանքի հեռավորությունը լավագույն և վատագույն համադրությունից.

$$L_i = \sum_{j=1}^{n} \left[w_j \times \frac{f_j^{max} - f_{ij}}{f_j^{max} - f_j^{min}} \right], (6)$$

$$Ч_i = max_j \left[w_j \times \frac{f_j^{max} - f_{ij}}{f_j^{max} - f_j^{min}} \right] : (7)$$

Հաշվի առնելով ստացված կշիռները՝ որոշվում են յուրաքանչյուր ցուցանիշի առավելագույն և նվազագույն հնարավոր արժեքները և համապատասխան օպտիմալ արժեքից հաշվարկվում բոլոր ցուցանիշների հեռավորությունը (տե՛ս (6) և (7) արտահայտությունները):

Այժմ կատարենք հետևյալ նշանակումները.

$$L_{max} = max_i L_i,\ L_{min} = min_i L_i\ \ Ч_{max} = max_i Ч_i,\ Ч_{min} = min_i Ч_i :$$

Վերջնական վարկանիշային դասակարգման համար հաշվի է առնվում երկու գործոն.

- իրենց համապատասխան օպտիմալ արժեքներից ցուցանիշների հեռավորությունների գումարը (Գ1) և
- այդ հեռավորություններից առավելագույնի արժեքը (Գ2) (տե՛ս (8) արտահայտությունը):

Այսպիսով, VIKOR արժեքները (V_i) հաշվարկվում են հետևյալ բա-

[12] Տե՛ս **C. Samantra, S. Datta** and **S. S. Mahapatra**, Application of Fuzzy Based VIKOR Approach for Multi-Attribute Group Decision Making (MAGDM): A Case Study in Supplier Selection, «Decision Making in Manufacturing and Services», 2012, Vol. 6, № 1, էջ 25–39:

նաձևով՝

$$V_i = v \times \left[\frac{L_i - L_{max}}{L_{min} - L_{max}}\right] + (1 - v) \times \left[\frac{Ч_i - Ч_{max}}{Ч_{min} - Ч_{max}}\right], \quad (8)$$

որտեղ v գործակցի միջոցով կարելի է ճշգրտել, թե տվյալ երկու գործոններից որին է նախապատվություն տրվում: Եթե $v > 0{,}5$, ապա նախապատվություն է տրվում այն ընկերություններին, որոնք օպտիմալ լուծումից նվազագույն շեղում ունեն: Եթե $v < 0{,}5$, ապա նախապատվությունը տրվում է այն ընկերություններին, որոնց թերացումը նվազագույնն է ամենացածր գնահատված ցուցանիշում (կորուստի նվազագույնացում): Հիմնականում հետազոտություններում օգտագործվում է v=0,5: Դասավորելով V_i արժեքները նվազման կարգով՝ ստանում ենք ընկերությունների վարկանիշային դասակարգումը:

Ստորև ներկայացված օրինակում նկարագրված մոդելը կիրառվում է 10 հիպոթետիկ ընկերությունների ԿՍՊ վարկանիշների որոշման համար: Հարցումներից հավաքագրված ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Ընկերությունների ԿՍՊ բաղադրիչների գնահատականներն ըստ հարցումների

Ընկերություն	Տնտեսական	Իրավական	Բարոյական	Հայեցողական
1	58	44	94	63
2	73	70	40	85
3	69	39	35	75
4	52	65	71	80
5	80	75	67	50
6	44	56	37	94
7	50	47	89	79
8	75	50	60	57
9	77	51	55	90
10	50	91	71	30

Վերոնշյալ օրինակը դիտարկենք Պորտերի «Մրցակցային առավելության տեսության»[13] համատեքստում: Ներկայումս շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր ընկերություն ձգտում է մրցակցային առավելության, ինչը շահույթի ապահովման գրավականներից մեկն է: Ընդունված է, որ կազմակերպությունն ունի մրցակցային առավելություն, եթե նրա ստացած շահույթն ավելի բարձր է, քան տվյալ ճյուղում հաստատված շահույթի միջին մակարդակն է: Դիտարկելով մրցակցային

[13] Տե՛ս **M. E. Porter**, Competitive Advantage: Creating and Sustaining Superior Performance, New York: A Division of Simon & Schuster Inc, 1980:

առավելությունը ԿՍՊ շրջանակներում՝ կարող ենք ասել, որ ԿՍՊ բուրգի բաղադրիչներից մեկի բարձր գնահատականը կազմակերպության համար մրցակցային առավելություն է ապահովում այլ մասնակիցների նկատմամբ: 6-րդ ընկերության դեպքում, օրինակ, հայեցողական բաղադրիչի բարձր գնահատականը նրա համար մրցակցային առավելություն կապահովի: Շղթայական էֆեկտով այն կհանգեցնի շահույթի ավելի բարձր մակարդակի:

Պատկեր 2

Ընկերությունների ԿՍՊ բաղադրիչների գնահատականներն ըստ հարցումների



Պատկեր 2-ից երևում է, որ 4-րդ և 5-րդ կազմակերպությունների գնահատականները միմյանց հայելային արտապատկերումն են: 4-րդ ընկերության պարագայում ավելի բարձր գնահատական ունի հայեցողական բաղադրիչը, իսկ 5-րդի դեպքում՝ տնտեսականը: Սակայն քանի որ վերջնական վարկանիշի հաշվարկում հայեցողական գործոնն ունի ավելի բարձր կշիռ, ուստի 4-րդ ընկերությունն ունի ավելի բարձր վարկանիշ (աղյուսակ 2 և պատկեր 3):

Աղյուսակ 2

Հաշվարկված ցուցանիշներ

	Տնտեսական	**Իրավական**	**Բարոյական**	**Հայեցողական**
ԿՇ	0.142408982	0.226213867	0.35079241	0.280584741
f_j^{max}	0.394860768	0.47350898	0.457872457	0.408136679
f_j^{min}	0.217173423	0.20293242	0.170484426	0.130256387

Պատկեր 3

Ընկերությունների ԿՍՊ բաղադրիչների գնահատականների *էնթրոպիայով* կշռված արժեքները



Աղյուսակ 3-ում ներկայացված են վարկանիշային գնահատման ցուցանիշները, որոնք արտահայտում են բաղադրիչի արժեքի՝ իր օպտիմալից ունեցած հեռավորությունը:

Աղյուսակ 3

Ընկերությունների ԿՍՊ վարկանիշային գնահատման ցուցանիշներ

Ընկերություն	Բաղադրիչի հեռավորությունն իր օպտիմալ արժեքից				Գործոններ		VIKOR	Վարկանիշ
	Տնտեսական	Իրավական	Բարոյական	Հայեցողական	$Գ_1$	$Գ_2$		
1	0.0870	0.2044	0	0.1359	0.2044	0.4273	0.1947	**4**
2	0.0276	0.0913	0.3210	0.0394	0.3210	0.4795	0.5546	**7**
3	0.0435	0.2262	0.3507	0.0832	0.3507	0.7038	1	**10**
4	0.1107	0.1131	0.1367	0.0613	0.1367	0.4219	0.0275	**1**
5	0	0.0696	0.1605	0.1929	0.1929	0.4230	0.1604	**3**
6	0.1424	0.1522	0.3389	0	0.3389	0.6335	0.8544	**9**
7	0.1186	0.1914	0.0297	0.0657	0.1914	0.4055	0.1276	**2**
8	0.0197	0.1783	0.2021	0.1622	0.202152	0.5625	0.4158	**6**
9	0.0118	0.1740	0.2318	0.0175	0.2318	0.4352	0.2720	**5**
10	0.1186	0	0.1367	0.2805	0.2805	0.5360	0.5546	**8**

Չնայած այն հանգամանքին, որ 6-րդ ընկերության դեպքում հայեցողական բաղադրիչն իդեալական մակարդակում է, այնուամենայնիվ ընկերությունն իր վարկանիշով գտնվում է 9-րդ տեղում: Սա պայմանավորված է հայեցողական բաղադրիչի համեմատ բարոյականի ավելի բարձր կշռով և վերջինիս՝ իդեալական մակարդակից բավական մեծ հեռավորությամբ: 4-րդ ընկերության համար ստացված տվյալները

ցույց են տալիս, որ բացի տնտեսականից՝ մյուս բոլոր բաղադրիչները գտնվում են միջինից ավելի ցածր մակարդակում: Ընկերության ԿՍՊ վարկանիշի հաշվարկում տնտեսական բաղադրիչի կշիռը մյուսներից ավելի ցածր է, որով և պայմանավորված է 4-րդ ընկերության բարձր վարկանիշը. այն գտնվում է առաջին տեղում:

Այսպիսով, ԿՍՊ-ն մրցակցային առավելություն ձեռք բերելու կարևորագույն գործիքներից է: Սակայն վերջինիս բազմագործոնային բնույթն էապես բարդացնում է նրա քանակական գնահատումը: Մյուս կողմից՝ գնահատման համար կիրառվող մոտեցումների մեծ մասը պահանջում է հսկայածավալ տվյալների առկայություն: Առաջարկվող մոտեցումը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները և թույլ է տալիս վարկանիշավորել ընկերությունների ԿՍՊ-ն նույնիսկ սահմանափակ քանակությամբ տվյալների առկայության պարագայում՝ օգտագործելով VIKOR բազմագործոն որոշումների կայացման մեթոդը: Ներկայացվող մոտեցումը լուծում է նաև ԿՍՊ-ի անհամասեռ գործոնների համադրման խնդիրը՝ կիրառելով տեղեկութային էնթրոպիայի միջոցով ստացված կշիռները: Սույն մոտեցման հիմնական թերությունն այն է, որ ստացված արդյունքները հնարավոր է կիրառել միայն որոշակի վերլուծության շրջանակներում ուսումնասիրվող ընկերությունների ԿՍՊ-ների դասակարգման համար:

Բանալի բառեր – *կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, շահառուների տեսություն, ԿՍՊ բուրգ, վարկանիշային գնահատում, VIKOR մեթոդ, տեղեկութային էնթրոպիա*

АРМЕНАК ДАРБИНЯН, ДАВИД БУДАГЯН – ***Рейтинговая оценка корпоративной социальной ответственности организаций.*** – В работе показано, что представляет собой рейтинговая оценка корпоративной социальной ответственности (КСО) той или иной организации, основанная на теории пирамиды КСО Кэрролла. Рейтинговая оценка складывается из показателей экономической, правовой, этической и дискреционной ответственности на основе информационной энтропии и метода принятия многофакторных решений VIKOR. Приведён также гипотетический пример использования этого подхода.

Ключевые слова: *корпоративная социальная ответственность, теория заинтересованных сторон, пирамида КСО, рейтинговая оценка, метод VIKOR, информационная энтропия*

ARMENAK DARBINYAN, DAVID BUDAGHYAN – ***Ranking of Corporate Social Responsibility of Firms.*** – This article introduces an approach for ranking corporate social responsibility (CSR) of organizations, the theoretic base of which is Carroll's CSR Pyramid. Ranking is based on the levels of economic, legal, ethical and discretionary responsibilities of the firm. This is performed using information entropy and VIKOR multifactorial decision making method. The article also includes a hypothetical example of application of the proposed approach.

Key words: *corporate social responsibility, stakeholder theory, CSR pyramid, ranking, method VIKOR, information entropy*

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԿՈԼՈԳԻԶԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

ԱՐԱ ՔԱՌՅԱՆ

Վերջին տասնամյակներին մարդկության առջև ծառացած առավել բարդ հիմնախնդիրների շարքում առանձնահատուկ են բնապահպանությունն ու բնական ռեսուրսների օգտագործումը, որոնց ազդեցությունը, անկախ զարգացման աստիճանից, ուղղակիորեն կամ անուղղակիորեն կրում են բոլոր երկրները, տնտեսության բոլոր հատվածները, տնտեսավարողներն ու անհատները: 2015 թ. սկսված նավթի համաշխարհային գների աննախադեպ անկումը հերթական անգամ խուճապային ցնցում առաջացրեց ոչ միայն նավթ արդյունահանող, այլև բոլոր երկրներում, քանի որ այն անմիջականորեն ազդում է ամբողջ միջազգային տնտեսության վրա: 2015 թ. դեկտեմբերին Փարիզում կայացավ կլիմայի փոփոխության հիմնախնդրի շուրջ 21-րդ գլոբալ համաժողովը (այստեղ ընդունված փաստաթուղթը 2020 թվականից կփոխարինի Կիոտոյի համաձայնագրին), որտեղ ամրագրվեց խիստ տագնապալի մի իրողություն՝ երկրագնդի գլոբալ տաքացումը չպետք է գերազանցի 2 աստիճանը (ցելսիուսի չափման աստիճանով՝ 1880 թ. նորմայի համեմատ), մինչդեռ 1 աստիճանով արդեն բարձրացել է[1]:

Մարդկությունը նման տագնապալի գործընթացներին և ցնցումներին դիմակայելու պայքարի որոշակի փորձ ունի, որի համար ստեղծվել ու կիրառվում են դրանց հակազդող համակարգեր ու տարբեր կառուցակարգեր: Էկոլոգիական խնդիրներով պայմանավորված՝ մաքուր կամ «կանաչ» ինովացիոն տեխնոլոգիաների լայնածավալ ներդրումը ի վերջո հանգեցնելու է նավթի դարաշրջանի ավարտին: Սաուդյան Արաբիայի հեղինակավոր շեյխերից մեկի՝ Ահմեդ Զաքի Ամանի պատկերավոր արտահայտությամբ՝ քարե դարը վերջացավ ոչ այն պատճառով, որ երկրի վրայից վերացան քարերը... այդպես էլ կվերջանա նավթային դարաշրջանը: Նավթային ներկայիս ճգնաժամի ընթացքում որոշ փորձագետներ արդեն իսկ հնչեցնում են այդ դրույթը: Կարծում ենք, որ նավթի դարաշրջանի ավարտը անխուսափելի է, սակայն դեռ վաղ է արձանագրել այդ իրողությունը:

[1] Տե՛ս «Глава Всемирного банка о климате и неравенстве». Euronews, http://ru.euronews.com/2015/11/30/extreme-poverty-cannot-be-tackled-without-action-on-climate-change-warns-world/

Նավթի և բնապահպանական խնդիրների հակազդեցության գործիքակազմում առանձնահատուկ դերակատարություն ունի էկոլոգիական հարկերի համակարգը, որն արդեն երեք տասնամյակ դանդաղ, սակայն հաստատուն քայլերով ընդլայնվում է զարգացած երկրներում (այսուհետ տեքստում մենք կիրառում ենք «էկոլոգիական հարկեր» և ոչ թե «բնապահպանական հարկեր» ու «հարկային համակարգի էկոլոգիզացիա» տերմինները՝ շեշտելու միջազգային պրակտիկայում էկոլոգիական հարկերի կիրառության հիմնովին տարբերվող մոտեցումը): Ինչ է այդ համակարգը, և ինչ տեսլական է անհրաժեշտ ՀՀ-ին հարկային համակարգի էկոլոգիզացիայի ներդրման առումով:

Սկսենք այն բանից, թե ինչ է հարկային համակարգի էկոլոգիզացիայի քաղաքականությունը: Այդ հարցի պատասխանը ստանալու համար անհրաժեշտ է անդրադարձ կատարել էկոլոգիական հարկերի տեսությանը, այդ ճանապարհով անցած ԵՄ-ի և ՏՀԶԿ-ի երկրների փորձին: Էկոլոգիական հարկերը, սկսած անցյալ դարի 90-ական թվականներից, հեղափոխություն առաջացրին հարկաբյուջետային ոլորտում և վերածվեցին հարկային քաղաքականության անկախ և հզոր հատվածի: Էկոլոգիական հարկերի հիմնական նպատակը ոչ միայն և ոչ այնքան ֆիսկալ է (այդ իմաստով դրանք հաճախ «չեզոք են»), այլև հարկատուների վարքագծի խթանումն է որոշակի էներգախնայող և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների նկատմամբ և բնապահպանական արդյունավետության մակարդակի բարձրացումը: Միևնույն ժամանակ էկոլոգիական հարկերից ստացված մուտքերը նպաստում են բյուջետային միջոցների համախմբմանը, և այդ ճանապարհով կարող են կրճատվել եկամտային հարկերի դրույքաչափերը: Էկոլոգիական հարկման համակարգը մեծ նշանակություն ունի ոչ միայն բնապահպանական, այլև տնտեսական խնդիրների լուծման առումով: Էկոլոգիական հարկերը չափազանց արդյունավետ են, երբ դրանք պատշաճորեն նախագծված են և ճշգրտորեն են գանձվում՝ հաշվի առնելով բնապահպանական աղտոտման վնասակար ազդեցությունը և/կամ բնապահպանական վնասակար գործունեությունը:

Պաշտոնական մակարդակով Եվրոպական միությունը էկոլոգիական հարկերի օգտագործման նպատակահարմարությանը առաջին անգամ անդրադարձավ դեռևս 1973 թ.: Էկոլոգիական հարկերի գործադրման հիմքը «Աղտոտողը վճարում է» սկզբունքն է (Եվրոպական միության 1973 թ. բնապահպանության գործողությունների առաջին ծրագիրը)[2]: XX դարի 80-ականների երկրորդ կեսին Եվրոպական միության երկրներում բարձրացավ էկոլոգիական հարկերի և վճարների կիրառումն ակտիվացնող քաղաքականության երկրորդ ալիքը:

[2] Տե՛ս «Шестая программа действий Европейского сообщества в области окружающей среды». Комментарий // http://eulaw.edu.ru/documents/legislation/okr_sreda/ 6progr.htm

Կարևոր է շեշտել, որ այն ժամանակ բնապահպանական ոլորտում բարձրացվեց հարցի լուծման նոր հայեցակարգը. շրջակա միջավայրի կառավարման ոլորտում անցում կատարվեց տնտեսական ազդեցության մեթոդներին (նախկինում այդ քաղաքականությունը շեշտը դնում էր բացառապես դիրեկտիվ լծակների վրա՝ քվոտավորում և այլն): Սկիզբ դրվեց հարկային համակարգի էկոլոգիզացիային, որն անցյալ դարի 90-ականներին համընկավ ռեցեսիային, զբաղվածության հիմնախնդրի սրմանը և աճող մրցակցությանը: Հարկային համակարգի էկոլոգիզացիայի մեթոդաբանական հիմքը դարձավ այսպես կոչված «կրկնակի շահաբաժինների» կամ առավելությունների հայեցակարգը (double dividend, win-win solutions), համաձայն որի՝ շրջակա միջավայրի պահպանության խթանումը հիմնված է տնտեսական կարգավորման ու ռեսուրսախնայողության վրա և իրականացվում է էկոլոգիական հարկերի (կամ վճարների) ներդրման միջոցով: Բազմաթիվ հետազոտողների բարձրաձայնած «կրկնակի շահաբաժնի» տեսությունը (ներկայացված է ստորև) նշանակում է աշխատանքի ու կապիտալի վրա հարկային բեռի միաժամանակյա համամասնական նվազեցում, և դրանով իսկ այն խթանում է զբաղվածության աճը և նպաստում տեղական արտադրողների մրցունակության բարձրացմանը: Հարկ է նշել, որ էկոլոգիական հարկերը ներառում են հարկերը, տուժանքները և այլ տարբեր վճարներ, որոնք տարբեր երկրներում տարբեր կերպ են կոչվում: Մինչդեռ հարկերի և նման վճարների միջև առկա են նաև մեթոդական արմատական տարբերություններ: Հարկերը դասական իմաստով ոչ նպատակային պարտադիր վճարներ են և գանձվում են եկամտի առկայության կամ որոշակի գործունեություն կամ գործարքներ իրականացնելու դեպքում: Ի տարբերություն դասական հարկերի՝ բազմաթիվ երկրներում ավտոմեքենաների վառելիքի համար գանձվող վճարները հիմնված են «Աղտոտողը վճարում է» սկզբունքի վրա: Այս դեպքում նկատի ունեն մթնոլորտի որակի վատթարացումը. վերջին տարիներին այն դիտվում է որպես գլոբալ տաքացման գործոն: Այսպիսով, նման հարկերը նպատակային են, այսինքն՝ հարկատուները աղտոտման իրավունք են ստանում, կամ նման աղտոտման համար գանձված վճարները պետք է ուղղվեն շրջակա միջավայրի աղտոտման վնասի մասնակի փոխհատուցմանը: Այս առումով կարող ենք նշել, որ հարկի նման սահմանումը և «էկոլոգիական հարկ» տերմինը ներքին հակասության մեջ են ‹‹հարկ›› հասկացության հետ, քանի որ էկոլոգիական հարկերը, որպես կանոն, ծառայում են բնապահպանական ծախսերի փոխհատուցմանը ռեսուրսներ օգտագործողների կողմից: Այսպիսով, էկոլոգիական հարկերը մեթոդաբանական առումով նպատակային վճարներ են. վճարողը իրավունք է ստանում շրջակա միջա-

վայրին վնաս պատճառելու կամ բնական ռեսուրսներ օգտագործելու: Էկոլոգիական հարկերի ու վճարների և հարկերի միջև գոյություն ունի նաև մեկ այլ մեթոդական տարբերություն, որը կապված է վճարի հայեցակարգային նշանակության հետ: Հարկերը՝ որպես ֆիսկալ գործիք, ուղղվում են միասնական բյուջե: Էկոլոգիական հարկերն ու վճարները ունեն կոնկրետ նպատակային նշանակություն և, որպես կանոն, կուտակվում են բյուջեի հատուկ ենթաֆոնդերում կամ արտաբյուջետային ֆոնդերում: Սակայն կան նաև բացառություններ, մասնավորապես՝ ավտոմոբիլային վառելիքի վրա սահմանված հարկը, որին բնորոշ են դասական հարկի հատկանիշները, քանի որ այն սովորաբար ուղղվում է ընդհանուր բյուջե: Չնայած մեթոդաբանական տարբերությունների առկայությանը՝ իրավակիրառության մեջ կամ գիտական հետազոտություններում նշված մեթոդաբանական տարբերությունները անտեսվում են, այսինքն՝ «էկոլոգիական հարկեր, վճարներ» կատեգորիան հավասարեցվում է դասական հարկերին, և դրանք օգտագործվում են որպես հավասար կատեգորիաներ կամ հոմանիշներ: Այդ հասկացությունների նման հավասարեցման համար կարևոր գործոն է նաև էկոլոգիական հարկերի միջոցով դասական հարկերի ֆիսկալ ազդեցության փոխարինումը:

Հարկային բարեփոխումների էկոլոգիզացիայի մոտիվացիոն շարժիչն այն էր, որ տնտեսական խթանների համակարգը կձևափոխվի այնպես, որ հարկային բեռը չճնշի արտադրության գործոնները և ճնշում գործադրի բացառապես արտադրության բնապահպանական բացասական ազդեցությունների վրա[3]: Դրա վրա է կառուցվել «կրկնակի շահաբաժինների» կամ առավելությունների վարկածը, այսինքն՝ խնդիր է դրվում միաժամանակ ստանալ տնտեսական օգուտներ ու բարելավել շրջակա միջավայրի պահպանության վիճակը: Հարկային համակարգի էկոլոգիզացիայի կարևոր գիտական պնդումներից է (պոստուլատներից է) դրա չեզոքության պահպանումը, ինչը նշանակում է, որ էկոլոգիական հարկերի եկամուտները աշխատանքի և կապիտալի վրա դրվող հարկերի նվազեցման աղբյուր են դառնալու, իսկ վերջիններս գնահատվում են որպես ազատ շուկան խեղաթյուրող գործոններ: Որպես հետևանք այն պետք է դրական ազդեցություն ունենա զբաղվածության ու ներդրումների միտումների վրա: «Կրկնակի շահաբաժիններ» վարկածն առաջին անգամ առաջարկել է Տալոկը 1967 թ. «Գերազանցող առավելություններ» վերնագրով հոդվածում: Առաջին շահաբաժինը կամ առավելությունը հանգում է բարեկեցության մակարդակի բարելավմանը, որն արդյունք է շրջակա միջավայրի բարելավման (նվազում են աղտոտումները), երկրորդ պայմանական շահա-

[3] Տե՛ս **Боске Б**.Экологизация налоговой системы в России. М., 2001, 116 էջ // http://wwf.ru/resources/publ/book/23, էջ 25:

բաժինը կամ առավելությունը ևս պայմանավորված է բարեկեցության բարելավմամբ, ինչը հանգում է հարկային համակարգի եկամուտների ստացման աղավաղումների կրճատմանը: Տալոկը նշում էր, որ էկոլոգիական հարկերը (կամ աղտոտման համար վճարվող հարկերը) պետք է դառնան պետական բյուջեի հիմքը, և դրանց պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել, քանի որ դրանք ունեն երկակի գործառույթ. եկամուտներ են ապահովում բյուջեի համար և նվազեցնում են բացասական արտաքին ազդեցությունները: Այդ գաղափարը ուշադրության չէր արժանանում մինչև անցյալ դարի 90-ականների սկիզբը, երբ կլիմայի փոփոխության խնդիրը սևեռվեց բնապահպանական հարկերի վրա: Տալոկի սկզբունքը հետագայում իրենց զինանոց ներառեցին բազմաթիվ հետազոտողներ. աղտոտման հարկը կարող է փոխհատուցել ազատ ձեռնարկատիրության աշխատանքի և կապիտալի հարկերի աղավաղումները՝ «կրկնակի շահութաբաժնի» սկզբունքը: Միևնույն ժամանակ բարելավվում է շրջակա միջավայրի որակը, և նվազեցվում են «աղավաղող» հարկերը: Այդ հետազոտողների շարքում կարելի է նշել Ն. Ֆուիդջիվարային[4], Դ. Ֆուլերտոնին, Գ. Մետկլաֆին[5]: Նրանք նշում են, որ հարկային աղավաղումները նվազեցնում են շուկայական տնտեսության արդյունավետությունը, և հաշվարկները ցույց են տալիս, որ լրացուցիչ մեկ դոլարի եկամուտը մասնավոր հատվածի վրա առաջացնում է շուրջ 1,35 դոլարի հարկային բեռ, 35 ցենտի տարբերությունը հենց «ավելցուկային բեռն է»: Ի տարբերություն դրա՝ աղտոտման հարկը կարող է բարձրացնել մասնավոր հատվածի արդյունավետությունը: Այսպիսով, առաջին, շահաբաժինը կամ առավելությունը հանգեցնում է ավելորդ հարկային բեռի նվազեցման: Վերը նշված հեղինակները շեշտում են, որ կրկնակի շահաբաժինների վարկածը չի կարող կարգավորվել ընդհանուր հիմքով: Որոշակի հանգամանքներում անցումը էկոլոգիական հարկերին կարող է բարելավել շրջակա միջավայրը և նվազեցնել հարկային համակարգի ընդհանուր բեռը: Այլ դեպքում, օրինակ, նման մոտեցումը կարող է մեծացնել հարկային համակարգի բեռը: Յուրաքանչյուր բարեփոխման վերաբերյալ պետք է դատել դրա արժանիքներով: Երկրորդ, ըստ հեղինակների մոտեցման՝ հարկի եկամուտներ ստանալու կարևորության շեշտումը տեղին չէ: Շրջակա միջավայրի և աշխատանքի առաջարկի վրա հնարավոր է համարժեքորեն դրսևորվի երեք տեսակի ազդեցության ռազմավարություն: Ռազմավարության մի տեսակը կարող է բարձրացնել բնապահ-

[4] Տե՛ս **Noriko Fujiwara, Jorge Núñez Ferrer** and **Christian Egenhofer,** The Political Economy of Environmental Taxation in European Countries, p.6, www.mercury.ethz.ch/.../245_ Environmental+Taxati

[5] Տե՛ս **Fullerton Don, Gilberte E. Metcalf,** Environmental taxes and the double-dividend hypothesis: did you really expect something for nothing?, http://scholarship.kentlaw.iit.edu/cgi/viewcontent.cgi?article=3112&context=cklawreview

պանական բաղադրիչի եկամուտները, մյուս դեպքում նման եկամուտները նվազում են, իսկ երրորդ դեպքում ստացված եկամուտները դրա հետ կապված չեն: Ընդհանուր առմամբ՝ 1990-ականների կեսերին ակտիվացան «կրկնակի շահաբաժինների» բացարձակությունը կասկածի տակ դնող գիտական տեսակետները: Մասնավորապես, դրանց շարքին կարելի է դասել Լ. Գուդլերի[6] և Պարիի[7] տեսական ու գործնական մոդելները, որոնցով չհերքվեց «կրկնակի շահաբաժնի» դրսևորման հնարավորությունը, սակայն կասկածի տակ դրվեցին հարկային համակարգի կառուցվածքի չեզոքության ենթադրությունն ու նախապատվությունը: «Կրկնակի շահաբաժինների» կամ առավելությունների վարկածը Մայքլ Պորթերի վարկածի համեմատ կարելի է համարել ավելի երկչոտ. վերջինիս պնդմամբ՝ բնապահպանական բարեփոխումները բարձրացնում են սոցիալական ապահովության մակարդակը և բարելավում են մրցունակությունը: 1991 թ. Մայքլ Պորթերը առաջ քաշեց բիզնեսի վրա բնապահպանական կանոնակարգումների ազդեցության ռազմավարությունը, որը գլխիվայր շրջեց եղած պատկերացումները. նա պնդում էր, որ լավ մշակված բնապահպանական կարգավորումը կարող է բարձրացնել մրցունակությունը: Մինչ այդ ավանդական պատկերացումներով բնապահպանական կարգավորումը նշանակում էր կազմակերպություններից լրացուցիչ ռեսուրսների պահանջ և նրանց կարողությունների սահմանափակում, որը հանգեցնում է շահույթի նվազեցմանը: Մրցունակության պահպանման նպատակների համար բնապահպանական նորմերի դերի վերաբերյալ հայտնի ուսումնասիրության մեջ Մ. Պորտերը և Կլաս վան դեր Լինդեն 1995 թ. նշում են, որ նախորդ բնապահպանական կանոնակարգումների մեծ մասում խախտվել են մրցունակության վրա դրական ազդեցության սկզբունքները: Ավանդական դիրեկտիվ քաղաքականության կամ հրամայական հսկողական կամ քվոտավորման չափորոշիչների փոխարեն առաջարկվում էր օգտագործել շուկայական խթաններ, որոնք նաև կօգնեն զսպելու և վերահսկելու ծախսերը: Շուկայական գործիքակազմի օգտագործմանը առաջնայնություն տալը բնապահպանական կարգավորման գործում վկայում է բնապահպանական բարեփոխումների հիմնավորված լինելու մասին: Հեղինակները կարևորեցին բնապահպանության կարգավորման վեց նպատակները. 1) ուղղակի ուշադրություն ռեսուրսների անարդյունավետ օգտագործմանը, 2) կորպորատիվ իրազեկություն և տեղեկություն հավաքելու աճ, 3) բնապահպանական խնդիրների համար առավել ամբողջական ծրագրի ապահո-

[6] Տե՛ս **Lowrence H. Goulder,** Environmetal Policy Making in Second Best Settings, http://www.owlnet.rice.edu/~econ480/readings/goulder.pdf

[7] Տե՛ս **Ian Parry, Antonio Bento,** Tax Deduction, Environmental Policy, and Double Dividend Hypothesizes, https://books.google.am/books?id=4asR3x11sEsC&pg=PA1&lpg=PA1&dq=Parry,+Environmental+tax+double+divid

վում, 4) կազմակերպական իներցիայի հաղթահարում ու ստեղծագործական մտածողության խթանում, 5) կրթության որակի բարելավում այն նպատակով, որ կարճաժամկետ կորուստները փոխակերպվեն երկարաժամկետ շահույթի, 6) կարգավորիչ փոփոխությունների բացահայտում, որոնք միտված պետք է լինեն ապահովելու նորարարական լուծումների փոխհատուցումը[8]:

Եվրոպական հանձնաժողովի 1993 թ. «Բնապահպանական վտանգի չեզոքացման մասին» փաստաթղթի համատեքստում «կրկնակի շահաբաժինների» փաստարկը վերաբերում էր նաև մրցունակության բարելավմանը և հանգում էր այն բանին, որ ընդհանուր արդյունավետության բարելավման համար լավ է ունենալ «վատ» բնապահպանական միջոցառումներ, քան «լավ» միջոցառումներ՝ ապրանքների (աշխատանքների) վերաբերյալ: Բազմաթիվ տնտեսագետներ բացարձակապես չէին ընկալում «ձրի ճաշը», որը դրված էր «կրկնակի շահաբաժինների» փաստարկի հիմքում, և բնապահպանական քաղաքականության անհաղթահարելիության հռետորաբանությունը, որը կիրառվում էր հետևորդներ ներգրավելու համար: Այդ առումով էկոլոգիական հարկերին և «կրկնակի շահաբաժնի» խնդրին անդրադարձավ Գուլդերը 1995 թ. և նույնպես նշեց, որ գործնական առումով «կրկնակի շահաբաժնի» տեսությունը բացարձակ չէ: Նա առաջարկեց տարբերակել «կրկնակի շահաբաժինների» ուժեղ և թույլ փաստարկները: Գուլդերի դիրքորոշումը հանգում է «կրկնակի շահաբաժինների» փաստարկների երեք տարբերակների: Առաջին՝ ուժեղ տարբերակով բնապահպանական հարկը փոխարինում է աղավաղող այլ հարկերին և օգնում է բարելավել սոցիալական ապահովումը. այդ մեկնաբանության կողմնակիցն էր Պիրսը: Երկրորդ՝ թույլ տարբերակով բնապահպանական հարկերը պարզապես կենտրոնանում են եկամուտների վերարտադրման վրա (հեղինակը նշում է, որ էկոլոգիական հարկերի օգտագործումը այլ խեղաթյուրող հարկերի նվազեցման համար ավելի լավ է, քան էկոլոգիական հարկերի մեկանգամյա գանձումը): «Կրկնակի շահութաբաժնի» երրորդ՝ միջանկյալ սցենարով ընդհանուր բարեկեցությունը կբարելավվի էկոլոգիական հարկային բարեփոխումների շնորհիվ, որը կախված է հարկի կոնկրետ խեղաթյուրող հատկություններից և փոխարինվում է էկոլոգիական հարկով[9]:

Հետագայում Բովենբերգի և Դե Մուիջիի 1994 թ. ուսումնասիրություններում տեսակետ հնչեց, որ պետական ֆինանսների դիրքերից առկա է բնապահպանական հարկերի ինտերակտիվ ներգործությունը՝ ի հակակշիռ էկոլոգիական հարկերի բարեփոխումների վերարտադրվող

[8] Տե՛ս **Michael E. Porter, Claas van der Linde,** Green and Competitive: Ending the Stalemate, http://www.uvm.edu/~gflomenh/ENRG-POL-PA395/readings/Porter_Linde.pdf

[9] Տե՛ս **Lawrence H. Goulder,** Environmental Taxation and Double Divident: A Reader's Guide, http://link.springer.com/article/10.1007%2FBF00877495#page-2

եկամուտների մոտեցման: Այս հետազոտողները հերքեցին, որ էկոլոգիական հարկերը ոչ թե թեթևացնում են, այլ ինչ-որ չափով բարդացնում են հարկման խաթարված արդյունքը, եթե նույնիսկ էկոլոգիական հարկերի եկամուտները կարող են նվազեցնել ավանդական աղավաղող հարկերը[10]: «Կրկնակի շահաբաժնի» վարկածը չհերքվեց ամբողջությամբ, սակայն զգալիորեն սահմանափակվեցին դրա կիրարկման սահմանները: Օրինակ՝ Ա. Բովենբերգը մատնանշում էր առաջին և երկրորդ «շահաբաժինների» միջև հակասությունը և հղում էր անում այն բանին, որ էկոլոգիական հարկերը չեն կարող միաժամանակ լուծել այդ երկու խնդիրները: Ընդգծվում էր, որ «կրկնակի շահաբաժինների» դրսևորման համար հարկային համակարգը պետք է արդյունավետ լինի: Այդուհանդերձ, այս ոլորտում առավել բարդացված մոդելներով իրականացված հետագա հետազոտությունները առաջ քաշեցին ավելի շատ փաստարկներ հօգուտ «կրկնակի շահաբաժնի» վարկածի ճիշտ լինելու: Նույն Բովենբերգը հետագա ուսումնասիրություններում պնդում էր, որ հարկային բարեփոխումների էկոլոգիզացիան ոչ միայն բարելավում է շրջակա միջավայրի որակը, այլև բարձրացնում է զբաղվածության մակարդակը, այն դեպքում, երբ աշխատանքն ու ռեսուրսները հեշտությամբ փոխարինում են միմյանց որպես արտադրության գործոններ, ընդ որում, արտադրական գործառույթում ամրագրված մասնաբաժնի գործոնը մեծ է, իսկ աղտոտման հարկերն ու շահութահարկի սկզբնական չափերը փոքր են[11]: Բ. Բոսկեն, խոսելով «կրկնակի շահաբաժնի» տեսական մոդելի մասին, վկայակոչելով նույն Բովենբերգին, Ստիգլիցին և ուրիշների, նշում էր վեց կարևոր փաստարկ հօգուտ դրա գործունակության. 1) այդ տեսական մոդելները հաշվի չեն առնում հասարակության բարեկեցության որակի բարելավումը, որը բխում է շրջակա միջավայրի բարելավումից, 2) էկոլոգիական հարկերի տնտեսական «շահութաբաժինը» պարտադիր չէ, որ լինի դրական. այդ առումով կարևոր է առաջին բնապահպանական «շահաբաժնի» արժեքը և մեծությունը, 3) էկոլոգիական հարկերի բարեփոխումների կանխատեսելիությունը (նախապես դրանց հայտարարումը, աստիճանական և համակարգված իրականացումը, միջազգային մակարդակով համակարգումը) նվազեցնում է էկոլոգիական հարկերի տնտեսական ծախսերը, 4) էկոլոգիական հարկերի եկամուտները պետք է համապատասխանաբար փոխհատուցեն և նվազեցնեն «աղավաղող» հարկերի՝ աշխատանքի և կապիտալի հարկերը, և բյուջեում չվերաբաշխվեն

[10] Տե՛ս **A. Lans Bovenberg, Ruud A. De Mooij,** Environmental Levies and Distortionary Taxation, https://www.vwl.uni-wuerzburg.de/fileadmin/12010500/user_upload/skripte/ws08/Vertiefung_Steuern/BovenberdDeMoij.pdf

[11] Տե՛ս **A. Lans Bovenberg**, Eenvironmental taxesdouble dividend, http://link.springer.com/article/10.1023%2FA%3A1006836720884#page-2

բնակչության նպատակային վճարումների համար, 5) «կրկնակի շահաբաժինների» մեծության գնահատականները որոշակիորեն տարբերվում են, և կասկածներ կան հենց դրա գոյության փաստի առնչությամբ: Տարբեր հարկերի բարդ փոխազդեցությունը հանգեցնում է այն բանին, որ որոշ հարկերի աղավաղող ազդեցության կրճատումը կարող է բարձրացնել մյուս հարկատեսակների տնտեսական կորուստները, 6) առավել կարևոր նկատառումը այն է, որ «կրկնակի շահաբաժնի» վերաբերյալ վեճը չի կարող լուծվել զուտ տեսականորեն: Էկոլոգիական հարկերի բարեփոխումների յուրաքանչյուր հատուկ տարբերակ եզակի է և հանգեցնում է տարբեր «շահաբաժինների» կամ առավելությունների, որի մեծությունը առաջին հերթին կախված է մինչ այդ գոյություն ունեցող հարկային պայմաններից, ներդրվող բնապահպանական հարկերի տեսակներից, և այն բանից, թե ինչպես են օգտագործվում դրանցից հավաքված եկամուտները: Հետևաբար՝ յուրաքանչյուր դեպք պետք է վերլուծվի առանձին: Էկոլոգիական հարկերի առումով Ջ. Ստիգլիցը 2014 թ. շեշտում է՝ ավելի լավ է հարկել վատ բաները (աղտոտումը), քան լավ բաները (աշխատանքը)[12]: Շուկայում «արտադրվում են» չափազանց շատ «վատ բաներ», օրինակ՝ թունավոր թափոններ, և չափազանց քիչ «լավ բաներ», օրինակ՝ հիմնարար հետազոտություններ: Էկոլոգիական հարկերը կամ «ճշգրտող հարկերը» միևնույն ժամանակ բարձրացնում են տնտեսական արդյունավետությունը և եկամուտները՝ այդպիսով ապահովելով կրկնակի օգուտ: Ստիգլիցի կարծիքով, էկոլոգիական հարկերի եկամուտների ամենակարևոր պոտենցիալ աղբյուրը ածխածնի հարկն է, ինչը կկանխի ածխածնի քառօքսիդի (CO_2) և այլ «ջերմոցային գազերի» արտանետումները, որոնք նպաստում են կլիմայի փոփոխությանը: Էկոլոգիական հարկերի պոտենցիալ եկամուտները «օպտիմալ» մակարդակում պետք է համապատասխանեն (գնահատման առումով) աղտոտման սոցիալական արժեքին, և այդօրինակ գնահատման դեպքում էկոլոգիական հարկերի պոտենցիալը, ըստ Ստիգլիցի, հսկայական է: Ինչպես նշվեց վերը, վերջին երկուսուկես տասնամյակում՝ սկսած անցյալ դարի 90-ական թվականներից, եվրոպական երկրները մշտապես վարում են էկոլոգիական հարկման ակտիվ քաղաքականություն: Այս բարեփոխումները միաժամանակ ուղղված են և՛ էներգախնայողության ու բնապահպանական միջոցառումների խթանմանը, և՛ հարկային բեռը կորպորատիվ եկամուտների և անհատական հարկերի ոլորտից փոխադրում են էկոլոգիական հարկերի ոլորտ, որն անմիջականորեն արտացոլվում է էներգիայի սպառման մակարդակի ու բնապահպանական իրավիճակի ա-

[12] Տե՛ս **Joseph E. Stiglitz**, Reforming Taxation to Promote Growth and Equity, May 28, 2014, http://rooseveltinstitute.org/sites/all/files/Stiglitz_Reforming_Taxation_White_Paper_Roosevelt_Institute.pdf

ռանձին չափորոշիչների վրա: Եվրոպական և ՏՀԶԿ-ի զարգացած երկրներում էկոլոգիական հարկերը վաղուց դուրս են եկել բնապահպանական ծրագրերի խթանման նպատակների նեղ շրջանակից ու վերածվել են հարկային համակարգի էական բաղադրիչի և հետևաբար՝ հարկային բեռի: Ինչպես նշվեց, էկոլոգիական հարկերով որոշ չափով փոխարինվեց եկամտային հարկերի մասնաբաժինը, այդ իսկ առումով էկոլոգիական հարկերը էական ազդեցություն ունեցան հարկերի ընդհանուր կառուցվածքի վրա: Էկոլոգիական հարկերի սկզբնական ներդրումը նպատակ ուներ ուժեղացնել նավթամթերքների սպառման համար հարկային բեռը և ռեսուրսներ գտնել բնապահպանական հիմնախնդիրների լուծման համար՝ միաժամանակ ավելացնելով բյուջեի եկամուտները: Եվրոպական հանձնաժողովը ԵՄ-ի շրջանակներում բազմիցս հարց է բարձրացրել էկոլոգիական հարկերի ներդաշնակեցման վերաբերյալ: Դեռևս 1991 թ. Եվրոպական հանձնաժողովը ԵՄ խորհուրդ դիրեկտիվ մտցրեց էներգակիրների միասնական հարկի վերաբերյալ, որի նպատակն էր կրճատել ածխածնի քառօքսիդի (CO_2) արտանետումները և դրանով իսկ նվազեցնել մթնոլորտի աղտոտվածությունը: Հարկի ազդեցությունը հանգում էր էներգիայի առավել արդյունավետ օգտագործման խրախուսմանը՝ սպառողներին դրդելով օգտագործել էկոլոգիապես առավել մաքուր վառելիք:

Էկոլոգիական հարկերի բարեփոխումների ուղղությամբ հատկապես օրինակելի էին Սկանդինավյան երկրների քայլերը, որոնք հաջողությամբ վերակազմավորեցին իրենց հարկային համակարգը «կանաչ» կամ էկոլոգիական հարկերի ներքո: Առաջիններից մեկը էկոլոգիական հարկեր ներդրեց Ֆինլանդիան, որը սահմանեց «ածխածնի հարկը» 1990 թ., իսկ 1996 թ.՝ ԵՄ-ին անդամակցելուց հետո, բարեփոխումների ենթարկեց էներգիայի սպառման բոլոր հարկային ռեժիմները՝ բոլոր տեսակի վառելիքների համար սահմանելով առավել հավասարեցված հարկում: ԵՄ-ի կանոնների պահանջների համաձայն՝ «ածխածնի հարկից» ազատելու ռեժիմը տարածվում էր տորֆի վրա, իսկ բնական գազի համար սահմանված էր զեղչ՝ 50 %-ի չափով: Նորվեգիան և Շվեդիան «ածխածնի հարկը» սահմանեցին 1991 թ., Դանիան՝ 1992 թ.: Նորվեգիան «ածխածնի հարկը» տարածեց ածխի և կոքսի վրա, որը օգտագործվում էր էներգետիկայում, և հատուկ հարկատեսակ մտցրեց ծծումբ պարունակող վառելիքի վրա: Բնական գազի վրա «ածխածնի հարկը» չէր կիրառվում, քանի որ երկրում գազի սպառումը չափազանց սահմանափակ էր: Առավել համապարփակ բարեփոխումներ իրականացրեց Շվեդիան՝ ներդնելով էկոլոգիական վճարներ և ԱԱՀ, միաժամանակ զգալիորեն նվազեցնելով շահութահարկի տոկոսադրույքը: Սահմանվեցին վճարումներ ածխածնի քառօքսիդի, ծծմբի և ազոտի օքսիդների արտանետումների համար, դրա հաշվին նվազեցվե-

ցին նավթամթերքի համար սահմանված հարկերը: Այս սցենարի կիրառությամբ շատ նավթամթերքների մանրածախ գները մնացին գրեթե նույն մակարդակին, զգալիորեն ավելացավ բնական գազի, ածխի և էներգակիր մազութի գինը: Այսպիսով, ԵՄ երկրներում նշմարվեց տեսանելի միտում. հարկային բեռը եկամտային հարկերի ոլորտից տեղափոխվեց բնական ռեսուրսների արտադրության և սպառման հարկերի ոլորտ: Միևնույն ժամանակ, էկոլոգիական հարկերի ցանկի ընդլայնմանը զուգահեռ, տնտեսական խթաններ ստեղծվեցին շրջակա միջավայրի վրա արտադրության և սպառման բացասական ազդեցությունը նվազեցնելու համար: Նեղ նպատակային էկոլոգիական հարկերը դարձան բնույթով ավելի ընդհանուր բնապահպանական կողմնորոշում ունեցող հատուկ ծրագրերի իրագործման համար:

Աղյուսակ 1

Բոլոր էկոլոգիական հարկերը և դրանց ենթախմբերը Եվրոպական միության երկրներում (ԵՄ 28, 2013 թ.)[13]

	մլն եվրո	% էկոլոգիական հարկերից	% ՀՆԱ-ից	% բոլոր հարկերից և սոցվճարներից
Բոլոր էկոլոգիական հարկերը	331378	100	2.5	6.3
Էներգիայի հարկերը	248496	75.0	1.8	4.7
Տրանսպորտային հարկերը	66617	20.1	0.5	1.3
Աղտոտման և ռեսուրսների օգտագործման համար հարկերը	16266	4.9	0.1	0.3

Աղյուսակի տվյալները վկայում են Եվրամիության երկրներում էկոլոգիական հարկերի զգալի դերակատարության և կառուցվածքի մասին: ԵՄ երկրներում 2013 թ. ընդհանուր հարկային եկամուտների 6,3 տոկոսը բաժին էր ընկնում էկոլոգիական հարկերին և վճարներին, որոնք հիմնականում վճարում էին ավտոմոբիլային վառելիքից օգտվողները, իսկ էկոլոգիական հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ բավականին շոշափելի մակարդակի էր՝ 2,5 տոկոս: ՀՀ-ում պատկերը հետևյալն է՝ էկոլոգիական հարկերի տեսակարար կշիռը՝ ներառյալ բնօգտագործման և բնապահպանության հարկերը, 2016 թ. ՀՀ պետական բյուջեում բոլոր տիպի հարկերից կազմում են 3,6 տոկոս, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ՝ 0,64 տոկոս[14], իսկ առավել էականը այն է, որ դրանք

[13] Տե՛ս «Eurostat, Total environmental tax revenue by type of tax, EU-28, 2013» YB15.png, Source Eurostat (online data code.env_ax_tax_) http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/File:Total_environmental_tax_revenue_by_type_of_tax,_EU-28,_2013_YB15.png

[14] Հաշվարկները կատարվել են 2016 թ. ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների հիման վրա:

բացառապես ֆիսկալ բնույթի են և չեն վերածվել էներգախնայող և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների և բնապահպանական արդյունավետության մակարդակի բարձրացման խթանիչ գործոնի:

Վառելիքի համար սահմանվող էկոլոգիական միասնական հարկը վաղուց ամրապնդվել ու գործում է Դանիայում և Հոլանդիայում: Ավելի խոշոր եվրոպական երկրները, այդ թվում՝ Ֆրանսիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Շվեյցարիան, սկսեցին հետաքրքրություն ցուցաբերել էկոլոգիական հարկերի և վճարների նկատմամբ՝ սկսած անցյալ դարի 90-ականների կեսերից, և շարունակում են ընդլայնել էներգասպառման նման հարկերի շրջանակը: Էկոլոգիական հարկերը շարունակում են տարածվել նոր ոլորտներում, որը հանգեցնում է նավթամթերքների սպառման վրա ճնշում գործադրելուն:

Անդրադառնանք ՀՀ կառավարության վերջին ձեռնարկումներին: ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 10-ի նիստում հավանության արժանացավ օրենսդրական փաթեթ, որով նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում, «Էներգետիկայի մասին», «Հարկերի մասին», «Շահութահարկի մասին», «Եկամտային հարկի մասին» օրենքներում: Սույն օրենսդրական նախաձեռնությամբ, որը ներառվել է ՀՀ ԱԺ օրակարգ, առաջարկվում է ապահովել վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների և էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման փոխհոսքերը, իսկ կարգավորման դաշտից հանել վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող էլեկտրական էներգիա արտադրող այն ինքնավար էներգաարտադրողներին, որոնց տեղակայանքների դրվածքային հզորությունը չի գերազանցում էլեկտրական էներգիայի տեղակայված իրենց սպառիչների ընդհանուր հզորությունը, բայց ոչ ավելի, քան 150 կիլովատտը: Համաձայն առաջարկված փոփոխությունների և լրացումների՝ նշված ինքնավար էներգաարտադրողները հարկման չեն ենթարկվի: Ընդ որում՝ դա վերաբերում է ինչպես տնտեսավարողներին՝ շահութահարկով, այնպես էլ ֆիզիկական անձանց՝ եկամտային հարկով: Օրենսդրական փաթեթի հիմնավորման մեջ նշվում է, որ այն ուղղված է ՀՀ-ում էներգախնայողության իրականացման և վերականգնվող էներգետիկայի զարգացման պետական քաղաքականության ու դրա իրագործման մեխանիզմների ապահովմանը՝ ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացմանը, ՀՀ տնտեսական և էներգետիկ անկախության ամրապնդմանը, ՀՀ էներգետիկ համակարգի հուսալիության բարձրացմանը, էներգախնայողությունը և վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող նոր արտադրությունների ստեղծմանը և ծառայությունների կազմակերպմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնածին ազդեցությունների նվազեց-

մանը: Այս նախաձեռնության հիմքով բոլոր ցանկացողները հնարավորություն կունենան տեղադրելու արևային մարտկոցներ, ստանալու էլեկտրաէներգիա սեփական կարիքների համար և վաճառելու արտադրված ավելցուկային էլեկտրաէներգիան: Մինչդեռ արևային էներգիայի համար ՀՀ-ում սակագին դեռևս չի սահմանվել: Ինչպես վկայում է միջազգային փորձը, դա էժան հաճույք չէ, սակայն կարող է հետգնվել մի քանի տարում:

Հարկ է նշել, որ սույն օրենսդրական նախաձեռնությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթներ չեն գործում: Ինքնավար էներգաարտադրողների էլեկտրաէներգետիկական համակարգին միացումը և էլեկտրաէներգիայի առքուվաճառքի պայմանագրի կնքումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից չեն իրականացվում հարկային օրենսդրության հետ կապված խնդիրների պատճառով: Ուստի օրենսդրական նախաձեռնությունների փաթեթում մասնավորապես նշվում է.

1) շահութահարկով և եկամտային հարկով հարկման նպատակով եկամուտ չեն համարվում՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից ստացվող հատուցման գումարները, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում՝ ինքնավար էներգաարտադրողների կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները,

2) շահութահարկով և եկամտային հարկով հարկման նպատակով ծախս չեն համարվում վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության հետ կապված ծախսերը:

Հարկային կարգավորման առումով կիրառվել է զրոյական կամ պարիտետի սկզբունքը, այն է՝ ոչ եկամուտ, ոչ ծախս, սակայն այս դեպքում հարց է առաջանում. ինչպե՞ս առանց ծախսերի ապահովել էներգետիկայի զարգացումը խթանող նոր այլընտրանքային հզորությունների ստեղծումը և դրանից ածանցվող վերը նշված դրական արդյունքները: Սույն օրենսդրական նախաձեռնության մեջ առկա է հարկային բաղադրիչը, սակայն դա չի նշանակում, որ ՀՀ-ն հարկային համակարգի էկոլոգիզացիայի նպատակային քաղաքականություն իրականացնելու նպատակ է հետապնդում: Այս քայլը առավելապես իրավիճակային է և առաջացել է վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող առանձին ինքնավար էներգաարտադրողների բողոքների հիման վրա առ այն, որ օրենսդրությամբ սահմանված կարգավորումները փաստորեն չեն գործում:

Եվրամիության, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միութ-

յան երկրների, մասնավորապես՝ ՌԴ-ի, Ղազախստանի և Բելառուսի փորձը ևս վկայում է, որ բոլոր երկրների տնտեսական քաղաքականության օրակարգում հարկային համակարգի էկոլոգիզացիան որոշակի առումով առկա է: Խնդիրն այն է, թե ինչ նպատակադրում ունեն այդ բարեփոխումները: ԵՄ երկրներում խնդիր է դրվել, որպեսզի էկոլոգիական հարկերի բարեփոխումը որոշակի ազդեցություն ունենա հարկային բեռի վերաբաշխման՝ կապիտալի ու աշխատանքի և այլ հարկերի վրա և չկրի բացառապես ֆիսկալ բնույթ: Այդ հարցը կարևոր է բոլոր երկրների համար՝ և՛ նրանց, որոնք արդեն իրականացրել են նման բարեփոխումներ, և՛ նրանց, որոնք պատրաստվում են դա անելու:

Վերը ներկայացվածից հետևում է, որ ՀՀ-ում անհրաժեշտ է ընդունել էկոլոգիական հարկային համակարգի հայեցակարգը՝ ելնելով ստորև նշվող գործոններից ու փաստարկներից:

1. ՀՀ-ն միացել է Եվրասիական տնտեսական միությանը և միևնույն ժամանակ շարունակում է ԵՄ-ի հետ ազատ առևտրի ռեժիմով անհատական համագործակցությունը: ԵՄ երկրներում հարկային համակարգի էկոլոգիզացիան իրականացվում է ավելի քան չորս տասնամյակ շարունակ և այժմ հարկային համակարգի անբաժանելի և կարևոր մասն է: Եվրասիական տնտեսական միության երկրները՝ ի դեմս Բելառուսի, Ղազախստանի և ՌԴ-ի, ակտիվորեն աշխատում են հարկային համակարգի էկոլոգիզացիայի ուղղությամբ: Ինչպես պետական կարգավորման այլ ոլորտներում, ՀՀ-ն այստեղ ևս պետք է կենտրոնանա այն արժեքների, չափորոշիչների և ստանդարտների վրա, որոնք ընդունված են տնտեսական այն տարածքում, ուր ՀՀ-ն ձգտում է ոչ միայն ներկա լինել, այլև ունենալ նախաձեռնողական դիրք:

2. Հարկային համակարգի էկոլոգիզացիան ճգնաժամային դրսևորումների հաղթահարման արդյունավետ միջոց է: 2009 թ. նոյեմբերին Եվրոպական միության սոցիալական կոմիտեն համաձայնեց Շվեդիայի այն դիրքորոշմանը, որ տնտեսական ճգնաժամը սպառնալիք է և միաժամանակ հնարավորություն՝ հրաժարվելու հարկային ավանդական մոդելից և զարգացնելու բնապահպանական առումով հարկային արդյունավետ ռազմավարություն, որն օգտակար է բոլորի համար՝ տնտեսությունը վերականգնելու, մրցունակությունը բարձրացնելու և նոր աշխատատեղերի ստեղծմանն օժանդակելու, միաժամանակ էներգետիկ բազան փոխակերպելու և արտանետումներն էականորեն նվազեցնելու առումով[15]:

3. ՀՀ-ում տուրիզմը հայտարարված է տնտեսական զարգացման առաջնահերթություն: Բնությունը պետք է ծառայի ներկայիս տնտեսա-

[15] Տե՛ս **Astrida Slavickiene, Vida Ciuleviciene**, Comparative assessment of environmental taxes in the European Union states, European Scientific Journal May 2014 edition vol.10, No.14, www.file:///C:/Users/User/Downloads/3387-9922-1-PB.pdf

կան շահերին և պահպանվի ապագա սերունդների համար: Հետևապես ՀՀ-ն պետական մակարդակով պետք է կողմնորոշված լինի էկոլոգիական միջավայրի պահպանման գործուն ու արդյունավետ քաղաքականությանը:

4. ՀՀ-ն միջազգային բնապահպանական 19-ը կոնվենցիաների և արձանագրությունների անդամ է, որոնցից 11-ը գլոբալ կոնվենցիաներ են: 1993 թ. ՀՀ-ն միացավ ՄԱԿ-ի՝ կլիմայի փոփոխության շրջանակային համաձայնագրին, իսկ 2002 թ.՝ Կիոտոյի արձանագրությանը, որը ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2005 թ.[16]:

5. Հատկապես ածխաջրածնային էներգետիկ սակավ ռեսուրսներ՝ նավթ և գազ չունեցող բոլոր երկրներում ժամանակակից էներգախնայող տեխնոլոգիաների օգտագործումը վաղուց դարձել է տնտեսական և բնապահպանական ազգային քաղաքականության կարևոր առաջնահերթություն: Այդ առումով ՀՀ-ի համար ևս դա ակնհայտ և առաջնահերթ խնդիր է:

6. Էկոլոգիական հարկերի քաղաքականությունը ունի ընդգծված բազմապատիկ (սիներգիկ) արդյունք, քանի որ էներգախնայողության և բնապահպանական վերարտադրող սարքավորումների ու տեխնոլոգիաների պահանջները առաջատար լուծումների օգտագործման և ինովացիաների արդյունք են բազմաթիվ ոլորտներում:

7. Էներգառեսուրսների և շրջակա միջավայրի արդյունավետ օգտագործման խթանումը իր հերթին ստեղծում է բնապահպանական ծրագրերի լուծման համար անհրաժեշտ ուղղակի սուբսիդավորման զգալի աճի և «հարկային ծախսերի» մեխանիզմի օգտագործման հնարավորություններ:

8. Էկոլոգիական հարկերի իրականացման քաղաքականությանը հակվածությունը երկրի պատրաստակամության ու կարողության ցուցիչ և չափման միավոր է՝ իշխանությունների կողմից գործնականում իրականացնելու կայուն զարգացման սկզբունքները և ստանձնելու ապագա սերունդների համար պատասխանատվություն:

9. ՏՀԶԿ-ի և ԵՄ-ի զարգացած երկրներում հարկային համակարգի էկոլոգիզացիան ունի կայուն և աճող միտում. դա նկատելի է նաև Եվրասիական տնտեսական միության երկրներում, որը վկայում է այն մասին, որ հարկային քաղաքականության այս ուղղությունը զարգացող և անցումային երկրների համար վաղ թե ուշ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կվերածվի ընդհանուր հարկային քաղաքականության բաղադրիչի, որին պետք է պատրաստվել նախապես, որպեսզի այն կյանքի կոչելը չլինի ինքնաբուխ, շտապողական և անարդյունավետ:

---

[16] Տե՛ս «ՀՀ մասնակցությունը միջազգային բնապահպանական համաձայնագրերին», ՀՀ բնապահպանության նախարարություն, http://www.mnp.am/?p=201

10. ՀՀ-ում հարկային համակարգի էկոլոգիզացիայի համար նպաստավոր պայմաններ են ստեղծվել բարեփոխումների նախորդ ժամանակահատվածում. զգալիորեն բարելավվել է հարկային վարչարարությունը, նվազել են տարբեր ռիսկերի դրսևորումները, այդ թվում՝ կոռուպցիոն ռիսկերի:

Կարելի է ենթադրել, որ հարկային համակարգի էկոլոգիզացիայի ընդդիմախոսները կառարկեն, որ շրջակա միջավայրի պահպանման ջանքերը և բարձր բնապահպանական չափորոշիչներին համապատասխանության պահպանումը պահանջում են մեծ ծախսեր, և, բացի դրանից, կոշտ սահմանափակումների ներմուծումը նվազեցնում է տնտեսական զարգացման և բարգավաճման հնարավորությունները: Սակայն ոլորտի փորձագետները զգուշացնում են տնտեսական զարգացման և խոհեմ բնապահպանական քաղաքականության հակադրման վնասակարության մասին: Այստեղ, մասնավորապես, կարելի է հիշեցնել Բենուա Բոսկեի հայտնի միտքը, որ երկրի տնտեսական զարգացման իրական ակտիվացման դեպքում չի կարող լինել տնտեսության զարգացման կամ շրջակա միջավայրի միջև այլընտրանք: Տնտեսական բարձր նպատակների հասնելու կառավարության սոցիալական ծրագրեր իրականացնելն անհնար է առանց ժամանակակից բնապահպանական չափորոշիչների ներդրման[17], իսկ «կեղտոտ» և հետամնաց տեխնոլոգիական լուծումների ներմուծումը ապագայում անխուսափելիորեն ծանր բեռ կդառնա տնտեսության համար, քանի որ ավելացնելու է տեխնոլոգիական ճեղքվածքը զարգացած երկրների համեմատ:

Բանալի բառեր – *էկոլոգիական հարկեր, հարկային էկոլոգիական բարեփոխումներ, էկոլոգիական հարկերի կրկնակի շահաբաժինը, հարկերի խեղաթյուրող ազդեցությունը*

АРА КАРЯН – ***Процесс экологизации налоговой системы РА.*** – В статье даётся обзор теории экологизации налоговой системы, показаны практические шаги стран Евросоюза в этом направлении. Рассмотрены законодательные инициативы в Армении, касающиеся налоговой системы, обоснована необходимость её экологизации.

Ключевые слова: *экологические налоги (эконалоги), экологическая реформа налогообложения, двойной дивиденд от эконалогов, искажающее влияние налогов*

ARA KARYAN – ***Ecologization Processes of the RA Tax System.*** – The article presents an insight into the theory of ecologization of the tax system, the steps taken by the EU countries in that respect. It observes the RA tax legislation initiatives taken on a spontaneous basis around this issue. The problem setting on the ecologization of the RA tax system has been substantiated.

Key words: *environmental taxes, environmental tax reform, double dividend of environmental taxes, distorting effect of taxes*

---

[17] Տե՛ս **Бенуа Боске**, Экологизация налоговой системы в России. М., 2001, էջ 116, http://wwf.ru/resources/publ/book/23, էջ 10:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ՎՈԼՈԴՅԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում շուկայական հարաբերություններին անցնելու առիթով կատարված տնտեսական վերափոխումներն ուղեկցվեցին նաև սոցիալական փոփոխություններով: Այսպես, դեռևս ԽՍՀՄ-ի կազմում Հայաստանը արտադրում էր 13-13,5 մլրդ ռուբլու հասարակական արդյունք, որը իր մեծությամբ առավել մոտ է համախառն ներքին արդյունքին (ՀՆԱ)[1]: Սակայն անհրաժեշտ է նշել, որ դա հաշվարկվում էր միայն նյութական արտադրության ոլորտում, իսկ սպասարկման ոլորտի բաժինը տնտեսության կառուցվածքում (ըստ զբաղվածների թվի) հասնում էր 29 %-ի[2]: Հետևաբար, եթե այդ էլ ավելացնենք, ապա կստանանք մոտ 18-18,5 միլիարդ ռուբլու ՀՆԱ կամ 13-13,5 մլրդ դոլար (1 դոլար=1,35 ռուբլի)[3]: Համեմատության համար նշենք, որ Հոլանդիայում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմում էր 8,4 հազար դոլար, իսկ Հայաստանում՝ 3,9 հազար դոլար[4]: Դրա հետ մեկտեղ՝ Հայաստանը այլ աղբյուրներից ստացած եկամուտներով սպառում էր 17 մլրդ դոլար, այսինքն՝ 25 %-ով ավելի, քան արտադրում էր: Հենց այդ գումարի՝ 13,5 մլրդ դոլարի հաշվին Հայաստանի բնակչությունը մեկ շնչին ընկնող սպառման մակարդակով (տարեկան 4900 դոլար) գրեթե հավասարվում էր Հունաստանին և Իսրայելին[5]: Սակայն շուկայական տնտեսության անցման սկզբնական շրջանում (1990-1994 թթ.) իրավիճակը խիստ փոխվեց: ԽՍՀՄ տնտեսական կապերի խզումը, արցախյան պատերազմը, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը, էներգետիկ ճգնաժամը և այլն հանգեցրին ՀՆԱ-ի կտրուկ նվազման (59 %): Այսպիսի պայմաններում Հայաստանի բնակչությունը ընկավ սոցիալական ծանր կացության մեջ: Վերափոխումների հետևանքով երկրում տիրում էր համատարած գործազրկություն և աղքատություն: Քաղաքական և տնտեսական անկախություն ձեռք բերած նորաստեղծ Հայաստանի Հանրապետության առջև ծառացան բազում սոցիալական խնդիրներ, որոնք պահանջում էին անհապաղ լուծում:

---

[1] Տե՛ս «Հայաստանի ժողովրդական տնտեսությունը տարեգիրք», Եր., 1987, էջ 8:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 17:
[3] Տե՛ս «Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում», Եր., 1999, էջ 278:
[4] Տե՛ս նույն տեղը, էջ 278-279:
[5] Տե՛ս նույն տեղը, էջ 279:

Երկրի սոցիալական հատվածը կազմված է մի շարք ճյուղերից: Սովորաբար անվանում են սոցիալական ենթակառուցվածքներ (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, բնակարանային-կենցաղային տնտեսություն), իսկ սոցիալ-մշակութային ոլորտը ներառում է գիտությունը, մշակույթը, հաղորդակցությունը և այլն: Այստեղ պահանջվում էին համապատասխան սոցիալական քաղաքականության մշակում և կիրառում:

Պետության սոցիալական քաղաքականության հիմքում, բնակչության սոցիալական պաշտպանությունից և սոցիալական ապահովությունից (հաշմանդամների և թոշակառուների, ծերերի, երեխաների և ընտանիքների օգնություն) բացի, ընկած է նաև եկամուտների քաղաքականությունը: Իհարկե, ազգային հաշիվների համակարգում (ԱՀՀ) կան տվյալներ ազգային եկամուտների բաշխման չափերի մասին, որոնք վերաբերում են ինստիտուցիոնալ հատվածներին՝ ըստ տնային տնտեսությունների: Սակայն դրանք հաճախակի լուսաբանվում են առանց սղաճի հաշվառման և բավական ուշացումներով: Վիճակագրական տվյալներում բացակայում են նաև անձնական օժանդակ տնտեսություններից ստացվող եկամուտների մասին տեղեկությունները:

Եկամուտների ուսումնասիրության և վերլուծության համար անհրաժեշտ է լուսաբանել, թե ինչպես են դրանք բաշխվում բնակչության տարբեր խմբերի միջև (եկամուտների դիֆերենցացում): Այն դրամական եկամուտների բաշխումն է ըստ 10 %-անոց կամ 20 %-անոց բնակչության խմբերի (ըստ դեցիլների կամ կվինտելների): Եկամուտների բարձր կենտրոնացումը վերին դեցիլում և եկամուտի ցածր չափը (մեծությունը) ներքևի դեցիլում ցույց են տալիս բնակչության եկամուտների բաշխման կտրուկ դիֆերենցացումը, այսինքն՝ թե վերին շերտի բնակչության եկամուտները քանի անգամ են գերազանցում ներքին շերտի եկամուտները: Բնակչության եկամուտների բաշխման մյուս ցուցանիշը Ջինիի ինդեքսն է, որը հաշվարկվում է 0-1 կամ 0-100 գործակցով: Ընդ որում՝ երկու ցուցանիշներն էլ հաշվարկվում են ըստ սպառողական ծախսերի (սպառումի):

Եթե դիտարկենք ըստ դեցիլային բաշխման սկզբունքի, ապա հետխորհրդային երկրներից ծախսերի տեսակետից ամենացածր դիֆերենցացումը (վերին շերտի հարաբերությունը ներքին դեցիլի նկատմամբ) ունեցել են Բելառուսը, Ղազախստանը և Ղրղզստանը (5,9-6,9 անգամ), իսկ ամենաբարձր դիֆերենցացումը՝ Ռուսաստանը, Վրաստանը և Թուրքմենստանը (12,2-15,2 անգամ): Իսկ եթե դիտարկենք ըստ Ջինիի ինդեքսի, ապա ծախսերի ամենափոքր դիֆերենցացումը ունեցել են Բելառուսը և Ուկրաինան: Այսպիսով, ըստ եկամուտների դիֆերեն-

ցացման տարբեր սոցիալ-տնտեսական մոդելների՝ նկատելիորեն տարբերվում են հետխորհրդային երկրները: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա եկամուտների բաշխման դիֆերենցացումով այն ունեցել է միջին մակարդակ: Սակայն պետք է նշել, որ այդ ցուցանիշը Հայաստանում ավելի բարձր է, քան հետխորհրդային մյուս երկրներում, քանի որ Հայաստանում ստվերային տնտեսությունը, հանձինս օլիգոպոլիաների, ունի մեծ տեսակարար կշիռ (30-50 %): Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ Հայաստանում բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալում աշխատանքային եկամուտների տեսակարար կշիռը նվազել է մոտ երեք անգամ: Դրանք դադարել են կենսամակարդակը ապահովելու հիմնական միջոց լինելուց: Եկամուտների հոդվածներից նշանակալից տեսակարար կշիռ ունեն ձեռնարկատիրությունից ստացված եկամուտները, արտասահմանյան մասնավոր տրանսֆերտները (22-37 %), սոցիալական վճարները, անձնական օժանդակ տնտեսությունից ստացված եկամուտները և այլն:

Աղյուսակ 1

Բնակչության եկամուտների դիֆերենցացումը հետխորհրդային երկրներում (1998-2008 թթ.)[6]

Երկրներ	Բնակչության ցածր եկամուտներ ունեցողների 10 %-ի բաժինը (ծախսեր)	Բնակչության բարձր եկամուտներ ունեցողների 10 %-ի բաժինը (ծախսեր)	Ջինիի ինդեքսը
Ռուսաստան	2,4	30,6	0,423
Բելառուս	3,2	26,4	0,297
Մոլդովա	4,7	46,8	0,332
Ուկրաինա	3,9	23,0	0,281
Ադրբեջան	3,1	29,5	0,365
Հայաստան	3,6	29,0	0,338
Վրաստան	2,0	30,3	0,404
Ղազախստան	3,0	25,9	0,339
Ղրղզստան	3,8	24,3	0,303
Տաջիկստան	3,3	25,6	0,326
Թուրքմենստան	2,6	31,7	0,408
Ուզբեկստան	2,8	29,6	0,368
Լատվիա	2,6	29,1	0,377
Լիտվա	2,7	27,7	0,360
Էստոնիա	2,5	27,6	0,358

Եկամուտների անհավասարությունը և բևեռացումը հատուկ են բոլոր երկրներին, այդ թվում նաև զարգացած երկրներին: Եկամուտների բաշխման անհավասարությամբ աչքի են ընկնում հատկապես Լատինական Ամերիկայի երկրները: Օրինակ՝ Բրազիլիայում շուկայա-

[6] Տե՛ս «Рассия в цифрах, краткий статический сборник». М., 2009, էջ 123:

կան վերափոխումների ժամանակ ամենահարուստ 20 % բնակչության տարեկան եկամուտները 32 անգամ գերազանցում են 20 % ամենաաղքատ բնակչության եկամուտները: Գրեթե նման իրավիճակ է Հայաստանում:

Եկամուտների բաշխման նման բևեռացման պայմաններում նույնիսկ տնտեսական աճն անմիջականորեն դեր չի կարող խաղալ, և սոցիալապես խոցելի խմբերի հետ միասին ստորին դեցիլներում են հայտնվում նաև բարձր որակավորում ունեցող մասնագետները: Բնակչության նման բևեռացումը խոսում է այն մասին, որ Հայաստանում դեռևս չի ձևավորվել միջին խավ, ինչը ունի ոչ միայն սոցիալական, այլև քաղաքական նշանակություն: Հետևաբար, պետությունը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցառումներ եկամուտների բաշխման ոլորտում որոշակի համահարթեցման համար: Սակայն դա պետք է կատարվի տրամաբանված, քանի որ չափից դուրս համահարթեցումը (հավասար բաշխումը) կթուլացնի աշխատանքի ակտիվությունը և արտադրության արդյունավետությունը:

Եկամուտների բաշխման ճիշտ քաղաքականությունը էական նշանակություն ունի աղքատության հաղթահարման գործում: Այն իրականացվում է տարբեր մեթոդներով, ուղղություններով և միտված է երկրներում աղքատների թվի կրճատմանը: Աղքատության բաժինը հաշվելու համար տարբեր երկրներում օգտագործվում են տարատեսակ ցուցանիշներ, ինչպես օրինակ՝ կենսապահովման անհրաժեշտ նվազագույն չափը, որը սպառողական զամբյուղն է (սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների նվազագույն քանակը), որը անհրաժեշտ է մարդու առողջության պահպանման և նրա կենսագործունեությունը ապահովելու համար: Օրինակ՝ Ռուսաստանում այն կազմում է 5198 ռուբլի, իսկ աղքատ բնակչության տեսակարար կշիռը 14 տոկոս է: Հայաստանում աղքատների տեսակարար կշիռը բնակչության կազմում 34.1 տոկոս է: Տարբեր երկրների միջև աղքատությունը համեմատելու համար օգտագործվում է աղքատության պայմանական գիծ (շեմ): Համաշխարհային բանկը հաշվարկում է օրական 11 և 4 դոլար մեկ մարդու համար: Հետխորհրդային երկրների համար նպատակահարմար է օգտագործել օրական 4 դոլարը, որի դեպքում ունենում ենք աղյուսակ 2-ի պատկերը:

Մինչև 2008 թ. Հայաստանում աղքատների տեսակարար կշիռը իջավ 22.5 տոկոսի, սակայն 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո այն կրկին աճեց: Ներկայումս բնակչության երեք մարդուց մեկը աղքատ է:

Աղյուսակ 2

Հետխորհրդային երկրներում օրական 4 դոլարից ցածր ունեցող երկրների բաժինը բնակչության ընդհանուր թվի մեջ (2000-2014 թթ., %)[7]

Երկրներ		Երկրներ	
Ռուսաստան	45.3	Ղրղզստան	72.5
Բելառուս	15.9	Տաջիկստան	84.7
Մոլդովա	64.7	Լատվիա	26.3
Ուկրաինա	44.7	Լիտվա	36.0
Ադրբեջան	85.9	Էստոնիա	33.2
Հայաստան	80.5	Վրաստան	61.9
Ղազախստան	56,7		

Սոցիալական քաղաքականության կարևոր բնութագրիչ է նաև մարդկային կապիտալի զարգացման ինդեքսը, որը կարելի է տեսնել աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Մարդկային կապիտալի զարգացման ինդեքսը[8]

Երկրներ	1990 թ.	2014 թ.
Ռուսաստան	0.821	0.817
Բելառուս	0.795	0.826
Մոլդովա	0.735	0.720
Ուկրաինա	-	0.796
Ադրբեջան	-	0.787
Հայաստան	0.731	0.798
Վրաստան	-	0.778
Ղազախստան	0.778	0.804
Ղրղզստան	-	0.710
Տաջիկստան	-	0.688
Թուրքմենստան	-	0.739
Ուզբեկստան	-	0.710
Լատվիա	0.803	0.866
Լիտվա	0.828	0.870
Էստոնիա	0.817	0.883

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ հետխորհրդային երկրներում մարդկային զարգացման ինդեքսով ամենաբարձր ցուցանիշներն ունեն Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը և Մերձբալթյան երկրները: Ամենացածր ցուցանիշներն ունեն Ղրղզստան, Ուզբեկստանը, Մոլդովան, Տաջիկստանը: Հայաստանը 0.798 ցուցանիշով զբաղեցնում է միջին դիրք և առաջ է Ադրբեջանից (0.795) և Վրաստանից

[7] Տե՛ս **Булатов А. С.** Национальная экономика. М., 2015, էջ 136:
[8] Տե՛ս նույն տեղը, էջ 138:

(0.778), որը հիմնականում պայմանավորված է կրթության բարձր որակով: Կյանքի միջին տևողությունը 73.5 տարի է, իսկ բնակչության մեկ շնչի ՀՆԱ-ն՝ մոտ 3700 ԱՄՆ դոլար:

Վերը նշված ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում դեռևս առկա են սոցիալական չլուծված խնդիրներ, որոնք պահանջում են ճշգրիտ և արդարացի լուծումներ: Այս բոլորը նշանակում է, որ առանց երկրի համալիր արդիականացման անհնար է կատարել էական առաջընթաց և Հայաստանը դարձնել զարգացած երկիր: Տնտեսության զարգացումը խթանելու համար անհրաժեշտ է քաղաքական, սոցիալական և էթիկական (ամենից առաջ կոռուպցիայի դեմ պայքարի միջոցով) արդիականացում:

Առաջին հերթին անհրաժեշտ է արդիականացնել սոցիալական հատվածը, կրճատել աղքատության մակարդակը, ինչպես նաև եկամուտների բաշխման (չափից ավելի) անհավասարությունը, նվազագույն աշխատավարձի համապատասխան երաշխիքներ տալ, արտագաղթը, գործազրկությունը կրճատել և լրիվ զբաղվածություն ապահովել, աշխատավարձը ինդեքսավորել և վերջապես՝ սոցիալական ապահովության քաղաքականությունն ավելի ակտիվ կիրառել:

Բանալի բառեր – *սոցիալական վերափոխումներ, հասարակական ամբողջական արդյունք, ճգնաժամ, աղքատություն, Ջինի ինդեքս, կենսամակարդակ, բևեռացում, դեցիլ, օլիգոպոլիա*

ВОЛОДЯ ОВСЕПЯН – ***Социальные проблемы рыночных трансформаций***. – В статье рассматриваются социальные проблемы, возникающие при переходе к рыночной экономике. Важное место занимает анализ неравенства в распределении доходов. Рассмотрены проблемы социальной защиты и показатели человеческого развития. Даются прогнозы на будущее и выносится ряд рекомендаций.

Ключевые слова: *социальные преобразования, валовый общественный продукт, кризис, бедность, индекс Джини, уровень жизни, поляризация, олигополия*

VOLODYA HOVSEPYAN – ***Social Issues of Market Transformations***. – The article deals with the social problems of transition to a market economy. The importance is given to the analysis of income inequality, social protection and human development indicators. In this regard, predictions and recommendations are made.

Key words: *Social transformations, Gross National Product, Social Security, System on National Accounts, Inflation, Differentiation, Gini index , Lorenz curve, Polarization, Consumer basket*

ОСНОВНЫЕ ЧЕРТЫ СОВРЕМЕННОГО ТЕХНОЛОГИЧЕСКОГО РАЗВИТИЯ

ЮЛИЯ ПОЛЯКОВА

Техноглобализм возник и вступил в фазу своего развития в 80-е годы XX в. на новом этапе научно-технической революции, которая характеризуется как постиндустриальная. В это время начали активно использоваться информационные технологии, “интеллектуальные” компьютеры, постепенно сформировалась электронная автоматизация и роботизация всех отраслей экономики и сфер общественной жизни.

Большинство ученых считают, что техноглобализм в целом означает процесс глобализации, который распространяется на сферу инновационных технологий и научно-исследовательских и опытно-конструкторских работ. Этот термин употребляют и в узком смысле, когда производство, передача и распространение технологий становятся интернациональными по своей сути и масштабам.

Вместе с тем техноглобализм отражает цикличность изменения технологических укладов как в территориальном, так и во временн***о***м измерениях. Имеется в виду, что новые производственно-технические системы, разработанные ведущими странами мира, попадают на периферию мирового хозяйства и могут использоваться в экономически отсталых странах.

На современном этапе именно инновации играют решающую роль в формировании глобальных циклов экономического развития, поскольку благодаря им происходят радикальные преобразования экономических и социальных систем. Также инновации определяют темпы и масштабы экономических изменений, являются ключевым фактором конкурентоспособности национальных экономик в глобальной среде.

В экономике выделяют следующую взаимосвязь: эпохальные инновации – базисные инновации – улучшающие инновации – псевдоинновации. Таким образом, инновационное развитие значительных социально-экономических систем имеет волнообразную природу. Последнее означает исчерпание возможностей инноваций на данной ветке социально-экономического и научно-технического развития и необходимость перехода на новый уровень. Волны и циклы инноваций совпадают с волнами и циклами экономического роста и общественного развития. Появление базисных инноваций и создание технологического сдвига будет иметь место, когда

экономическое развитие достигнет дна цикла, а переход к оживлению возможен только за счет качественных изменений и появления новых движущих сил. Согласно Й. Шумпетеру волнообразные инновационно-экономические колебания всегда будут иметь главный тренд, определяющий особенности развития макроэкономической системы и зависимость от особенностей микроэкономических систем[1].

Также длинные волны, как правило, генерируются экономиками ведущих стран мира – владельцами эпохальных научно-технических достижений, определяющих волнообразный рост. Именно техноглобализм способствует международному обмену технологий, когда последние передаются другим на коммерческой основе.

Следует отметить, что это существенно расширяет возможности технологического развития стран и стимулирует их разрабатывать и реализовывать соответствующие стратегии, позволяет приобщиться к мировым научно-техническим достижениям и учитывать структурно-технологические сдвиги. Например, стратегия переноса предусматривает использование зарубежного научно-технического потенциала и нововведений в собственной экономике, которая была успешно применена Японией. Эта стратегия предусматривала смену приоритетов в соответствии с технологическими вызовами. Сначала целью ставилось повышение качества продукции, затем – снижение трудоемкости и затрат энергии и сырья и наконец – достижение технологической независимости.

Также хорошо известна стратегия заимствования, которая предусматривает освоение производства новой продукции благодаря дешевой рабочей силе и собственному научно-техническому потенциалу с перспективой последовательного увеличения отечественного инженерно-технического обеспечения производства и научно-исследовательских и опытно-конструкторских работ. В свою очередь стратегия наращивания – это постоянное создание новой продукции и новых технологий на базе собственного научно-технического потенциала, привлечение иностранных ученых и специалистов, интегрирование фундаментальной и прикладной науки.

Следовательно, ускорение и повышение эффективности научно-технического прогресса стали активным фактором экономического развития. На современном этапе их роль непрерывно растет. Если в первой половине XX в. на долю всех факторов производства – капитала, труда и технического прогресса – приходилось примерно по трети общего экономического роста, то в дальнейшем роль научно-технического прогресса все от-

---

[1] См. **Дудин М. Н., Лясников Н. В., Сафин Ф. М., Егорушкин П. А.** Инновационный форсайт как инструмент конкурентоспособного развития предпринимательских структур. М., 2013.

четливее возрастает. Если в богатых странах в структуре национального богатства удельный вес природного капитала составляет всего 2 %, то в бедных странах – 26 %[2].

Таким образом, в мировом хозяйстве сформировались следующие черты технологического развития[3]:

1. новые технологии разрабатываются преимущественно на стыке нескольких наук, потому что всё большее значение приобретают междисциплинарные исследования;

2. технологическое развитие становится непрерывным, что со временем приводит к качественным трансформациям в обществе и экономике;

3. его ключевым фактором и соответственно основой является результат фундаментальных исследований.

Экономическая и технологическая парадигма в странах мира прошла следующие этапы:

– воспроизводственный период;

– переход к ресурсосберегающей парадигме;

– переход к нестандартизированной продукции.

На протяжении воспроизводственного периода (1955–1961) расходы на исследования и разработки в западноевропейских странах росли ежегодно более чем на 20 %. Был сделан акцент на развитие гражданского сектора экономики, привлечение известных ученых и специалистов, что обусловило рост конкурентоспособности и успех на мировом рынке. Движущей силой прогрессивных изменений стали импортные технологии, направленные на развитие базовых отраслей, выпускавших стандартизированную продукцию.

Переход к ресурсосберегающей технологической парадигме вызвал нефтяной кризис 70-х годов XX века, повлекший за собой коренные системные изменения в национальных экономиках. Ситуация стала импульсом для всесторонней модернизации.

Переход к нестандартизированной продукции связан с группой стран (Южная Корея, Малайзия, Таиланд, Индонезия, Китай и др.), которые освоили производство стандартизированной продукции, пользуясь своим преимуществом в дешевой рабочей силе. Традиционные отрасли, такие как сталелитейная и судостроительная, характеризовались острой конкуренцией, путем продвижения новых товаров осваивались новые рыночные ниши. Сокращался жизненный цикл товара, производство постоянно обновлялось, повышалась гибкость и мобильность компаний.

Поэтому сложились следующие тенденции:

---

[2] См. **Сумин А., Харламова В., Абрамова А.** Международная торговля объектами интеллектуальной собственности. М., 2010.

[3] См. **Иванов В.** Инновационная парадигма. М., 2011.

– освоение инновационных технологий в промышленности, ключевых для большинства развитых стран;

– интеллектуальный продукт – юридическая и экономическая первооснова производственных инноваций;

– товар есть результат интеллектуальной деятельности;

– охрана промышленной собственности – обязательный атрибут развитых стран;

– производственно-технологический сектор мировой экономики, особенно сфера высоких технологий, глобальны по своему содержанию;

– наиболее актуальны научные исследования в сфере инновационных технологий и защиты окружающей среды.

Лидерами техноглобализма являются США, Япония и Германия, где эффективно совмещаются научно-технологическое и экономическое развитие. Об этом свидетельствует, в частности, внутренний спрос на высокотехнологичную продукцию. США опережают по этому показателю не только каждое отдельно взятое государство, но даже четыре ведущие европейские страны (Великобританию, Германию, Францию и Италию), вместе взятые. На втором месте по внутреннему потреблению высокотехнологичной продукции находится Япония. Наблюдаются также заметные сдвиги на китайском внутреннем рынке.

Развитые страны сосредоточивают внимание на приоритетных направлениях технологий, ориентированных на улучшение общественных благ. Это, прежде всего, здравоохранение (био-, нанотехнологии, фармацевтика), а также информационные коммуникации, влияющие практически на все сферы общественной жизни.

Топ-технологии, своеобразный ответ на потребности социально-экономического развития, находят практическое применение при решении глобальных мировых проблем. Журнал Technology Review Массачусетского технологического университета представил ежегодный рейтинг топ-технологий, в том числе интеллектуальное программное обеспечение, определение генома человека, новый тип памяти Racetrack memory, биологические машины, диагностика по остаткам на бумаге, технология производства батарей на жидких кристаллах, реактор блуждающих волн, антиспам-технология HashCache и программное обеспечение создания сетей[4].

В стратегических планах научно-технологического и инновационного развития передовых стран (США, ЕС, Япония, Австралия и др.) показаны именно вышеназванные приоритеты.

Для формирования инновационного профиля страны определяющими являются две группы факторов: базисные (расходы на НИОКР, наличие

---

[4] См. **Глушко О.** Технологічний розвиток економіки України з позицій світових тенденцій // «Проблеми науки», 2010, № 1, с. 2-9.

квалифицированного научно-исследовательского персонала, развитость инновационной инфраструктуры) и институциональные (государственная политика стимулирования инновационной активности, законодательство в сфере защиты интеллектуальной собственности). Качественный уровень институтов и эффективность их взаимодействия определяют различия в реализации инновационного потенциала стран.

Так, Германия специализируется на инновациях в технически сложных отраслях (точное машиностроение, композитные материалы, строительство), которые требуют уникальных инженерных знаний и решений; американские компании получают значительное количество патентов в таких отраслях, как биотехнологии, телекоммуникации и информационные технологии. Исследователи отмечают, что в долгосрочной перспективе высокотехнологичные кластеры инновационных отраслей останутся достаточно стабильными, процессы глобализации и либерализации не изменят инновационный профиль передовых стран.

Анализируя способность той или иной национальной инновационной системы к развитию технологий, учитывают такие факторы, как государственная поддержка, законодательство в интеллектуальной сфере, уровень развития человеческого капитала и способность общества адаптироваться к современным условиям.

Опыт стран-лидеров и стран, которые динамично развиваются, показывает, что варианты технологического развития могут быть разными – от специализации на нескольких макротехнологиях до освоения широкого спектра технологичных разработок. Для успешного прорыва в технологическом развитии необходима целенаправленная государственная научно-технологическая и инновационная политика, эффективное распределение основных ресурсов, правильное определение приоритетов, понимание конкурентных возможностей и разумная специализация в международном разделении труда.

По мнению иностранных специалистов, долгосрочный инновационный тренд в ближайшие 10–15 лет определят ранее достигнутые эффекты мирового и национального развития. Среди основных направлений будут информатизация, глобалистика, интеграция и технологизация. Тренд также будет определяться смещением приоритетов; речь идет о переходе на социально ориентированное управление устойчивым развитием предпринимательских структур и развитие способов, форм и методов сотрудничества государства и бизнеса в инновационно значимых аспектах. Этот долгосрочный тренд рассматривается в сочетании с отраслевыми инновационными тенденциями. Например, для топливно-энергетического сектора – поиск решений в области альтернативной энергетики, для промышленно-производственной сферы – повышение эффективности процессов и

снижение экологических рисков, для сервисной и торговой сферы – расширение on-line услуг, изменение формата деятельности[5].

Как отмечают ученые, любое исследование будущего проводится в базовом противоречии двух категорий: устойчивое развитие – кризисное развитие. Последнее связывают с несколькими сферами общественной деятельности. Одна из них – технологическая среда (прорывные научно-исследовательские работы и эффективные опытно-конструкторские разработки) наряду с природной средой (моделирование климатических условий) и локальной социальной средой (улучшение качества жизни). Перечисленные аспекты будут определять мировые тенденции в научно-технологической и инновационной сферах, роль и место стран на мировом рынке, успешность решения мировым сообществом глобальных проблем.

Ключевые слова: *техноглобализм, инновации, технологический уклад, технологическая стратегия, технологическое развитие, топ-технологии*

ՅՈՒԼԻԱ ՊՈԼՅԱԿՈՎԱ - ***Ժամանակակից տեխնոլոգիական զարգացման հիմնական առանձնահատկությունները*** - Հոդվածը նվիրված է պետությունների տեխնոլոգիական զարգացման ժամանակակից առանձնահատկությունների սահմանմանը տեխնիկական գլոբալացման դարաշրջանում: Քննարկվել են տնտեսական և տեխնիկական հարացույցների փուլերը, հստակեցվել են շուկայի զարգացման գիտական, տեխնիկական և նորարարական արտադրանքի միտումները: Հոդվածում մատնանշված են ուղիներ, թե ինչպես կիրառել տեխնոլոգիական ռազմավարություններ աշխարհի տարբեր պետություններում, ինչպես նաև ցույց է տրված համաշխարհային զարգացման նորարարական երկարաժամկետ միտումը:

Բանալի բառեր – *տեխնիկական գլոբալիզացիա, նորարարություն, տեխնոլոգիական ռեժիմ, տեխնոլոգիական ռազմավարություն, տեխնոլոգիական զարգացում, լավագույն տեխնոլոգիաներ*

JULIA POLIAKOVA – ***Main Features of Modern Technological Development.*** – The article is devoted to the definition of modern characteristics of the technological development of the countries in the era of technological globalization. The stages of the economic and technological paradigm are considered, the trends in the development of the market of scientific, technical and innovative products are identified. The article displays ways of applying technological strategies in different countries of the world and demonstrates an innovative long-term trend of world development.

Key words: *technological globalization, innovation, technologies, technological mode, technological strategy, technological development, top technologies*

[5] См. **Дудин М. Н., Лясников Н. В., Сафин Ф. М., Егорушкин П. А**. Указ. соч.

ФУНКЦИОНАЛЬНОЕ УПРАВЛЕНИЕ МАРКЕТИНГОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТЬЮ ПРЕДПРИЯТИЙ В ИНТЕРНЕТЕ

ИННА БОЙЧУК

Развитие информационных технологий активно влияет на различные сферы бизнеса. Важные изменения происходят в маркетинговой деятельности предприятий в Интернете, что объясняется появлением глобальной информационной маркетинговой системы. Сегодня в сети работают не только специалисты в области компьютерных информационных технологий. Число коммерческих пользователей сети увеличивается наиболее быстрыми темпами. Также постоянно растет количество предприятий, которые для поддержания собственного бизнеса и расширения рынков сбыта разрабатывают современные интернет-стратегии.

Если в начале XX века маркетинг рассматривался как дистрибуция, потом – как управление продажами и, наконец, как управление торговыми марками, то теперь развитие информационных технологий существенно изменяет характер маркетинговой деятельности предприятий. Маркетинг в Интернете остается актуальной проблемой для фирм, решивших заниматься бизнесом в сети или использовать Интернет для коммуникации с потребителями.

Исследованиями маркетинга в Интернете занимаются многие ученые, среди которых Л. Вебер, Т. Кеглер, П. Даулинг, Б. Тейлор, Д. Тестерман, Д. Сигел, Р. Уилсон, Д. Е. Шульц, В. А. Алексунин, В. С. Голик и другие. Тем не менее, до сих пор не разработан ряд аспектов использования сети в маркетинговой деятельности предприятий, не уделяется достаточно внимания управлению интернет-функциями и соответствующими инструментами маркетинга.

Обобщая теоретические материалы, мы рассматриваем интернет-маркетинг как процесс, направленный на удовлетворение потребностей потребителей. Глобальные масштабы вхождения Интернета в разные сферы привели к возникновению новой виртуальной реальности, которая базируется на использовании всемирной сети для сотрудничества и общения, вещания и распространения информации[1]. В числе ее преимуществ – глобализация, информативность, потребительская активность, социальная

[1] См. **Литовченко И.** Генезис и эволюция информационной концепции маркетинга. Киев, 2011.

стойкость, интерактивность, адаптивность, конкурентоспособность и т.д.

Внедрение Интернета в бизнес-процессы изменило маркетинговую деятельность предприятий, которая, как известно, базируется на следующих функциях:

1. анализ (изучение рынка, потребителей, конкурентов);

2. управление (стратегическое маркетинговое планирование, организация маркетинговых процессов);

3. организация сбыта (организация маркетинговых каналов, формирование спроса);

4. организация производства (разработка требований к новым товарам на основе данных о рыночной конъюнктуре и управление качеством);

5. коммуникация (реклама, паблик рилейшнз, стимулирование сбыта).

Аналитическая функция предполагает маркетинговые исследования. Интернет как средство и среда коммуникации может быть эффективно использован для их проведения, причем как первичных, так и вторичных. Одним из основных методов маркетинговых исследований в сети являются опросы, проводимые путем размещения анкеты на сайтах с целевой аудиторией, ее рассылки по электронной почте и заполнения анкеты в телеконференциях. Отличительные особенности сетевого опроса – невысокая стоимость, автоматизация его процесса и анализа результатов, а также точная фокусировка опроса на целевой аудитории[2].

Возможности опроса через Интернет и электронную почту ограничиваются тем, что нельзя обеспечить репрезентативность выборки относительно всей генеральной совокупности в большинстве сфер бизнеса и определить круг лиц, которые действительно отвечали на вопросы анкеты. Кроме того, на сайте предприятия можно на основе статистических данных проследить за поведением его посетителей. Анализ статистики посещений – достаточно эффективный инструмент маркетинга. В отличие от опроса, наблюдение позволяет собрать информацию, не привлекая посетителей к активным действиям. Более полную информацию о посетителях сайта и специфике их потребностей вообще можно узнать по данным статистики о ключевых словах.

Достижение стратегических целей предприятия во многом зависит от управления и качественного функционирования его организационной структуры. Как известно, эффективность маркетинга существенно зависит от рынка, особенностей продукции, уровня конкурентной борьбы. С точки зрения практики маркетинга его инструменты следует применять индивидуально к каждому продукту, рынку, предприятию, то есть необходимо дифференцировать подход к построению организационной структуры[3].

---

[2] См. **Вебер Л.** Эффективный маркетинг в Интернете. М., 2010.

[3] См. **Карасева В.** Комплекс маркетинга в интернет-бизнесе // «Маркетинг», 2008, №

Новейшие тенденции в построении структур управления маркетингом проявляются в том, что в соответствующем отделе предприятия создается подразделение (например, Интернет-маркетинга и электронной коммерции), использующее возможности сети либо занимающееся интегрированными маркетинговыми коммуникациями – наряду с традиционными средствами информации. При формировании такого подразделения разрабатывается единый коммуникационный бюджет, сбалансированно распределяемый между отдельными средствами коммуникации.

Системы сбыта связаны с построением маркетинговых каналов. Современные методы управления ими базируются на интеграции через партнерство и стратегические союзы. Интеграция рационализирует физические и информационные потоки, реорганизуя распределение, что достигается использованием информационных и телекоммуникационных технологий Интернета и, соответственно, технологии электронного бизнеса[4].

В условиях современного рынка новейшие информационные технологии и всемирная сеть позволяют уменьшить расходы на маркетинг. При этом управление и обмен информацией очень важны для обеспечения результативности маркетинговых каналов. Интернет дает возможность менять границы рынков (например, благодаря переходу от локальных к международным) и принципы конкуренции, а также предоставляет новые средства для конкурентной борьбы. Развитие информационных технологий изменило управление маркетинговыми каналами. Практика свидетельствует, что чем интенсивней совместное использование электронных данных и разработка современных технологий, тем большую выгоду получает каждый участник канала.

Все больше предприятий выходит на интернет-рынок, чтобы предложить покупателям индивидуальные товары и услуги. Именно на таком уровне фирмы проводят кастомизированный маркетинг. Известно, что кастомизация предполагает изготовление товаров по индивидуальному заказу. С недавних пор адаптировать товары и услуги к индивидуальным потребностям потребителей удавалось только компаниям, которые работали с небольшим количеством покупателей. Теперь с помощью Интернета можно реализовать модель массового изготовления под заказ, что способствует повышению лояльности потребителей к бренду и привлечению новых клиентов[5].

Большинство современных рынков характеризуется повышением значимости информации как со стороны пользователей, так и продавцов. Ин-

---

2 (69), с. 117–124.

[4] См. **Сигел Д.** Шагни в будущее. Стратегия в эпоху электронного бизнеса. М., 2001.

[5] См. **Голик В.** Некоторые аспекты использования интернет-маркетинга // «Маркетинг в России и за рубежом», 2008, № 2, с. 98–105.

форматизация общества растет, и хотя потребителям предоставляется каждый раз все больше информации, предприятия не могут постоянно увеличивать объемы коммуникаций. Поэтому необходимо уделять внимание не только их количественным характеристикам, но и качеству, в первую очередь эффективности.

В современном маркетинговом управлении коммуникациями, как и в интернет-маркетинге предприятий, значительная роль отводится интегрированным маркетинговым коммуникациям. Такова концепция планирования маркетинговых коммуникаций, исходящая из оценки стратегической роли отдельных направлений (например, рекламы, стимулирования сбыта, связей с общественностью и других) и поиска их оптимального сочетания для обеспечения четкости и последовательности действий коммуникативных программ, а также достижения на этой основе максимизации конечных хозяйственных показателей[6].

Кроме того, дальнейшее развитие Интернета изменило современный взгляд на средства рекламы и коммуникации. Сеть как новая коммуникационная среда, отличающаяся от традиционных средств массовой информации, объединила интерактивный характер коммуникации и возможности персонализации. Ведь Интернет – это разнонаправленная коммуникационная модель «многие ко многим», в которой каждый абонент обращается к другим абонентам и имеет возможность обратной связи[7].

Особенность Интернета связана и с активной ролью потребителей (в традиционных средствах массовой информации она пассивна), обусловленной контролем над поиском информации через различные механизмы поиска и пути ведения навигации. Интерактивный характер всемирной сети позволяет повысить эффективность взаимодействия всех участников коммуникации, что положительно влияет на результаты интернет-маркетинга предприятий и обеспечивает перспективы их дальнейшего развития.

Эффективность маркетинга в Интернете определяется управлением следующим.

1. **Поддержка качественных деловых связей**. В условиях развития маркетинга взаимоотношений, потребностей производства в своевременных поставках успешную работу обеспечивает качественное взаимодействие с фактическими и потенциальными покупателями, поставщиками, агентами и дистрибьюторами. Именно Интернет предоставляет различные средства связи предприятий с партнерами. Они включают электронную почту, электронные доски объявлений, которые упорядочены по группам

---

[6] См. **Шульц Д., Танненбаум С., Лаутерборн Р.** Новая парадигма маркетинга. Интегрируемые маркетинговые коммуникации. М., 2004.

[7] См. **Кеглер Т., Даулинг П., Тейлор Б., Тестерман Д.** Реклама и маркетинг в Интернете. М., 2003.

новостей (usenet), почтовые реестры в электронной почте (группы listserv), ретрансляцию беседы (IRC – InternetRelayChat), многопользовательский диалог (MUDS – multi-userdialogservice), видеоконференции, языковую почту, действующую в системе электронной почты (Voice-mail), и т.д.

2. **Изучение рынка**. Покупка или получение исследовательских отчетов о различных рынках – дорогое удовольствие. Для сокращения расходов, а во многих случаях и бесплатно, значительный объем той же самой информации можно получить непосредственно из Интернета. Использование сети для сбора информации – важнейший способ, с помощью которого предприятия могут изучать международные и внутренние рынки. Кроме того, информационный поиск в Интернете обеспечивают программные продукты крупнейших фирм-производителей[8]. Объем важной маркетинговой информации, доступной через Интернет, включает многочисленные ресурсы. Среди них интерактивные газеты и журналы; много стран и отраслей, разные научно-исследовательские отчеты о рынках; списки поставщиков, агентов, дистрибьюторов и правительственных контактов в большинстве стран; агентские соглашения, совместные предприятия и т.д.

3. **Покупка и продажа в Интернете**. Рассматривая сеть как средство для продажи товаров и услуг, необходимо рассматривать два направления проведенных операций – business-to-business (B2B); business-to-consumer (B2C). В первом случае дело имеют с торговлей промышленными товарами и услугами между предприятиями, а также оптовыми продажами, а во втором – с розничной продажей потребительских товаров конечному покупателю[9].

По оценкам специалистов коммерческий потенциал первого направления значительно выше, однако в сфере непосредственных продаж собственной продукции пока более интенсивно развиваются предприятия, которые специализируются на втором направлении ведения операций. Сейчас развиваются различные варианты организации розничных продаж через Интернет, в том числе наиболее популярными стали интернет-магазины и аукционные продажи.

4. **Реклама товаров и услуг в сети**. Интернет предоставляет множество инструментов для воздействия на целевую аудиторию, в том числе размещение рекламы на тематических и общих информационных сайтах, баннерные сети, e-mail-маркетинг, продвижение фирмы с помощью поисковых систем и каталогов, обмен ссылками, рейтинги, партнерские и спонсорские программы. При таком количестве возможностей и при ограни-

---

[8] См. **Уилсон Р.** Планирование стратегии интернет-маркетинга. М., 2003.

[9] См. **Алексунин В., Родигина В.** Электронная коммерция и маркетинг в Интернете. М., 2007.

ченном рекламном бюджете, составляя медиа-план, следует тщательно взвешивать все «за» и «против». При этом можно воспользоваться такими видами интернет-услуг:

– общие и специализированные сайты. Очевидно, что тематические серверы будут удачным выбором для рекламы, предназначенной для определенного сегмента интернет-аудитории. Причем при выборе сайтов стоит учитывать такие факторы, как популярность ресурса, широта его аудитории, тематика и наличие сайтов-конкурентов; вид рекламы, размер текста и рекламных баннеров, место размещения; стоимость, ценовая модель; возможность оперативных изменений; статистика;

– баннерные сети. Любой владелец сайта, подключившись к этой системе, может рекламировать его бесплатно, что происходит следующим образом: фирма размещает на своих страницах чьи-то баннеры, а ее собственные, в свою очередь, демонстрируются на других веб-страницах. Каждый посетитель такой страницы инициирует показ чужого баннера. Сколько будет показано баннеров на странице предприятия, столько же будет показано его собственных на страницах баннерной системы, за исключением тех 10–20 % показов, что забирает себе владелец баннерной сети как комиссионные за услугу;

– поисковые системы и каталоги, в том числе бесплатная регистрация сайта на зарегистрированных в Интернете серверах; фиксированное расположение баннера на главной странице сервера; контекстный показ рекламы предприятия; участие сайта в рейтинге; создание сайта и регистрация места со всеми интерактивными инструментами поиска; услуги специализированных агентств интернет-маркетинга и медиа-баннерных агентств.

5. **Сервис и послепродажное обслуживание**, включая консультирование клиентов по электронной почте, информирование на сайте о новостях и т.д. Средства на обеспечение связи предприятия с покупателями, аналогичные тем, которые характерны для поддержания деловых связей. Поскольку сервисом и послепродажным обслуживанием пользуются не только постоянные партнеры, но и те оптовые и розничные клиенты, которые приобрели продукцию предприятия лишь раз и не собираются устанавливать тесные деловые контакты с производителем, следует выделить работу с ними в самостоятельное направление маркетинговой деятельности. Это создаст ему репутацию фирмы, заботящейся о потребителях.

Все направления реализации маркетинговых функций через Интернет свидетельствуют о том, что анализ функциональных систем управления маркетингом предприятий должен учитывать изменения в информационно-коммуникационных технологиях и средствах, деловые взаимосвязи и ограничения в использования сети. В то же время дальнейшие исследования необходимо ориентировать на развитие проектов, связанных не только

с Интернетом. Именно поэтому любые мероприятия в сети следует рассматривать как часть деловой стратегии предприятия.

Ключевые слова: *информационные технологии, бизнес, Интернет, интернет-маркетинг, маркетинговая деятельность, комплекс маркетинговых функций, стратегии*

ԻՆՆԱ ԲՈՅՉՈՒԿ – *Ձեռնարկությունների համացանցային մարքեթինգային գործունեության գործառական կառավարումը* - Հոդվածում վերլուծվում են համացանցում ձեռնարկությունների մարքեթինգային գործունեության գործառական կառավարման առանձնահատկությունները: Ցանցի հիմնական առավելությունները, հաշվի առնելով փոփոխությունների գնահատումը, նկատվում են համացանցում գործնական գործընթացների ժամանակ: Համացանցային մարքեթինգը համարվում է մի գործընթաց, որը կոչված է բավարարելու սպառողների ցանկությունները ցանցային հնարավորություններով: Մարքեթինգի հիմնական գործառույթների տեսանկյունից դիտարկվել են մարքեթինգային առցանց միջոցների տարբեր տեսակները: Մարքեթինգային գործունեության այս գործառական ոլորտների իրականացումը թույլ է տալիս ավելի արդյունավետ զարգացում և մարքեթինգային ռազմավարության իրականացում:

Բանալի բառեր – *տեղեկատվական տեխնոլոգիա, բիզնես, համացանց, համացանցային մարքեթինգ, մարքեթինգային գործունեություն, մարքեթինգային գործառույթների համալիր, ռազմավարություններ*

INNA BOYCHUK – *Functional Management of Marketing Internet Activities of Enterprises.* – The article analyzes the peculiarities of functional management of marketing activity of the enterprises on the Internet. The basic advantages of the network are taking into account the assessment of changes, taking place in the business processes on the Internet. Internet marketing is considered as a process to meet the needs of consumers with network capabilities. In terms of the basic functions of marketing different aspects of marketing tools online are considered. The implementation of these functional areas of marketing activity allows more effective development and implementation of the marketing strategy.

Key words: *Information technology, business, Internet, internet marketing, marketing activities, function's complex of marketing, strategies*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՀՀ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

ՎԱՐԴՈՒՀԻ ԳՅՈԶԱԼՅԱՆ

«Սոցիալական պետություն» եզրույթն առաջին անգամ օգտագործել է 1850 թ. Լորենց ֆոն Շտայնը[1], ով կարևորում էր պետության հայրիշխանական դերի ստանձնումը հասարակության անխտիր բոլոր անդամների նկատմամբ՝ անկախ նրանց սոցիալական պատկանելությունից:

Սոցիալական պետության բովանդակային ընկալումը ցայսօր անցել է զարգացման մի շարք փուլեր, ընդ որում՝ ինչպես սոցիալական ոլորտում պետության դերի ու գործառույթների ավելացման, այնպես էլ դրա սոցիալական պարտավորությունների նվազեցման առումով: Այդուամենայնիվ մասնագիտական գրականության մեջ սոցիալական պետությանն առնչվող բնորոշումները այժմ էլ միարժեք չեն:

Օրինակ՝ Ն. Ա. Վոլգինը սոցիալական պետություն է համարում այն պետությունը, որն իր քաղաքականության հիմնական առաջնահերթություն է հայտարարում սոցիալական խնդիրները[2]: Սակայն պետք է նշել, որ միայն սոցիալական խնդիրները որպես առաջնահերթություն հռչակելը բավարար չէ սոցիալական պետության լիարժեք սահմանման համար, եթե բացակայում են այդ սոցիալական խնդիրների լուծման համապատասխան իրավական ու ինստիտուցիոնալ հենքը, հստակ մշակված ռազմավարությունն ու միջոցները, ինչպես նաև դրանց կանխարգելման հայեցակարգային հիմքերը:

Ըստ Ե. Ի. Խոլոստովայի՝ սոցիալական պետությունը այնպիսի պետություն է, որն իրականացնում է քաղաքացիների բարեկեցության ապահովման և զարգացման քաղաքականություն[3]: Այս սահմանման համաձայն՝ սոցիալական պետության գլխավոր խնդիրն ի վերջո հանգում է հասարակության բարեկեցության բարձրացմանը, սակայն այստեղ ևս սահմանումը շրջանցում է միջոցի՝ համապատասխան մեխանիզմների մատնանշումը:

Արևմտյան, հատկապես անգլալեզու աղբյուրներում «սոցիալական պետություն» հասկացությունը հաճախ նույնացվում է համընդհա-

---

[1] Տե՛ս **Бирюков С.** Классик государственного социализма // www.apn.ru/publications/article17749.htm

[2] Տե՛ս **Волгин Н. А., Гриценко Н. Н.** Социальное государство: учебник. М., 2003, էջ 47:

[3] Տե՛ս **Холостова Е. И.** Социальная политика: учебное пособие. М., 2000, էջ 244:

նուր բարեկեցության պետությանը (Welfare State), որը կառավարության որդեգրած հայեցակարգ է, որի շրջանակներում պետությանն է վերապահվում իր քաղաքացիների պաշտպանության ու սոցիալ-տնտեսական բարեկեցության խթանման առանցքային դերը՝ հիմնված հնարավորությունների հավասարության, եկամուտների վերաբաշխման և բարեկեցիկ կյանքի նվազագույն պայմաններն ինքնուրույն ապահովել անկարող անձանց պետական աջակցության սկզբունքների վրա[4]:

Թ. Հ. Մարշալը դեռևս անցյալ դարի 50-ականներին համընդհանուր բարեկեցության պետությունը բնորոշել է որպես ժողովրդավարության, բարեկեցության և կապիտալիզմի առանձնահատուկ համակցություն[5]: Նկատենք, որ կապիտալիզմի զարգացման տրամաբանությունը անգամ ժողովրդավարական արժեքների դրսևորման պայմաններում, առանց պետության ակտիվ դերակատարման հնարավորություն չէր ընձեռի ապահովելու բարեկեցություն իրականացնող ընդունելի մակարդակ բոլոր քաղաքացիների համար: Հետևաբար այստեղ ևս ընդգծվում է պետության՝ որպես սոցիալական քաղաքականության առանցքային սուբյեկտի դերը:

Նշենք, որ, ի տարբերություն անգլալեզու գրականության, գերմանական աղբյուրներում հստակ տարանջատվում են «սոցիալական պետություն» և «համընդհանուր բարեկեցության պետություն» հասկացությունները: Ըստ գերմանացի մասնագետների՝ սոցիալական պետության հիմնական գործառույթները պետք է բավարարվեն միայն սեփական բարեկեցության ապահովման սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց ցուցաբերված սոցիալական աջակցությամբ, մինչդեռ համընդհանուր բարեկեցության պետության դեպքում կառավարությունը հանձն է առնում բոլոր քաղաքացիների սոցիալական, նյութական և մշակութային ընդունելի բարեկեցության երաշխավորի դերը, ինչը, ենթադրելով սոցիալական ոլորտում պետական ահռելի ծախսեր, վերջին հաշվով զսպում է տնտեսական զարգացման հնարավորությունները[6]: Համաշխարհային տնտեսությունում նման պատկեր դիտվեց անցյալ դարի վերջին, ինչը բնութագրվեց որպես համընդհանուր բարեկեցության պետության ճգնաժամի շրջան:

Կարծում ենք՝ առավել համակողմանի է Կամենեցկու և Պատրիկենի սահմանումը, որտեղ «սոցիալական պետությունը» բնորոշվում է որպես հասարակության կազմակերպման ձև, որն առաջին հերթին ապահովում է արդյունավետ տնտեսական զարգացման համար համապատասխան իրավական ու օրենսդրական հենք՝ ի նպաստ հասարակության հարաճուն պահանջմունքների առավելագույն բավարարման, երկրորդ՝

---

[4] Տե՛ս «Welfare state», Britannica Online Encyclopedia, www.britannica.com/topic/welfare-state

[5] Տե՛ս **Marshall T. H.,** Citizenship and Social Class: And other Esseys. Cambridge [Eng.: University Press, 1950], Print:

[6] Տե՛ս **Hinske N.,** Kants Warnung vor dem Wohlfahrtsstaat, Die neue Ordnung, Jahrgang 58, № 6, Dezember 2004:

ի վիճակի է հասնելու քաղաքացու իրավունքների ու պարտավորությունների և նրա նյութական վարձատրության միջև առավելագույն համապատասխանության, այլ կերպ ասած՝ ապահովել հնարավորինս բարենպաստ սոցիալական կլիմա[7]:

Վերոնշյալ սահմանումը հստակ ամրագրում է սոցիալական պետության կայացման անհնարինությունը առանց համապատասխան օրենսդրահիրավական հենքի, ինչպես նաև, որ հատկապես կարևորում ենք, ընդգծում է տնտեսական գործոնի կարևորությունը սոցիալական ոլորտի զարգացման մեջ:

Սա առաջին հայացքից կարող է հակասական թվալ, քանի որ տնտեսագիտության մեջ հայտնի սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության սկզբունքները հակասում են իրար, մանավանդ որ սոցիալական պետության տրամաբանությունից միարժեքորեն բխում է սոցիալական արդարության առաջնայնությունը:

Սակայն զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում իրականացվող սոցիալական քաղաքականության ու վերափոխումների ներկա փուլը, աչքի է ընկնում սոցիալ-տնտեսական օբյեկտիվ գործոնների ազդեցությամբ պայմանավորված մի շարք առանձնահատկություններով, որոնք բնութագրվում են մի կողմից՝ լիբերալ գաղափարների արմատացմամբ, մյուս կողմից՝ պետության սոցիալական գործառույթների ընդլայնմամբ: Ձևավորվում է սոցիալական պետության վերաբերյալ բոլորովին նոր պատկերացում. դա մի յուրատեսակ մեխանիզմ է, որի գերխնդիրն է շուկայի հիմնահարցերի ու սոցիալական նպատակների միջև հակասության չեզոքացումը: Ակնհայտ է, որ հիմնական տնտեսական ցուցանիշների շարունակական աճը կհանգեցնի սոցիալական ոլորտին ուղղվող միջոցների աճի, իսկ բարենպաստ սոցիալական կլիմայի առկայությունը իր հերթին տնտեսական ակտիվության խթանման ու ներդրումային միջավայրի բարելավման կարևորագույն նախապայման է: Հետևաբար ժամանակակից պայմաններում առաջատար տնտեսությունների սոցիալական քաղաքականության վերջնական նպատակը բարձր տնտեսական ցուցանիշների ապահովումն է նաև ի հաշիվ սոցիալական գործոնների, և սոցիալական ռիսկերից ապահովվածության բարձր մակարդակի հաստատումն է ի հաշիվ արդյունավետ գործող տնտեսության:

Մասնագետներն արդեն ահազանգում են, որ անգամ շուկայական սոցիալիզմի առաջատար երկրները կենսամակարդակի օրըստօրե բարձրացող պահանջների պայմաններում չեն կարող խորացնել իրենց հաջողված փորձը՝ առանց շուկայի բարձր ճկունության ու դինամիկ զարգացման խթանման[8]:

---

[7] Տե՛ս **Каменецкий В. А, Патрикеев В. П.** Лекции по экономике. Проблемы становления социального государства. М., 2001, էջ 314:

[8] Տե՛ս **Kenworthy L.,** Social Democratic America. Oxford University Press, 2014, էջ 9:

Ժամանակակից տնտեսություններում, ըստ տեսաբանների, պետք է երկրորդ պլան մղվի ինստիտուցիոնալ վերափոխումներին չափից ավելի մեծ ուշադրությունը, և կառավարությունները պետք է սևեռվեն սոցիալական այնպիսի խնդիրների վրա, ինչպիսիք են անհավասարությունը, աղքատության մակարդակը և սոցիալական այլ ռիսկերը չեզոքացնելը[9]:

Հաշվի առնելով վերը նշված մոտեցումները՝ կարելի է առանձնացնել սոցիալական պետության հետևյալ հիմնական գործառույթները.

- բնակչության զբաղվածության և եկամուտների անընդհատ աճի ապահովում,
- հասարակության բոլոր անդամների համար սոցիալական ապահովագրության հասանելիություն,
- կրթական, առողջապահական ծառայությունների և հոգևոր-մշակութային զարգացման հասանելիություն,
- բնակչության սոցիալական պաշտպանություն,
- հասարակության մեջ սոցիալական անհավասարության մեղմում եկամուտների վերաբաշխման արդյունավետ մեխանիզմների կիրառման միջոցով:

Պետք է փաստել, որ նշված գործառույթների իրականացումը, սակայն, հնարավոր չէ արդյունավետ կազմակերպել առանց քաղաքացիական ուժեղ հասարակության, որը պետք է տիրապետի ինքնակազմակերպման ու ինստիտուցիոնալ անհրաժեշտ մեխանիզմների՝ զսպելու ոչ միայն պետության անհարկի միջամտությունը շուկայական և սոցիալական գործընթացներին, այլև թույլ չտալու, որ շուկայի տրամաբանությամբ ընթացող զարգացումները ճնշեն սոցիալական արդարության սկզբունքի դրսևորումը:

Հետևաբար սոցիալական պետության հիմնական բաղկացուցիչներից պետք է դիտել նաև կայացած քաղաքացիական հասարակությունը:

Ընդհանրացնելով սոցիալական պետության վերաբերյալ տեսակետները՝ դրանցից բխող տրամաբանության շրջանակներում փորձենք գնահատել սոցիալական պետություն կառուցելու ճանապարհին ՀՀ հիմնական ձեռքբերումներն ու անելիքները:

Հայաստանի Հանրապետության՝ սոցիալական պետություն լինելու փաստը ամրագրված է երկրի գլխավոր փաստաթղթի առաջին հոդվածում. Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է[10]: Սակայն սոցիալական պետության լիարժեք կայացումը բարդ, ժամանակատար գործըն-

---

[9] Տե՛ս **Ferragina E.,** The Four Worlds of «Welfare Reality»: Social Risks and Outcomes in Europe, Social Policy and Society, vol. 14 (2), 2015, էջ 287-307:

[10] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», ընդունված 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով:

թաց է, որ ենթադրում է սոցիալ-տնտեսական ոլորտի շարունակական բարեփոխումներ:

Սոցիալական պաշտպանության և սոցիալական ծառայություններ տրամադրելու մակարդակը Խորհրդային Միությունում ամենաբարձրերից էր աշխարհում, սակայն այդ մեխանիզմները ոչ կենսունակ դարձան շուկայական տնտեսության անցնելու պայմաններում: Ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը թույլ չէր տալիս թոթափել սոցիալական ոլորտի ֆինանսավորման ծանր բեռը դեռ առաջին քայլերն անող բիզնեսի ուսերից, որն էլ այդ պայմաններում խուսափում էր սոցիալական պատասխանատվությունից:

Տնտեսագետներ Ս. Դավոյանը, Ա. Մարկոսյանը և Հ. Սարգսյանը դեռևս 2003 թ., ամփոփելով անցումային շրջանի առաջին տասնամյակի ՀՀ սոցիալական ոլորտի տեղաշարժերը, շատ հստակ գրել են. «Գերլարված սոցիալական իրավիճակը խորանում է նրանով, որ այս ոլորտում պետության երերուն ձեռնարկումները չեն կարգավորում սոցիալական պաշտպանության և երաշխիքների համակարգը: Պաշտպանված չեն վարձու աշխատողների շահերը, չի ընդունվել աշխատանքային նոր օրենսգիրք, չեն ձևավորվել անկախ արհմիությունները, չեն գործում պարտադիր բժշկական, կենսաթոշակային ապահովագրության մեխանիզմները, առողջապահությունը և կրթությունը հասանելի չեն բնակչության բոլոր շերտերին: Թվարկված և այս ոլորտում բազում այլ հիմնախնդիրների չլուծված լինելը անհնար կդարձնի աղքատության մեղմացման համակարգային կառավարումը, եթե այն չընթանա տնտեսական գործունեության ակտիվացմամբ»[11]:

Ակնհայտ է, որ անցման շրջանի սկզբնական փուլում սոցիալական ոլորտում ՀՀ ցուցանիշները, մեղմ ասած, մտահոգիչ էին, և աղքատության մեղմացման համակարգային կառավարումը դարձել էր թիվ մեկ հրամայականը: Եվ պետք է փաստել, որ սոցիալական ծագման կարևորագույն հիմնախնդրի՝ աղքատության հաղթահարման լուծումը, մասնագետները համարում էին առաջին հերթին տնտեսական գործիքների ու խթանների կիրառումը:

Խորացող աղքատության՝ որպես երկրի տնտեսական, սոցիալական ու մարդկային զարգացումն արգելակող և ազգային անվտանգությանը սպառնացող գործոնի ազդեցության նվազեցման նպատակով կառավարությունը 2003 թ. հաստատեց ՀՀ առաջին ռազմավարական փաստաթուղթը՝ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր» (այսուհետ՝ ԱՀՌԾ):

ԱՀՌԾ շրջանակներում սահմանվեցին սոցիալական պաշտպանության ոլորտային քաղաքականության հիմնական գերակայությունները:

---

[11] **Ս. Դավոյան, Ա. Մարկոսյան, Հ. Սարգսյան,** Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Եր., 2003, էջ 218:

• **Սոցիալական օժանդակության ոլորտում՝** ընտանեկան նպաստների համակարգի կիրառում՝ բնակչության ամենաանապահով խավերի աղքատության մակարդակի կրճատման նպատակով, սոցիալական նպատակային ծառայությունների մատուցում բնակչության առանձին, հատուկ պաշտպանություն պահանջող խմբերին՝ հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, փախստականներին և տեղահանված անձանց:

• **Սոցիալական ապահովագրության ոլորտում՝** կենսաթոշակների աճ՝ ընդհանուր աղքատության գծի գերազանցման հաշվարկով, կենսաթոշակների չափերի տարբերակում՝ ելնելով կենսաթոշակային ներդրման չափից և աշխատանքային ստաժից:

• **Զբաղվածության քաղաքականության ոլորտում՝** գործազրկության ապահովագրման համակարգի արմատական փոփոխություններ և զբաղվածության խթանման ակտիվ քաղաքականության իրականացում:

• **Եկամտային քաղաքականության ոլորտում՝** տարբեր ենթակառուցվածքների աշխատողների աշխատավարձերի առաջանցիկ աճի ապահովում, այն հաշվարկով, որ դրանք առնվազն երկու անգամ գերազանցեն աղքատության ընդհանուր գիծը, ինչպես նաև օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի համապատասխանեցում աղքատության ընդհանուր գծին[12]:

Հետագա տնտեսական զարգացումները փաստեցին, որ ռազմավարությամբ սահմանված, որոշ դեպքերում՝ բավականին հավակնոտ նպատակադրումներն ու դրանց շրջանակներում իրականացված քայլերը միայն մասամբ կարողացան լուծում տալ առաջադրված խնդիրներին: Համաձայն պաշտոնական գնահատականների՝ պատկերը գոհացուցիչ կարելի էր համարել միայն ընտանեկան նպաստների կիրառման ոլորտում, ինչը չի կարելի ասել կենսաթոշակային համակարգի մասին: Այսպես, 2005 թ. տվյալներով՝ ընտանեկան նպաստի շնորհիվ դուրս էր եկել աղքատությունից (հաղթահարել էր աղքատության ընդհանուր շեմը) ընդհանուր նպաստառուների 25.3 տոկոսը, ծայրահեղ աղքատությունից՝ (հաղթահարել էր աղքատության պարենային շեմը) ընդհանուր նպաստառուների 70.9 տոկոսը[13]:

2002-2006 թթ. տնտեսական աճի արդյունքներից թերևս ամենաքիչը օգտվեցին կենսաթոշակառուները. կենսաթոշակների բացարձակ ավելացումները զգալիորեն հետ մնացին հանրապետությունում միջին աշխատավարձի աճի տեմպից: 2006 թ. կենսաթոշակների միջին մեծությունը չէր հասնում նույնիսկ պարենային աղքատության սահմանագծին: Ապահովագրական տարիքային կենսաթոշակը 2006 թ. արդ-

[12] Տե՛ս «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», Եր., 2003, էջ 92:
[13] Տե՛ս «Կայուն զարգացման ծրագիր», Եր., 2008, էջ 216:

յունքներով տարեկան կազմել է միջինը 12059 դրամ կամ ծայրահեղ աղքատության գծի ընդամենը 90 տոկոսը[14]:

Ըստ պաշտոնական տվյալների՝ 2006 թ. դրությամբ աղքատության հետտրանսֆերտային մակարդակը ընդհանուր աղքատների շրջանում կազմել է 26.5 %, իսկ շատ աղքատների (աղքատության պարենային գծից ներքև գտնվողներ) շրջանում՝ 4.1 %, այն դեպքում, երբ առանց տրանսֆերտների նույն ցուցանիշները կկազմեին համապատասխանաբար՝ 32.8 % և 12.1 %[15]:

ԱՀՌԾ շրջանակներում չհաջողվեց լուծել նաև եկամուտների բաշխման տարածքային անհամաչափության խնդիրը, և այս առումով գյուղական բնակչության զբաղվածության և դրանից ստացվող եկամուտների հաշվին բարեկեցության ընդունելի մակարդակի հասանելիությունը շարունակում է կարևորագույն սոցիալ-տնտեսական մարտահրավեր լինել մինչ օրս:

2008-2012 թթ. ՀՀ բոլոր մարզերում տեղի է ունեցել աղքատության մակարդակի աճ. առավել աղքատ են Շիրակի, Լոռու, Կոտայքի մարզերը՝ բնակչության 39-40 %-ը[16]: Աղքատության նման պատկերը, անշուշտ, պայմանավորված է զբաղվածության անհամամասնություններով, քանի որ 2000-ականների տնտեսական աճը չհանգեցրեց զբաղվածության զգալի ընդլայնման և առավելապես պայմանավորված էր արտադրողականության աճով ու տնտեսության կառուցվածքային տեղաշարժերով:

2012 թ. զբաղվածության մարզային և տարածքային կենտրոններում խորհրդատվություն է ստացել 247501 մարդ, աշխատանքի է տեղավորվել 11513 անձ կամ աշխատանք փնտրողների ընդամենը 14.3 %-ը[17]:

Պետք է նշել, որ չնայած պետական միջոցների շարունակական անվանական աճին, կենսաթոշակային ապահովության բնագավառում դրանց չափերը չեն ապահովում բավարար կենսամակարդակ, և կենսաթոշակառուների մի ստվար զանգված շարունակում է ստանալ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից ցածր կենսաթոշակ: Միջին աշխատավարձի և միջին կենսաթոշակի հարաբերակցության բարձր ցուցանիշը, որը ցույց է տալիս աշխատող բնակչության և կենսաթոշակառուների կենսամակարդակների տարբերությունը, անցանկալի սոցիալական հետևանքների դրսևորման հիմք է դառնում:

Կենսաթոշակային համակարգի երկարաժամկետ ֆինանսական կայունության և անձի եկամուտների ու կենսաթոշակի չափի միջև կապի ապահովման հիմնավորմամբ՝ 2014 թ. հունվարի մեկից ներդրվեց

---

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 228:

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 57-58:

[16] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», Եր., 2014, էջ 113-114:

[17] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2014-2016 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր», Եր., 2014, էջ 203:

պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը, որը, սակայն, միանշանակ չընդունվեց հասարակության կողմից. ձևավորվեց քաղաքացիական հուժկու շարժում (ինչը սոցիալական պետության տեսանկյունից, անշուշտ, առաջընթաց պետք է դիտել) և, ի վերջո, ՀՀ ՍԴ համապատասխան որոշումը հիմք ընդունելով՝ կառավարությունը որոշեց պարտադիր կուտակային բաղադրիչը 2014 թ. հունիսից կիրառել միայն շուրջ 200000 պետական ծառայողների համար, իսկ մասնավոր հատվածում՝ այն ներդնել երեք տարվա ընթացքում՝ փուլային տարբերակով[18]:

Ընդհանուր առմամբ, պետության կողմից ՀՀ բնակչությանը տրամադրվող հիմնական սոցիալական երաշխիքները 2009-2013 թթ. դրսևորել են որոշակի դինամիկա (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Բնակչությանը պետության հատկացրած հիմնական սոցիալական երաշխիքները (ՀՀ դրամ)[19]

	2009	2010	2011	2012	2013
Կենսաթոշակի նվազագույն չափը	8000	10500	10500	13000	13000
Աշխատավարձի նվազագույն չափը	30000	30000	32500	32500	45000
Գործազրկության նպաստի միջին չափը	16700	16512	17345	16031	16237
Կենսաթոշակների միջին չափը	24520	27107	27062	29696	29122
Ընդհանուր հիվանդությունների հետևանքով հաշմանդամության նպաստի միջին չափը	21859	24742	24793	27609	27636
Երկու ծնողներին կորցրած երեխաների և մահացած միայնակ մայրերի երեխաների նպաստի միջին չափը	54728	74932	74830	87464	63491
Ծնողներից մեկին կորցրած երեխաների նպաստի միջին չափը	15474	16973	20794	22735	13009

Ելնելով վերը բերված ցուցանիշներից՝ անհրաժեշտ է ուսումնասիրել սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող միջոցների դինամիկան (տե՛ս գծապատկերներ 1 և 2):

Գծապատկեր 1

Սոցիալական պաշտպանության ոլորտի պետական ծախսումները՝ նախորդ տարվա համեմատությամբ (%)[20]



[18] Տե՛ս http://b24.am/economy/49042.html

[19] Աղյուսակը կազմվել է ըստ «ՀՀ վիճակագրական տարեգիրք 2014»-ի տվյալների:

[20] Գծապատկերը կազմվել է ըստ նշված տարիների պետական բյուջեի մասին օրենքներում տեղ գտած տվյալների: Աղբյուրը www.gov.am

2010 թ. սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղված պետական միջոցների նվազումը (նախորդ տարվա համեմատ՝ 3.2 %) պայմանավորված էր ՀՀ տնտեսության վրա խոր ազդեցություն թողած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներով, և պետական ծախսումները զգալիորեն կրճատվեցին գրեթե բոլոր ուղղություններով: Պետք է փաստել, որ, անվանական կրճատմանը զուգահեռ, 2010 թ. սոցիալական ոլորտի պետական ծախսերի՝ պետական բյուջեում տեսակարար կշռի ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ նվազեց 0.6 տոկոսային կետով (տե՛ս գծապատկեր 2), սա այն դեպքում, երբ 2010թ. նվազագույն կենսաթոշակի չափը 8000 դրամից բարձրացվեց 10500 դրամի, ինչպես նաև ավելացվեցին մի շարք ուղղություններով տրամադրվող պետական նպաստների չափերը (տե՛ս աղյուսակ 1):

Այլ կերպ ասած՝ 2010 թ. դիտվել է մի իրավիճակ, երբ սոցիալական ոլորտի ֆինանսավորման և՛ անվանական, և՛ տոկոսային կրճատմանը զուգընթաց բարձրացվել են սոցիալական մի շարք երաշխիքների դրամական չեմերը: Սա բացատրվում է 2010 թ. նախորդ տարվա համեմատությամբ կենսաթոշակառուների և աղքատության ընտանեկան նպաստ ու միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքների թվաքանակի նվազմամբ: Ըստ ԱՎԾ տվյալների՝ 2010 թ. կենսաթոշակառուների ընդհանուր թիվը կազմել է 520.3 հազ. մարդ՝ 2009 թ. 522.8 հազարի փոխարեն, իսկ նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը 2010 թ. կազմել է 108.9 հազ.՝ նախորդ տարվա 123.2 հազարի փոխարեն[21]:

Հաջորդող՝ 2011-2012 թթ. սոցիալական ոլորտի ֆինանսավորումը շարունակաբար աճել է, իսկ 2013 թ. դիտվել է սոցիալական պաշտպանությանն ուղղվող պետական միջոցների նվազում. մասնավորապես՝ ընդհանուր պետական ծախսումներում ունեցած տեսակարար կշռի ցուցանիշը նվազել է շուրջ 3 տոկոսային կետով, այն դեպքում, երբ դիտվել է կենսաթոշակառուների և նպաստառուների թվի աճ[22]:

Իրավիճակը բացատրվում է նրանով, որ ֆինանսավորման ծավալների նվազումը տեղի է ունեցել ի հաշիվ մի շարք ուղղություններով սոցիալական երաշխիքների դրամական չեմերի իջեցման, երկրում աղքատության մակարդակի աճին զուգահեռ պետական մուտքերի սղության պայմաններում:

2014 թ. սոցիալական ոլորտի ֆինանսավորման ցուցանիշների զգալի աճը իրականում պայմանավորված էր պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի գործարկմամբ, երբ պետությունը ևս պար-

[21] Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014», Եր., 2015, էջ 94-96:
[22] Տե՛ս նույն տեղը:

տավորվում է մուտքեր կատարել անհատների կենսաթոշակային հաշիվներին: Բայց քանի որ կուտակային միջոցները ոչ այլ ինչ են, քան հետաձգված եկամուտ, ուստի դրանք չեն ազդում բնակչության ընթացիկ կենսամակարդակի վրա:

Գծապատկեր 2

Սոցիալական պաշտպանության ոլորտի պետական ծախսումների տեսակարար կշիռը ընդհանուր պետական ծախսումներում[23]



Համեմատության համար նշենք, որ ՀՀ-ում, որտեղ մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի ցուցանիշը ըստ գնողունակության պարիտետի 2014 թ. կազմել է 8137.5 միջազգային դոլար[24], սոցիալական ոլորտին ուղղվել է ընդհանուր պետական ծախսումների 31.9 տոկոսը, իսկ Ֆրանսիայում, որտեղ նույն ցուցանիշը կազմում է 36.907 դոլար, ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) տվյալների՝ սոցիալական պաշտպանությանը հատկացվել է նույնքան՝ 31.9 տոկոս, սակայն որպես համախառն ներքին արդյունքի մասնաբաժին[25]:

Ամփոփելով նշենք, որ չնայած ոլորտում դիտվող վերափոխումների ու բարեփոխումների գործընթացին՝ Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի կարող կոչվել կայացած սոցիալական պետություն: Սոցիալական քաղաքականության համատեքստում ՀՀ-ի առջև ծառացած հիմնական մարտահրավերներն են աղքատության ծավալներն ու, որ-

[23] Գծապատկերը կազմվել է ըստ նշված տարիների պետական բյուջեի մասին օրենքներում տեղ գտած տվյալների: Աղբյուրը՝ www.gov.am

[24] Տե՛ս http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.PP.CD?order=wbapi_data_value_2012%20wbapi

[25] Տե՛ս http://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=SOCX_AGG

պես դրա հետևանք՝ արտագաղթի ահազնացող տեմպերը: Լրջագույն այս հիմնախնդիրները, անշուշտ, համալիր լուծում են պահանջում, որը կարող է ապահովվել միայն կայուն տնտեսական աճի ու մրցունակ տնտեսության պայմաններում իրականացվող եկամուտների վերաբաշխման միջոցով:

Բանալի բառեր - *սոցիալական պետություն, աղքատություն, սոցիալական քաղաքականություն, եկամուտների վերաբաշխում*

ВАРДУШ ГЁЗАЛЯН – *Социальное государство: достижения и основные задачи РА.* – В статье рассматриваются основные из современных точек зрения на социальное государство. На этой основе выявляются главные проблемы армянской экономики и общества. Анализируется проводимая в Армении социальная политика, а также вопросы и задачи, требующие решения, такие, как борьба с бедностью, недостатки финансирования и т. д.

Ключевые слова: *социальное государство, бедность, социальная политика, перераспределение даходов*

VARDUSH GYOZALYAN – *Social State: the Achievments and Challenges of RA.* – The article discusses the principal approaches concerning the social state, and on the basis of them, the author tries to identify the main problems of the Armenian economy in the context of building a social state. The article also presents the major achievements of Armenia within the framework of the social policy and the existing problems and tasks, including the ones concerning the financing of the field, decreasing the poverty rate and so on.

Key words: *social state, poverty, social policy, income reassessment*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Մարինե Յարմալոյան** – ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս
   Марине Ярмалоян – преподаватель кафедры социальной работы и социальных технологий ЕГУ
   Marine Yarmaloyan – Lecturer of the Chair of Social Work and Social Technologies, YSU
   Էլ. փոստ՝ marineyarmaloyan@gmail.com
2. **Արտակ Խաչատրյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ
   Артак Хачатрян – кандидат философских наук, доцент, заведующий кафедрой социальной работы и социальных технологий ЕГУ
   Artak Khachatryan – PhD, Associate Professor, Head of the Chair of Social Work and Social Technologies, YSU
   Էլ. փոստ՝ artkhachatryan@yandex.ru
3. **Արմենակ Դարբինյան** – տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ
   Арменак Дарбинян – доктор экономических наук, профессор, член совета Центрального банка РА
   Armenak Darbinyan – Sc. D. in Economy, Professor, Member of the Council of the Central Bank of RA
4. **Դավիթ Բուդաղյան** - ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի ասպիրանտ
   Давид Будагян – аспирант кафедры бизнеса и менеджмента ЕГУ
   David Budaghyan – PhD student of the Chair of Management and Business, YSU
5. **Արա Քառյան** – տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ-ի ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ
   Ара Карян – кандидат экономических наук, доцент кафедры финансов и бухгалтерского учета ЕГУ
   Ara Karyan – PhD, Associate Professor of the Chair of Finances and Accounting, YSU
   Էլ. փոստ՝ ara.v.karyan@gmail.com
6. **Վոլոդյա Հովսեփյան** – տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր
   Володя Овсепян – кандидат экономических наук, професор кафедры экономической теории ЕГУ
   Volodya Hovsepyan – PhD, Professor of the Chair of Theory of Economics, YSU
7. **Յուլիա Պոլյակովա –** տնտեսագիտության թեկնածու, Լվովի առևտրային ակադեմիայի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ
   Юлия Полякова – кандидат экономических наук, доцент кафедры международных экономических отношений Львовской коммерческой академии
   Julia Poliakova – PhD, Associate Professor of the Chair of International Economic Relations, Lviv Academy of Commerce
   Էլ. փոստ՝ polyakova0909@gmail.com

8. **Ինեսա Բոյչուկ** – տնտեսագիտության թեկնածու, Լվովի առևտրային ակադեմիայի մարքեթինգի ամբիոնի դոցենտ
Инна Бойчук – кандидат экономических наук, доцент кафедры маркетинга Львовской коммерческой академии
Inna Boychuk – PhD, Associate Professor of the Chair of Marketing, Lviv Academy of Commerce
Էլ. փոստ՝ inna_boychuk@mail.ru
9. **Վարդուշ Գյոզալյան** – տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ
Вардуш Гёзалян – кандидат экономических наук, ассистент кафедры бизнеса и менеджмента ЕГУ
Vardush Gyozalyan – PhD, Assistant Professor of the Chair of Management and Business, YSU
Էլ. փոստ՝ v-hayastan@mail.ru

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ❋ СОДЕРЖАНИЕ ❋ CONTENTS

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ
СОЦИОЛОГИЯ
SOCIOLOGY

Մարինե Յարմալոյան **–** Բնակչության սոցիալական պաշտպանվածությունը հետխորհրդային Հայաստանում..... 3

Марине Ярмалоян – Социальная защищённость населения постсоветской Армении

Marine Yarmaloyan – Social Protection of the Population of Post-Soviet Armenia

Արտակ Խաչատրյան **–** Սոցիալական աշխատանքը և հայ հասարակության սոցիալական մշակույթը 12

Артак Хачатрян – Социальная работа и социальная культура армянского общества

Artak Khachatryan – Social Work and Social Culture of Armenian Society

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ЭКОНОМИКА
ECONOMICS

Արմենակ Դարբինյան, Դավիթ Բուդաղյան – Ընկերությունների կորպորատիվ սոցիալական պատասխանատվության վարկանիշային գնահատումը 23

Арменак Дарбинян, Давид Будагян – Рейтинговая оценка корпоративной социальной ответственности организаций

Armenak Darbinyan, David Budaghyan – Ranking of Corporate Social Responsibility of Firms

Արա Քարյան – ՀՀ հարկային համակարգի էկոլոգիզացման գործընթացները..... 32

Ара Карян – Процесс экологизация налоговой системы РА

Ara Karyan – Ecologization Processes of the RA Tax System

Վոլոդյա Հովսեփյան – Շուկայական վերափոխումների սոցիալական հիմնահարցերը..... 48

Володя Овсепян – Социальные проблемы рыночных трансформаций

Volodya Hovsepyan – Social Issues of Market Transformations

Յուլիա Պոլյակովա - Ժամանակակից տեխնոլոգիական զարգացման հիմնական առանձնահատկությունները (ռուս.)..... 54

Юлия Полякова – Основные черты современного технологического развития

Julia Poliakova – Main Features of Modern Technological Development (rus.)

Իննա Բոյչուկ – Ձեռնարկությունների համացանցային մարքեթինգային գործունեության գործառական կառավարումը (ռուս.) **60**
Инна Бойчук – Функциональное управление маркетинговой деятельностью предприятий в интернете
Inna Boychuk – Functional Management of Marketing Internet Activities of Enterprises (rus.)

Վարդուշ Գյոզալյան – Սոցիալական պետություն. ՀՀ ձեռքբերումներն ու մարտահրավերները **67**
Вардуш Гёзалян – Социальное государство: достижения и основные задачи РА
Vardush Gyozalyan – Social State: the Achievments and Challenges of RA

Տեղեկություններ հեղինակների մասին **78**
Сведения об авторах
Information about the Authors

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Գրիգորյան
Контрольный корректор Г. Григорян
Proofreader G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝ Մ. Աբգարյան
Компьютерная верстка М. Абгарян
Computer designer M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 25. 02. 2016:
Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: